

2013



ՀԱՆԴԻՍ ՄԵՍԿՈՅԹԻ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ե

ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ

5

Փ Ա Ր Ե Զ

1934

"VEM,"
 REVUE BIMESTRIELLE ARMÉNIENNE
 Directeur : S. VRATZIAN


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

*

ԴՐՈ. Մի հասուած յուշերից	1
ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԱԽԻՇԱՆ - Սայեար նովա	18
ԶՕՐ. Գ. ՂՈՐԴԱՆԵՍՆ - Հայաստանի Հանրապետութիւնը և Պետութիւնները	29
ԱՐԵԱՄ ԽԲՆԴՔԱՐԵԱՆ - Օպղիցիան Հանր. Հայաստանում	42
ՍԱՄՄՈՆ - Հայաստանի Անդրանիկ Դեսպանը Պարսկաստանում ՊՐՈՓ. Զ. ԱԻԱԼՈՎ - Բարումի կողմից աժողովով	61
ԱՆՑԵԱԼՔ - Վահաճ Գարտաշեան - Պրոֆ. Յ. Թ. Գայանեան - Յակոբ Քոչարեան - Վ. Դ. Ղորգանեան - Մանուէլ Միւրախորեան - Սարգս Քամալեան: Արքիշ Մահեր	74
ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ - Բափփու համակը Քր. Միքայելեանի մասին Արամի համակը Վանից - Առ. Շահումեանի համակը Ս. Զաւարեանին	85
ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅՑ - «ԱՅՆՈ՞Չ» թէ «Անուշ», Գրիգոր Եղիկեան, Թէհրան - Մի հին քուցիկ, Վ. Մինախորեան	95
ԴԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ - «Բազմավիճ» - «Հայաստանի Կոչեալ» Hairenik Weekly	97
ԴՐԱԽՈՍԱԿԱՆ - Վիգեն Գլակ (Կ. Սասունի), «Ենթերու հորենորդը», Լեռն Նախրցի	101
ՅԱԻՆԻԱԾ - Վահրամ Սպ. Մանկունի, «Գեղորգ Գ. և իր ժամանակը»	105
	65-80

Gérant: V. Hampartzoumian

Imp. ARTISTIQUE, 42, Rue de la Jonquière, PARIS (17^e)



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ
ՄՇԱԿՈՅՑԹԻ ԵՒ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Խմբագիր՝ Ս. ՎՐԱՅԵԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 3

1934

ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ

ԴՐՈ

ՄԻ ՀԱՏԻԱԾ ՅՈՒՇԵՐԻՑ*

I

ԶԱՐԿ, ԵՐԵՒԱՆ ԶԱՆ.

1905 թ. մայիսին ահարեկւեց Բագուի եւ շրջանի քաղաքական Նակաշիձէն: Բազուի կենտրոնական կոմիտէի վճռով, ևս հեռացայ Թիֆլիս. Բազուում մնալու համարւում էր վտանգաւոր:

Ինձ հետ էր եւ ընկերու՝ Կոօն: Կենտր. կոմիտէն սաստիկ գժգոհ էր նրանից, որովհետեւ նա, ահարեկման վճռական վայրկեանին, նշանակւած տեղում չէր երեւացել: Նոյնիսկ նրան ուզում էին արտաքսել մեր գինուրական շարքերից, բայց իմ միջնորդութեամբ եւ խնդրանքով՝ դիջող եղան եւ թոյլ տախն, որ ինձ հետ միասին մեկնի Թիֆլիս:

Առաջանան ժամը 7-ի մօտերը հասանք Թիֆլիսի կայարանը, որտեղից անմիջապէս զնացինք ներկայանալու Բժ. Յ. Տէր-Դաւթեանին, որ, իրեւ Հ.Յ. Բիւրօի անգամ, որոշելու էր մեր անելիքը:

Դրան զանգի վրա դուրս եկաւ բժշկի մայրը, մի փոքր շւարածու զարմացած զննեց մեղ ու հարցրեց.

*) Այս հասուածով չի սպառւում մեր խոստամք Գրօնի յուշերի իրատարակութեան մասին: Բնդիակառակը, մենք վստահ ենք, թէ պիտի կարդանամք «Վէմ»-ի էջերում տալ Գրօնի ընդարձակ յուշերն ու տեսութիւնները մեր մերձաւոր անցնալի դիպերի եւ երեսյրմերի մասին: ԽՄԲ.

— Ո՞ւմ էք ուզում :

— Բժշկին :

— Էս ժամին բժիշկ կը լինի, յետո՛յ եկէք, կարճ պատասխանեց նա եւ պատրաստում էր զուռը փակել երեսներիս, բայց մենք այնքան էլ հետութեամբ տեղի տւողը չէինք: Առանց մի խօսքի վերցրինք մեր կապոցները եւ մտանք ներս:

— Մայրիկ, մենք նրա հետ գործ ունենք, ասացի ես եւ յանձնեցի Բագուրի կենտր. Կոմիտէի ծածկադիր նամակը բժշկին:

Մայրիկը մեղմացաւ: Կարգազրեց, որ մեր իրերը դնենք նախասենեակում եւ մտնենք բժշկի ընդունաբանը:

Այստեղ սպասեցինք ժամը ութից-ինը: Անշուշտ մայրիկը չէր կամեցել խանգարել որդու քունը եւ չէր զարթեցրել: Ո՞վ գիտէ՝ զիշերը ո՞ր ժամին էր վերադարձել տուն կուսակցական ժողովից:

Ժամը ինը կը լինէր, երբ մայրիկը նորից մտաւ ներս եւ մեզ հրաւիրեց սեղանատուն: Քիչ յետոյ եկաւ եւ բժշկը: Այստեղ առաջին անգամ ծանօթացակ մեր սիրելի բժշկի հետ, որի անուն մինչեւ այդ շատ էի լսել:

Նախաճաշից յետոյ, բժշկը ուզեց մեղ մի քանի կարճ հարցումներ եւ ուզեց իմանալ, թէ ինչի՞ կարիք ունենք: Բագուրի կենտր. Կոմիտէն գրել էր նրան, որ մեզ ցոյց տայ բարոյական եւ նիւթական ամէն աջակցութիւն, բայց առանց դրան էլ նա մեզանից ոչինչ չէր խնայի: Կոն յայտնեց, թէ ինքը ցանկանում է մնալ Թիֆլիսում, ուր ապրում էր իր մայրը, իսկ ես ուզում էի զնալ Երեւան: Բժիշկը երկուսի էլ ուշադրութեամբ լսելուց յետոյ, դարձաւ ինձ.

— Լա՛ւ մտածիր, գուցէ քեզ համար էլ այստեղ մնալը աւելի լաւ է: Վասահ եղիր, որ պէտք եղած ամէն աջակցութիւն կը ստանաս:

— Ո՛չ, առարկեցի ես, անպատճառ ուզում եմ զնալ Երեւան:

Ինձ Երեւանը գրաւում էր երկու պատճառով. նախ՝ այստեղ էլ արդէն սկսել էին Հայ-թրքական ընդհարումները. երկրորդ՝ Երեւանում էին իմ երկու ամենամտերիմ ընկերները՝ Դաշնակցական Խէջօն եւ Փառակցից Մկրտիչը, որոնց ձեռքի տակ ես կարող էի օդառակար լինել Երեւանի շրջանի ինքնապաշտպանութեան գործին:

Բժիշկը ուշադրութեամբ լսեց իմ պատճառաբանութիւնները:

— Լա՛ւ, ասաց նա եւ անմիջապէս մի տոմս գրեց: Ա՛ռ այս

տոմսը եւ գնա' ընկ. Մանասի^{*}) մօտ, նա ամէն բան կը կարդադիէ: Յետոյ, մի պահ կանգ առաւ, մտածեց ու նորից դարձաւ իւձ:

— Իսկ ճանապարհածախս ունի^Թս:

Այս', ճանապարհածախս Բագւում ստացել էի բաւարար չափով:

Ընկերս գնաց մօր մօտ, իսկ ես բժշկի զրած տոմսը ձեռքին՝ գնացի վնասելու ընկ. Մանասին: Նրան էլ առաջին անգամը պիտի հանդիպէի: Բժշկի տւած ցուցունքներով հեշտութեամբ դտայ եւ յանձնեցի տոմսը: Կարճ հարցուփորձից յետոյ, նա էլ բանաւոր համարեց ցանկութիւնս եւ տաց:

— Կատարելապէս հասկանում, եմ քեզ: Լաւ ես անում, որ ուզում ես զնալ Երեւան: Իսկ ի՞նչ զէնք ունես մօտդ:

— Մի պարաբելում ատրճանակ, պատասխանեցի ես:

Մանասն անմիջապէս ինձ կառք նստեցրեց եւ տարսւ Վելիսմինովկայս փողոցի վրա գտնուող մի համեստ ճաշարան: Ներս մտնելուն պէս իր մօտը կանչեց արտաքինով խիստ պարզ հագնած մի մարդ եւ ականջին ինչ որ բաներ փափսաց: Ճաշարանից վերադարձանք Մանասի բնակարանը, իսկ քիչ անցած այստեղ եկաւ նաև վերոլիշեալ մարդը եւ Մանասին յանձնեց մի փոքրիկ արկդ: Մանասը բաց արաւ եւ միջից հանեց մի բոլորովին նոր մառզէր ատըրճանակ: Ատրճանակը յանձնեց ինձ եւ տաց.

— Սա Թիֆլիսի կենտրոնական Կոփաէի կողմից նոէր եմ տալիս քեզ: Մօտիկ պարաբելումը կը յանձնես Երեւանի զինական մարմնին:

Կարող էք Երեւակայել, թէ ի՞նչ ուրախութիւն պատճառեց ինձ Մանասի նէկը, մանաւանդ այլպիսի ջերմ զգացմունքով տրւած:

Թիֆլիսում երկար չմնացի. անմիջապէս մեկնեցի Երեւան: Արդէն քաղաքում եւ ամբողջ նահանգում մթնոլորտը լարւած էր: Ճանապարհները գարձել էին վտանգաւոր: Թուրքերն ու Հայերը իրարու դէմ էին կանգնած, իրրեւ երկու թշնամի բանակներ: Մանաւանդ, յարաբերութիւնները սրւել էին Նախիջեւանի ընդհարումներից յետոյ:

Դաշնակցական Խէջօն ինձ ընդունեց արտակարդ ուրախութեամբ

*) Սարգիս Մանասին, դաշնակցական յայտնի գործիչ. հայ-թրքական ընդհարումների ժամանակ նրա ձեռքին էր կենտրոնացած գինքի գործը. Հայաստանի Հանրապետութեան օրով, երբին գործոց նախարարի օգնական: 1920 թվին սպանեց բոլշևիկների ձեռքով, Բագու գերւելուց յետոյ:

ու անմիջապէս ներկայացրեց Գալուստ Ալոյեանին*) եւ վերջինիս գիտութեամբ ու համաձայնութեամբ ինձ առաւ իր տրամադրութեան տակ՝ նոյն օրն իսկ նշանակելով թոռոցիկ խմբի խմբապետ։ Այդ խումբը բաղկացած էր հօթը հոգուց։ Ես եղայ ութերորդը։ Մեր մշտական հաւաքատեղին Զոկի ծանօթ կաթնատան յետեւի սենեակն էր, ոստիկանատան կից։

Նախ քան գործի անցնելը ես խնդրեցի երկու օրով արձակուրդ։ Մէկ տարի էր որ դուրս էի եկել ծննդավայրիցս, ուզում էի տեսնել իդգիրը, ծնողներիս, աղջականներիս ու բարեկամներիս։ Խէջօն ուժախութեամբ թոյլ տւեց։ Ես վարձեցի մեր դաշնակցական կառապան Միխօի կառքը եւ մեկնեցի զիշերով։ Ես վտանդւած էի եւ չէի ուղում լուսով մտնել իդգիր։

Սուրբալուն միակ վայրն էր, ուր հայ-թրքական բարի հարեւանական յարաքերութիւնները խախտւած չէին։ Շըշանը խաղաղ էր եւ ճամբորգութիւնը ապահով։

Առաւոտեան դէմ հասայ մեր տուն եւ ամբողջ օր տնից դուրս չեկայ։ Երեկոյեան մօսու եկաւ Գեորգանը**) եւ յայտնեց, որ Երեւանում սկսել են հայ-թրքական ընդհարումներ եւ թուրքերը բաւական շատ հայեր են կոտորել։ Լուրը չափազանց ծանր տպաւորութիւն թողեց վրաս։ Ես ինձ զդում էի յանցաւոր։ չէ՞ որ թուրցիկ խմբի պետ էի նշանակւած եւ ընդհարման ժամանակ պարտականութիւններ ունէի կատարելիք։

Այլեւս երկար մտածելու ժամանակը չէր։ Հակառակ ծնողներիս թախանձանքին, որ գէթ մի օր էլ մնամ իրենց հետ, նոյն գիշերն իսկ ճանապարհ ընկայ Երեւան։ Գեորգանը հետո դրեց իդգիրցի Գառպարենց Մելիքսեթին, որի հետ մեկնեցինք կառքով, հայ-կական գիւղերի վրայով։

Դեռ լոյսը չէր բացւել, որ հասանք Երեւան։ Ես անմիջապէս վազեցի Խէջօնց տունը։ Նա ապրում էր Խէջօւմեանինց բնակարանում, Յարսկի թէ Բեկրութեան փողոցում։ Ներս մտնելով՝ առջած տեսայ, որ Խէջօն կիսահանւած նստած հաց է ուտում։ Ինձ որ տեսաւ, բարձր պոռաց։

— Հը՛, խաթաքեա՛ր, եկա՞ր, դէ՛, արի հաց ուտենք...

*) Գալուստ Ալոյեան, կուսակցական անումով թորու, իին դաշնակցական գործիչ ու զինագործ։ Սպանւց չերաների ձեռքով, 1914 թ. ամառ, վանից կուկա անցնելիս։

**) Իգդիրի դաշնակցական ըմիկրներից։

Խէջօի մայրեկը, որ մեր բոլորիս մայրիկն էր, ասաց։

— Խէջօս աշխարհը շլակել ա, ման ա գալիս։ առաւոտուց հաց չի կերել, զէնց նոր եկաւ։

Ես Խէջօին երբեք այդքան ընկճւած ու մտավրադ չէի տեսել։ Ով նրան ճանաչում էր, գիտէր, որ ինչքան դժւար պայմանների մէջ էլ գտնւէր, միշտ կը պահէր հոգեկան արիութիւնը եւ իր մշտավրւարթ եւ օրհնեալ կատակներով կուրախացնէր ամենքին։ Այժմ ընկել էր խորունկ տիրութեան մէջ եւ երեսին ժպիտ չէր երեւում։

— Հը՛, ի՞նչ կայ, Խէջօ, հարցըրի ես։

Նա գաղաքաց ուտել։ Սաստիկ յուլւած էր։ Մարմնի բոլոր ջիղերը լարւած էին։ Աչքերը խոժուոս՝ երկու ձեռքի վրա յենւեց եւ թողեց ճաշի սեղանը։

Ել ի՞նչ պիտի լինի, պատասխանեց նա դառնութեամբ, հալա որ ջարդեցին, մնացածը յետոյ կը պատմեմ։

Ու ամբողջ երկարութեամբ ձգւեց թախտի վրա, երկու ձեռքերը երկարացրեց մարմնի երկու կողմը, ոտքերով հանեց կօշիկներն ու մի կողմ չպրատեց անփութօքին եւ մայրիկին խնդրեց, որ մի բանով ծածկէ։ Մայրը շատ խնդրեց, որ շորերն էլ հանէ, բայց նա չը լսեց ու այդպէս էլ քնեց։

Ես անցայ հարեւան սենեակը։ Այստեղ էլ նոյնպէս շորերը հագին, քնած էր Փառակեցի Մկրտիչը։ Խէջօից ես գեռ քաշուում էի, բայց Մկրտչի մօս շատ ազատ էի պահում ինձ։ Ես նրան հրեցի ու կանչեցի։

— Է՛, զոչի Աղամալով, վե՛ր կաց։ Մի պատմիր տեսնենք ի՞նչ է պատահել։

Մկրտչի պատմութիւնից պարզեց, որ քաղաքի թուրքերը, յանկարծակիի բերելով յարձակել են հայերի վրա եւ 20-25 հայեր են սպասել, որ կենտր. կոմիտէն զէնքի պակասութեան պատճառով սարսափի մատնւած՝ գլուխը կորցրել է եւ հրահանգել է առ այժմ զգոյշ մնալ, ընդհարումների առիթ չտալ եւ պատրաստել։ Ծանր դրութիւն էր ստեղծւել քաղաքում։ Թուրքերը առաջին յաջողութիւնից երես առած՝ ամէն ըոպէ կարող էին նոր յարձակումներ գործել ու նոր ջարդ առաջ բերել։

Ես էլ պառկեցի Մկրտչի կողքին եւ անընդհատ հարցեր էի թափում նրա գլխին, իսկ նա, կէս-քռւն, կէս-արթուն, քթի տակից ինչ որ բաներ էր մըթմըթում։ Նրա այդ մըթմըթոցից ոչինչ չհասկցայ։

Առաւոտեան երբ զարթնեցինք, Խէջօն արդէն տանը չէր։ Գնացինք Զոկի կաթնատունը, այստեղ էլ չկար։ Զանիքեգեան Հայկօից

իմացանք, որ գնացել է ման զալու քաղաքի ու երքերը և նոր կարգադրութիւններ անելու:

Ճաշի մօտերը Խէջօն վերադարձաւ կաթնատուն: Նրա հետ էին եւ իր երկու թիկնապահները՝ Կոլոս Շահէնը և մի էջմիածնեցի տղայ, որի անունը մոռացել էմ: Անցանք յետեւի սենեակը: Խէջօն հրամայեց Շահէնին կանգնել զրան առաջ եւ ոչ ոքի ներս չթողնել, իսկ ինքը նստեց սեղանի մօտ, չիբուխը լեցրեց մախուկայով^{*)}) ու սկսեց ծխել: Յետոյ ոտքի ելաւ ու սկսեց ման զալ՝ փստացնելով չիբուխը եւ ծխի գուլաները դուրս փշելով բերնի երկու կողմերից: Ես ու Մըկը ըստիչը լուս հետեւում էինք նրա շարժումներին: Ի՞նչ էր խոսվում նրա հոգին: Ինչո՞ւ էր այդքան անհանդիստ ու մտաղրաղ:

Խէջօն մէկին ընդհատեց իր զրուանքը, կանդ առաւ մեր առջեւ և սկսեց նկարագրել ստեղծած դրութիւնը:

— Նախիջեւանն ու Շարուրը շատ ծանր վիճակի են մատնած, կարող են ջարդել, Դարալազեալը ենթակայ է թարաքեամայի^{**)}) անմիջական հարւածներին: Սուրմալուի մի բուռն հայութիւնն էլ բնալընջման վատնդի տակ ա: Երեկւայ ջարդը սիրու պիտի տայ Երեւանի թրքութեան, իսկ հայերի ողին պիտի ընկնի: Կոխւը շատ ա մէծ. Էմ զիլսի բանը չէ էս դործը: Բնդեազ կենտրոնական Կոմիտէի մէջ էլ էն մարդը չկայ, որ այս չափի զինուրական դործեր ըմբռնի ու վարէ: Փամփուշտի ու զէնքի տեսակէտից էլ մէնք շատ խնդէնք, մինչ թրքութիւնը զինւած ա ու զինւում է կառավարութեան օժանդակութեամբ: Ասում են՝ Դումանը պիտի զայ. ա՛խ, ուր ա մի զար: Նա շատ նաղ անել չի զիտի, քեաֆուր օղլին՝ կնանիքը ծախել կը տայ, աթաւընի եանդրար, փափախները ծախել կը տայ ու էս շուն շան որդի հարուստներին կը ստիպէ զէնք առնել: Եւ, վերջապէս ամէն մէկին իր տեղը կը դնի եւ իր ճամբէն ցոյց կը տայ:

Իր ճառը վերջացնելուց յետոյ, Խէջօն շարունակեց փստացնել չիբուխը: Եւ աւելացրեց.

— Բէնամուս եղանք. Երեւանի մէջ էլ թուրքերը մեզ տւին: Կենտրոնական Կոմիտէն էլ մի եանից դատը՝ բէդատը քցել ա, թէ՝ ամէն զգուշական միջոց ձեռք առ, որ նոր ընդհարումների առիթ չստեղծելի, թէ՝ ընդհարման պատասխանատուն դու ես, թէ առիթներ ստեղծողը ամէնախիստ պատժի կենթարկւի: Չեմ խմանում՝ ի՞նչ անեմ:

*) Ծխալսոտի հասարակ տեսակը:

**) Քոչւր քուրքեր:

Ապա հրամայեց Մկրտչին, որ անմիջական հսկողութեան տակ տոնէ եւ զեկավարէ Շնթաղի գիրքերը, որտեղից կարող էին թըրքական կատաղի յարձակումներ տեղի ունենալ:

— Իսկ ես, վերջացրեց նա, անձամբ եղել եմ միւս շրջանները, նշանակել եմ շրջանապետներ եւ տեւել Հարկաւոր հրահանդերը:

Իմ թուուցիկ խմբին էլ, որի անդամների թիւը երկու օրւայ մէջ հասել էր 12-ի, հրամայեց բաժմանւել երկու մասի, կէսը կեդրոնացնել Ամիրեանի քարվանսարայում, բաղարի գիրքը, որտեղ ջարդել էին հայերը, իսկ միւս կէսը միշտ պատրաստ պահել կաթնատան յետեւի սենեակում: Ինքս էլ, Խէջօի կարգադրութեամբ, զնացի նրա մօտ:

Ես իմ թուուցիկ խմբի անդամների մի մասին դեռ չէի ճանաչում: Նախ՝ բոլորին հաւաքեցի թաղա եկեղեցու բակը. Եօթ հոգուն Քիւրդ Խէջօի զիլսաւորութեամբ ուղարկեցի Ամիրեանի քարվանսարան, միւս մասին էլ հրամայեցի սպասել Զոկի կաթնատան յետեւի սենեակում: Ինքս էլ, Խէջօի կարգադրութեամբ, զնացի նրա մօտ:

Այստեղ նորից ու նորից խօսեցինք տեղի ունեցած հայկական ջարդի, նրա թողած աղղեցութեան, ունենալիք հետեւանքների մասին: Երեւանի ժողովուրդը շատ էր աղղւել գէպքից: Ամէնքի մէջ տիրում էր յուսալիքում: Երեւանցիք որ գուցէ ամենից լաւ ծանօթ էին Դաշնակցութեան մարտիկների կեանքին ու քաջազործութիւններին, որ ա՛յնքան մէծ յոյսեր էին զրել Դաշնակցութեան վրա, այժմ շշմել ու շւարել էին: Զէին հասկանում, թէ լ՛նչպէս պատահեց կոտորածը, թէ ինչո՞ւ լուր եւ անգործ էր Դաշնակցութիւնը, ինչո՞ւ հարւածին չպատասխանեց հակահարւածով:

Հոգերնական այս ծանր վիճակը ամենից խորը զգում էինք մէնք՝ գաշնակցական մարտիկներս: Խէջօի վշտալիր արտայայտութիւնը, թէ՝ «նամուս չմնաց, պէ՛տք է այս անարգանքը մաքրենք», ամբողջապէս արտայայտում էր եւ մեր արամադրութիւնները:

Այս՝ կարելի չէր կուլ առև հասցւած անպատութիւնը:

Միւս կողմէից՝ պարզ էր, որ առաջին յաջողութիւնից երես առած թշնամին տեղը հանգիստ չպիտի նստէր: Արդէն նշանները երեւում էին. թուրքերը հետ ի հետ պատրաստում էին նոր յարձակման համար: Եւ բնական է, որ օգտէին հայերի ընկճւած տրամադրութիւնից եւ արագացնէին հարւածը: Մի նոր յաջող հարւած եւս, եւ հայերի համար կը ստեղծէր անտանելի կացութիւն: Յաղթական թուրքը զլուխ կը բարձրացնէր եւ քաղաքից դուրս, հայ-թըրքական ընդհարումների հրդեհը կը տարածէր ամբողջ նահանգում:

Ես տեսնում էի, որ այս մաքերը տանջում էին եւ Խէջօին ու

Մկրտչին: Ինքնանդաշտպանութեան գործի զեկավար Խէջօի եւ նրա օդնական Մկրտչի վրա էր ընկնում կոտորածի եւ ծագելիք բարդ դութիւնների անմիջական պատասխանատութիւնը: Խէջօի մէջ մի կողմից խօսում էր լաւագոյն մարտիկի թասիրը, միւս կողմից նրան խորապէս յուզում էր ժողովրդի ապահովութեան հոգու: Վերջապէս, նրան անհանդստացնում էր եւ Դումանի գալու լուրը. չէ՞ որ ինքը Դումանի լաւագոյն դիմուրներից ու նրան պաշտողներից էր. ի՞նչ երեսով պիտի ներկայանար նրան:

— Հէ՛յ, մէրդ մեռնի, Խէջօ!, ի՞նչ երեսով պիտի երեւաս Դումանին, կրկնում էր նա անընդհատ:

Դրութիւնն անտանելի էր ոչ միայն Խէջօի, այլ եւ Երեւանի հայութեան համար: Կենտրոնական կոմիտէն կարգադրել էր խոհեմ լինել ու սպասել, բայց չէ՞ որ թշնամին չէր սպասի: Կուի մէջ յաղթութիւնը մեծ չափով ապահոված է նրան, ով իր ձեռքը կառնէ նախաճեռնութիւնը: Բոլոր Երեւոյթները ցոյց էին տալիս, թէ սպասելու անմիտ քաղաքականութիւնը կարող էր լինել կորստարեր հայերի համար: Ընդհակառակը, հակահարւածը մեր կողմից, յաջողութեան գէպքում, հիմնովին պիտի փոխէր դրութիւնը եւ հայերին պիտի զնէր առելի նպաստաւոր վիճակում: Պատերազմը յայտարարել էր թշնամին. մենք պաշտպանողի գերում էինք: Լաւագոյն պաշտպանութիւնը յարձակումն էր:

Այսպէս մտածում էինք մենք Մկրտչի հետ: Երկար ու բազմակողմանի քննելով ստեղծւած կացութիւնը, մենք որոշեցինք առաջարկել Խէջօին մեր ձեռքը առնել նախաճեռնութիւնը:

— Վա՛յ, խաթաքեար քէօփողլիք, ասաց նա, ես էլ ամբողջ օրը դրա մասին եմ մտածում: Խոմ թուրքերը մեր զլիին ասլան չղառա՞ն: Բէնամուս ապլեն էլ մի բան չէ. որտեղ կորուի կապը ... ու վերջացրեց մի սարսափելի հայհոյանքով:

Ապա Խէջօն պինդ փակեց սենեակի գուռը, եւ երեքով նստանք խորհրդակցելու դրութեան եւ մեր անելիքների մասին: Ամենից առաջ ստուգեցինք մեր տրամադրութեան տակ գտնւած զէնքի քանակը. պարզեց, որ մեր ունեցած մոսին հրացանների թիւը հարիւրը չի անցնում. ունէնք նաև յիսունի չափ ատրճանակներ, մեծ մասով մասուցէր: Շատ չէր այդ, բայց եւ այնպէս դործ կարելի էր տեսնել:

Խէջօն կանչել տեղ մեր պահեստապետ Զանիբէկեան Հայելին: Սա թովուալով ներս ընկաւ եւ բերեց մի ուրախ լուր. հէնց նոյն օրը Ալեքսանդրապոլից ստացել էր 15 մոսին հրացան եւ 4000 դամ-փուչտ:

— Ի՞նչ մոսիններ են, հա՛, բոլորովին նոր, գեռ կաքաւի ձէն չեն լսել, չաղակրատում էր Հայել:

— Լա՛ւ, լաւ, խաթաքեար քէօփողլի, ընդմիջեց Խէջօն, էղ մօսինները մարդու չես տայ եւ կը պահես պատրաստ:

Մեր խորհրդակցութիւնը վերջացաւ բարձր տրամադրութեան տակ: Ձեռք առնւած ուղղմագիտական միջոցները յոյս էին ներշընչում, որ այլեւս թուրքերը չէին կարող անակնկալի բերել ու կոտորել հայերին:

Նոր ընդհարումը տեղի ունեցաւ մեղ համար աւելի նպաստաւոր պայմաններում: Ժամը ցերեկւայ 12 էր, երբ կոխւը սկսեց: Ես իգղիրցի Մելիքսեթի հետ փոստի մօտ էի, որտեղից ծայր տեղ հրազնների տրաքոցն ու սարսափահար փախեփախը: Զոկի կաթնատունը փոստից հարիւր քայլի վրա էր: Շտապեցինք այնտեղ: Թուրքը իսրբի սղաններն արդէն փողոցումն էին, կաթնատան առաջ եւ համարնի էին սպասում:

Խէջօն, որ մինչեւ այդ զնէլ էր քաղաքի բոլոր կայաններն ու դիրքերը եւ ժամը 11-12-ին նստած էր «Ֆրանսիա» հիւրանոցում, կանդուրալեանի^{*)}) պատշգամբում, Աստաֆեան փողոցի վրա, հրացանաձութեան առաջին իսկ վայրեկեանից թուել էր փողոց եւ այժմ մեծ-մեծ քայլերով զնում էր Բուլվարի ուղղութեամբ: Նրան միշտ, որոշ հեռաւորութեան վրա, հետեւում էր իր թիկնապահ կարճահասկ Շահէնը: Ես աղաներին կարգադրեցի.

— Տղե՛րք ջան, գէպի Բուլվար:

Իսկ Խէջօն բղաւում էր.

— Հը՛, բարամ օլասան, զարկելով գէպի՛ Մէրդան:

Կոխւը տարածւեց ամէն ուղղութեամբ: Գլուխները կորցրած, իւրինց ունեցածքը թողնելով անտէր, փախչում էին հայ ու թուրք խանութպաններ, փայտավաճառներ, մանրավաճառներ, կառապաններ, ամենքը: Պայթել էր Դաշնակցութեան մառզէրը, եւ կուելու պատրաստակամութեամբ փողոց էին թափւել պատանի աշակերտներ, երիտասարդներ, ծերեր, բոլորը սրտապնդւած փոխվրէժի գաղափարով: Սկսւած իրարանցման հետ միաժամանակ ծայր տը վիրքային կոխւներ հայ եւ թուրք թաղերի միջեւ:

^{*)} Գիւղատնես Պօղոս կանդուրալեան, եին դաշնակցական, Երեւանի կենտրոնի ամեսմ, Հայաստանի Հանրապետութեան օրով Պետական Գայիքի բաժնի վարիչ էր:

Դամըրբուլաղի կողմից թաթարները շարունակ ուժեղ զրոհներ էին գործում Հայկական Շնթաղի վրա և մերոնց չեշտակի կրակի տակ ընկնելով՝ յետ էին նահանջում: Մեր մարտիկները մինչ այդ արդէն մաքրել էին բուլլառը, Մէջդանը, Սուրբ Սարգսի փողոցը և օգնութեան էին դնում Շնթաղին: Երբ ես իմ մարտիկների հետ հասայ Շնթաղ, տեսայ որ Մկրտիչը դիրքից դիրք անցնելով խրախուսում էր կուռղներին և հրահանդներ տալիս: Մեր երեւումը աւելի եւս սրտապնդեց կուռղներին, որոնց կրակի տակ թշնամին հարկադրեց փակւել տներում:

Այս տաք կուի ժամանակ մեր տղաները զրաւեցին Դամըրբուլաղի թուրք դիրքերի եւ Շնթաղի մեր դիրքերի միջեւ գտնուող հանրատունը, որ բարձրութիւնից իշխում էր չըջապատի վրա: Այս դիրքի զրաւումով թուրքերի շարժումը դէպի Շնթաղ դարձաւ անկարելի:

Իմ մարտիկների մի մասը թողնելով Մկրտչի տրամադրութեան տակ՝ միւսների հետ վերաբարձայ Զոկի կաթնատունը: Այստեղ իմացայ, որ Խէջօն անցել է Փանահ խանի տան վերեւը ընկած մեր գիրքերը: Տղաների հետ շտապեցի նրա մօտ: Նա տղաներին դասաւորեց թոյլ դիրքերում, անհրաժեշտ հրահանդները տեսց եւ ինձ հետ վերադարձաւ կաթնատուն: Այստեղ Խէջօն ասաց, թէ թուրքերին լոեցնելու բաւարոյն միջոցներից մէկն էլ կը լինէր այն, որ մի խոսմը տղաներ նորքի սարով բարձրանային Դամըրբուլաղի գլուխը եւ հրացանի կրակի տակ առնէին թշնամուն: Այս միտքը սրտիս շտամ մօտ եկաւ: Ես խնդրեցի, որ թոյլ տայ ինձ գնալու: Խէջօն համաձայնեց եւ իմ տրամադրութեան տակ դրեց Թիֆլիսից նոր եկած մօտ տասը սքանչելի մարտիկներ՝ Կոփեցի կնեսազին, կրզրումցի Արամին, Թիֆլիսեցի Շէկ Տիգրանին, Եւայլն: Սրանցից ոմանք զինած էին ատրճանակով, մի մասն էլ բոլորովին անզէն էր: Խէջօն հրահանդը ձեռքիս գնացի ուղիղ մեր պահեստապետի մօտ եւ տղաների համար ստացայ հրացաներ հարիւրական փամփուշներով ու փամփշտականերով: Զինւած մարտիկներին միացան եւ նորքի ուժերը, որոնց մեծ մասը անզէն էր կամ միայն գաշոյն ունէր: Գիշերւայ ժամը 10ին պիտի յարձակւէինք: Նորքիք լաւ ծանօթ էին ճանապարհներին և մեր բոնելիք դիրքերին: Մեր շարժւելու վայրկանին հասաւ նաև Խէջօն եւ մեր շուրջը գտնուած անզէն գիւղացիներին տեսնելով՝ սրտախոսեց.

— Հը՝, ի՞նչ ա, պոլկ*) էք կազմել:

*) Զօրագունդ:

Եւ հրամայեց, որ լոյսը չբացւած վերադառնանք նորք: Ընկանք ճանապարհ: Էլ կարող էք երեւակայել, թէ ինչպէս էի կառավարում այդ խայտաբղյութը խամամուժը: Ֆամ ու կէսից յետոյ հասանք նշանակւած տեղը եւ բոնեցինք ամուր գիրքեր: Մեր զրութիւնը հիանալի էր. թիկունքը ապահովում էին լուները. մենք իշխում էինք թուրքերի վրա, որոնք, երեւի, չին ենթադրում, թէ խում էինք թուրքերի վրա, որոնք, երեւի, չին ենթադրում, այդ բարձունքներից իրենց գլխին կրակ պիտի թափւի:

Իմ բարձր գիրքից ես դիտում էի վարը տարածւած թրքական թաղը, որտեղից հրացանի ճայներ էին հասնում: Այժմ, երեւի, Մըթաղտիչը քրտնաթոր՝ գիրքից գիրք է վազվում եւ կարգագրութիւններիչը քրտնաթոր՝ գիրքից գիրք է վազվում եւ կարգագրութիւններիչը անում, իսկ ես անխով խորհում էի, թէ ինչպէս սկսեմ: Մարտիկներից մի տասնեակ ուղարկեցի դէպի առաջ, իսկ մէնք 2000-2500 քայլ հետուից սկսեցինք որութնդոստ համազարկը: Մեզ հետ եկած անզէն գիւղացիներն էլ «ուռա» ներով սրտապնդում էին մեզ: Այդ աղմուկը գիշերային խորհրդաւորութեան մէջ ահաւոր տպաւորութիւնն էր թողնում, եւ զարմանալի չէ, որ Դամըրբուլաղի թուրք թաղի բուլոր ճրագները անմիջապէս մարեցին, երթեւեկութիւնը վուղոցներում դադարեց եւ յարձակումները հայերի վրա վերջ դտան: Պուրքերի սարսափը մեծ էր, մանաւանդ, այն պատճառով, որ հայկական դիրքերին մօտ գտնուող մի քանի թրքական տներ յօդս ցընդեցին մեր ուռմբերից:

Մենք կրակեցինք մօտ 2000 փամփուշտ: Կասկածում եմ թէ մեր փամփուչաները շատ մարդ գլորեցին բայց սարսափը մեծ էր: Յամենայն դէպի, մեր թիկունքային հարւածը վճռական էր եւ չչմեցրեց թուրքերին:

Երբ առաւոտեան վերադարձանք քաղաք, մեր յաղթանակը այլ եւս ակներեւ էր. հայերը ցնծութեան մէջ էին: Երեւանցիք ոյժ առած՝ միաբերան գոռում էին. Զարկ, Երեւան ջան, զարկ:

Գիշերային այս գրոհը բոլորովին բարձրացրեց քաղաքի հայերի բարոյական կորովը, ողեանդեց ու բարձրացրեց նաև նահանդի հայութեան տրամադրութիւնը:

Միւս օրը առաւոտեան դնացի տեսնելու Խէջօին: Նրա գէմքը փայլում էր ուրախութիւնից: Նա պինդ գրկեց ինձ, տաք-տաք համարեց ու ասաց:

— Կաթաքեամ* , դու որ մի շարաթ կոխ անես, Քանաքեսի ջարախանան*) քեզ չի հրքի:

*) Քանաքեսի գինիքի պետական պահեստ:

II

ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՄ ԴՐԻՄԱՆԻ ՀԵՏ

Հակառակ Բագուի Կենտրոնական Կոմիտէի կարգադրութեան, ընկերական մի պարտականութիւն կատարելու նպատակով, 1905թ. յունիսի վերջերին և Երեւանից վերադարձայ Բագու:

Այդ ժամանակ Մարտիրոսը* և Ալեքսանդրապոլցի Մուլկուչը (Մկօ) բանարկւած էին Նակաշիձի առաջին մահափորձի պատճառով, որ անցել էր անյաջող: Պէտք է տեղի ունենար զինորական դատ, և բանտարկւած ընկերները համոզած էին, որ դատարանը մահաւան պատիժ կամ յաւիտենական տաժանակիր աշխատանքի վճիռ պիտի տայ: Մարտիրոսը նամակ էր գրել Երեւան և խնդրում էր, որ ամէն կերպ աշխատենք, բանտից մինչեւ դատարան տանելը, փախցընել իրենց, իսկ եթէ այդ չյաջողւի, ոռումք նետել և զինոր պահակների հետ միասին իրենց էլ սպանել:

Այս նամակի մասին լուրջ խորհրդակցութիւն ունեցանք Խէջօն, Մկրտիչն ու ևս, և Բագու մեկնելս էլ տեղի ունեցաւ նրանց գիտութեամբ եւ համաձայնութեամբ: Երեքիս կարծիքն էլ այն էր, որ Մարտիրոսի երկրորդ ցանկութիւնը պէտք էր կատարել այն գէպքում միայն, երբ դատարանը մահաւան պատժի վճիռ տար, իսկ տաժանակիր աշխատանքի պարագային կարիք չկար դիմելու սպանութեան:

Իմ նորից Բագուում երեւալուց չափազանց գժգոհ էր Կենտր. Կոմիտէն, որի պատասխանատուանդամ ընկ. Ա. Գիւլիսանդանեանը սաստիկ յանդիմանեց ինձ՝ արարքս համարելով անկարգապահութիւն և լինքնագլխութիւն:

— Ինչպէս կարելի է այս պայմաններում գործ անել, երբ ամէն մարդ իր ուղածն է առաջ տանում ու հրահանդներին չի ենթարկըում, գանգատուում էր նա: Իսկ մեր սիրելի Պապաշան կշտամբում էր ...

— ԱՇ տղայ, դու հօ դիժ չէ՞ս, ինչո՞ւ եկար, չէ՞ որ սստիկանները շան նման փնտրում են քեզ:

Ես ի՞նչ կարող էի պատասխանել աւագ ընկերների գառն խօսքերին, մանաւանդ որ որոշած էր երեքիս վճիռը ոչ ոքի չյայտնել:

*) Մարտիրոս Զարուխէան, յայտնի դաշնակցական մարտիր. սպանեց պարսկական կոխմերում:

ինձ մնում էր միայն քրտնել ու սպասել, թէ երբ պիտի օճիքս ազատ թողնին:

Հակառակ կրածո նախատինքներին ու յանդիմանութեան, այնուամենայիւ ես վճուցի չհեռանալ Բաղուից, մինչեւ չկատարեմ մեր երեքի որոշումը: Եւ նոյն իսկ բանու էլ զնացի այցելելու Մարտիրոսին եւ Մուլկուչին: Մարտիրոսի քոյլը՝ Սաթենիկը ինձ ներտիրութիւն էր ստացել, եւ նրա հետ կայացնելով եղած տեղոր տեղ՝ արտօնութիւն էր ստացել, եւ նրա հետ միասինքն գնացինք բանտ, ուր բաւական երկար խօսեցի Մարտիրոսի հետ, բացատրեցի, որ յուսահատւելու կարիք չկայ, յայտնեցի մեր հետ, բացատրեցի, որ յուսահատւելու կարիք չկայ, յայտնեցի մեր հետիւ վճիռը եւ հաղորդեցի Խէջօի եւ Մկրտչի ջերմ բարեւմերը: Երեքիս վճիռը եւ հաղորդեցի Խէջօի եւ Մկրտչի ջերմ բարեւմերը: Առանձնապէս պնդեցի, որ եթէ դատարանը տաժանակիր աշխատանքի վճիռ տար, իսկ տաժանակիր աշխատանքի պարագային կարիք չկար դիմելու սպանութեան:

Այս այցելութիւնը եւ Երեւանից բերւած որոշումն ու խորհուրդները շատ լաւ աղեցութիւն արին բանտարկեալների վրա: Դրանից յետոյ էլ ես զեռ մի-երկու շարաթ մնացի Բագուում, երբ Երեւանից ստացւեց մի անակնկալ հեռագիր: Այդ առթիւ մտայ Պապաշայի մօտ բացարութիւն ուղելու: Հեռագիրը կրում էր Տէր-Յովհաննիսեան բանութիւնը, որ ինձ անծանօթ էր: Պապաշան մի լաւ յանդիմանելուց յետոյ, որ զեռ չէմ հեռացել Բագուից, յայտնեց, թէ հեռացած նիկոլ-Դումանն է, որ հրահանդում է անմիջապէս մեկնել Երեւան: Պապաշան իր կողմից էլ պնդեց, որ օր առաջ ճանապարհնկնեմ:

Ես յաջորդ օրն իսկ մեկնեցի եւ Երեւան հասնելուս պէս շտապեցի նիկոլայանալ նիկոլին, որի ժամանակաւոր շտաբը գտնում էր Հարուցիչ նիկոլը Նիկոլ-Դումանն է, որ հրահանդում է անմիջապէս մեկնել Երեւան: Պապաշան իր կողմից էլ պնդեց, որ օր առաջ ճանապարհնկնեմ:

Նիկոլը զեռ չէր եկել: Թէեւ Բագուում ես նրան մի քանի անդամ անսել էի, բայց հետը ծանօթ չէի: Դուրս եկայ, որ մի քիչ զրօննեմ, երբ հեռաց տեսայ նրա գալը: Անմիջապէս վերադարձայ եւ կամաց գնում էի յետեւից: Շտաբը մտնելիս նա նկատեց, որ ես էլ բարձրանում եմ սանդուխքներով: Դարձաւ ու հարցըց:

— Ի՞նչ կայ. ո՞ւմ էք ուղում:

— Զեր հեռագրի համաձայն եկել եմ, պատասխանեցի ես:

— Բագուկի՞ց :

— Այո՛ :

Նա ներս մտաւ իր սենեակը, ուր նրան սպասում էին Գալուստ Ալոյանը եւ պահեստապետ Հայկօն։ Նրանց հետ կէս ժամի չափ խօսելուց յետոյ ինձ էլ կանչեց ներս։ Ես մտայ, բարեւեցի եւ կանդ առի սեղանի մօտ։ Նիկոլը քաղաքավարութեամբ պատասխանեց բարեւին։ Բարեւեց նաեւ Գալուստն եւ դառնալով Դումանին՝ ասաց.

— Դէ՛հ, Նիկոլ, ես գնացի. էլ ինձ գործ չկայ այստեղ։

Ու դուրս եկաւ։ Նիկոլը հրաւիրեց ինձ նստելու եւ անմիջապէս անցաւ գործի։

— Քո Բագու գնալու մտաին, ասաց, Խէջն մանրամասն զեկուցել է ինձ։ Կուսակցութիւնը պէտք եղած դէպքում գիտէ իր անելիքը։ Եւ սկսեց հարցաքննել։ Ի՞նչ կրթութիւն եմ ստացել, զինորական ծառայութեան մէջ եղե՞լ եմ եւ այլն։

Ես, եթէ չեմ սխալում, քսան մէկ տարեկան էի։ Յայտնեցի, թէ՝ աւարտել եմ Երեւանի Գիմնազիայի չորրորդ դասարանը, թէ՝ եղել եմ Ախուզինսկի Պնդի զինավարժական բաժնում եւ Բագուի հայ։ Թրքական ընդհարումների պատճառով կիսատ ձգել ու փախել եմ Բագու։

— Ծխո՞ւմ էք, ընդհատեց նա, մի ծխախոտ առաջարկեց եւ ակնարկելով Նակաշիձէի ահարեկումը՝ շարունակեց։ Կուսակցութիւնը քո ձեռքով մի մեծ գործ է կատարել, այդ չի նշանակում, թէ դու հակառակ նրա կենարոնական կոմիտէի հրահանգի կարող ես, կամ իրաւունք ունիս վերադառնալ այն վայրը, որտեղից քո իսկ ապահովութեան եւ իրեն յայտնի այլ պատճառներով հեռացրել է։ Հայ աղատագրական պայքարը շատ մեծ է, քեալազէողութեան վայրկեաններն անխուսափելիօրէն դեռ կը գան, հարկաւոր է տնտեսել ուժերը եւ սպասել յարմար ժամանակի։ Մանաւանդ դու, որ թէ Գիմնազիայում ես սովորել, թէ զինուրական Դպրոցում, շատ լաւ պէտք է հասկանաս, թէ ինչ բան է կարգապահութիւնը։ Դու մնում ես իմ տրամադրութեան տակ. գնա՛, պէտք եղած դէպքում կը կանչեմ։

Ես լուս, գլուխս կախ լսում էի։ Մերթ տաք քրտինք էր գալիս վրաս, մերթ պազ։ Ոյժ չունէի առարկելու կամ արդարանալու։ Նրա պարզ, բայց կտրուկ եւ աղդող խօսքերը մխում էին զիմումս այլ եւս երբեք չմոռացւերու համար։

Ասպէս տեղի ունեցաւ իմ առաջին հանդիպումը՝ Նիկոլ՝ Դումանի հետ։

Երկու թէ երեք օր անցած նա ինձ նորից կանչեց մօտը։ Կարգագրաւած էր, որ Խէջօն Սարգիս Օտարաշեանի եւ Վահան Փափաղ-հանի (Կոմսի) հետ գնայ Նախիջեւանի շրջանը, իսկ ինձ ո՞ւր պիտի ուղարկէր, դեռ չզիտէի։ Նա ապրում էր Սարգիս Օհանջանեանի տանը. այստեղ էլ ընդունեց ինձ, բայց այս անդամ շատ տեկի սիրալիք ու մտերմական վերաբերումով։ Նախ՝ ամենայն լրջութեամբ եւ մանրամասնօրէն հարց ու փորձ արաւ, թէ ինչպէ՞ս ահարեկեցի Նակաշիձէին, ապա յայտաբարեց։

— Դու պիտի անցնես Ղըրիբուլազ։ Քեզի կը տամ տասը զինուոր։ Շըջանը ապահով վայրերից մէկն է, մեծ վտանգ չկայ։ միակ վտանգը թարաքեաման է, որ կարող է յարձակում գործել հայ զիւղերի վրա, արգելք լինել դաշտային աշխատանքներին եւ քշել զիւղացիների անհսունները։ Քեզ վրա գնում եմ նաեւ մի ուրիշ պարտականութիւն, որ աւելի կարեւոր է. տեղ հասնելուդ պէս իսկոյն պիտի կազմակերպես տեղական մարտական խմբեր, նախապատութիւն տալով ուսւ զինուրական ծառայութեան մէջ գտնեածներին։ Կը կազմես նաեւ մէկ կամ երկու բացառիկ խումբ 15ական հոգուց եւ կը ցուցակագրես շրջանի բոլոր զէնքերն ու փամփուշտները։

Այսպէս խօսելով՝ սեղանի արկդից հանեց ուռսական շտարի հըրատարակած զինուրական քարտէզը եւ փոելով սեղանի վրա՝ ցոյց տաեց շրջանի բոլոր հայկական ու թրքական գիւղերը, հանգամանօրէն բացատրեց նրանցից իւրաքանչիւրի զինուրական նշանակութիւնը. յատկապէս երկարօրէն կանգ առաւ քոչոր թուրքերի բոնած վայրերի վրա՝ սկսած Բէզարլուի բարձունքներից մինչեւ Սելիմի լինանցքը։ Եւ ի վերջոյ, կարգադրեց։

— Վաղը կանցնես շտար, կը ստանաս լիազօրպիրդ եւ Ղըրիբուլախցի մի քաջ տէրտէրի հետ կը մեկնիս շրջանդ։ Տէրաէրը մի քանի օր է ինչ այստեղ է եւ իրենց շրջանի համար խմբակես է ինդրում։

Այս բոլորը ինձ համար շշմեցնող անակնկալ էր։ Ես այլ բան էի մտածում եւ բնաւ տրամադիր չէի Ղըրիբուլախի պէս մի խաղաղ եւ մարտական տեսակտից անհետաքրքիր շրջան գնալ։ Եւ անհամարձակ դիմեցի Նիկոլին.

— Պարոն Նիկոլ, մի խնդիր ունիմ։

Նա գլուխը արագօրէն թեքեց իմ կողմը։ Ես շարունակեցի։

— Դուք ինձ խումբ էք տալիս եւ ամբողջ շրջանի զեկավար էք նշանակում։ այդ իմ ուժերից վեր է. ես չեմ կարող արդարացնել ձեր յոյսերը. ինդրում եմ ինձ չուղարկէք Ղըրիբուլազ, այլ պահէք ձեզ մօտ եւ օպտագործէք քաղաքական կոիներից համար։

Նա, դէմքը մի քիչ խոժոռած, սուր հայեացք նետեց վրաս և արտասանեց :

— Վաղը առաւօտեան ժամը 9-ին եկէք շտաբ. պատրաստ եղէք մեկնելու Դըրխոռւլաղ, — և ոսկրոտ ձեռքը պարզելով ինձ՝ աւելացրեց՝ ազատ էք, կարող էք գնալ:

Ինչ ոչինչ չէր մնում, բայց եթէ համակերպել: Հետեւեալ օրը առաւօտեան ժամը 9-ին ևս արդէն շտարումն էի: Նիկոլը յանձնեց ինձ լիազօրագիրը, կարգադրեց ստանալ խմբի ծախսերի համար հարկաւոր գրամը և փամփուշտներ ու հրացաններ:

— Իսկ տղաները կը ստանաս Մկրտիչից: Երբ ամէն բան պատրաստ լինի, մեկնելուց առաջ, երեկոյան դէմ անցիր այստեղ ինձ մօտ: Այսօր ամէն բան պատրաստ պէտք է լինի, որպէսզի վաղը ճանապարհւէք:

Դումանի նշանակած ժամին երեկոյեան մտայ շտաբ: Նա մանրամասնօրէն պարզեց ինձ յանձնւած շրջանին և խմբին վերաբերող բոլոր կարեւոր խնդիրները և առանձնապէս կանդ առաւ մարտիկների զինավարժութեան, կարգապահութեան և դէպի տեղական բնակութիւնը ցոյց տրւելիք վերաբերմունքի վրա: —

— Խստիւ հրահանգում եմ, ընդդեց նա, ո՞չ մի դէպում չմասնակցել տեղական դաստիան և այլ կարգի գործերին, որքանով որ նրանք կապւած չեն ձեր զինւորների և զինւորական պարտականութիւնների հետ: Իմ ցանկութիւնն է, որ ամէն կերպ խոյս տաք տեղական ժողովրդին նեղութիւն պատճառելուց և դժգոհութիւնների առիթ ստեղծելուց, մանաւանդ մատակարարման հարցերով: Այստեղ, ուր ժողովուրդը ձեզ յօժար կամքով պարէն չի տրամադրի, գնեցէք. այդ նպատակով ձեզ գումար կը տրամադրեմ:

Այդ ժամանակ ամէն տեղ, սովորաբար, ժողովուրդն էր կերակրում մարտական խմբերին, բայց ևս շատ լաւ բմբոնում էի Դումանի մտահոգութիւնը. մի կողմից նա չէր ուզում որեւէ նեղութիւն պատճառել ժողովրդին, միւս կողմից, իր կարգադրութիւններով ուզում էր իրեն ենթակայ անհատներին ներշնչել Դաշնակցութեան դոհարերող և ժողովրդասէր ոդին: Նա շատ մեծ կարեւորութիւն էր տալիս մարտիկների բարոյական մաքրութեան և գաղափարական անձնազոհութեան: Նա պահանջում էր, որ Դաշնակցականը իր կեանքով ու գործով օրինակ լինի ժողովրդին:

Բոլոր անհրաժեշտ հրահանգները տալուց յետոյ, նա կարգադրեց, որ մի ամիս վերջը վերադառնամ և զեկուցում տամ կատարած աշխատանքներիս և ինձ վստահած շրջանի մասին:


Դըրխոռւլաղում մենք շատ քիչ ընդհարումներ ունեցանք: Մի ամսից յետոյ ևս վերադարձայ Երեւան Դումանին զեկուցում տալու համար: Ինձանից առաջ արդէն եկել էր վերեւ յիշւած քահանան՝ Տէր-Զաքարը, և մանրամասն պատմել շրջանի և իմ աշխատանքի մասին: Տէր-Զաքարը ասել էր Նիկոլին՝

— Նիկոլ, առաջ ևս խնդրում էի որ նրան մեր շրջանը չուղարկես. իրուեւ շատ ջահելի. հիմա խնդրում եմ, որ պահես մեղ մօտ և ուրիշ շրջան չփոխադրես:

Երբ Տէր-Զաքարից յետոյ ևս հասայ Երեւան և մանրամասն զեկուցում տիկ Նիկոլին, առանձնապէս մատնանշելով դաշտային հսկէչ պահակների կատարած արդիւնաւէտ դերը՝ նա գոհ՝ հաւանութիւն տւեց իմ այս գործին և ասաց.

— Տեսա՞ք, այդ կէտը իմ հրահանգների մէջ չկար, մի բան էլ զեռ աւել էք արել: Դուք նորից կերթաք Դըրխոռւլաղ, ուր կը մնաք մինչեւ որ քոչւոր թուրքերը վայր իջնեն լեռներից: Ապա ևս ձեղ կը կանչեմ և մի ուրիշ աւելի հետաքրքիր աշխատանք կը տամ:

Եւ առաջին անգամ ճաշի հրաւիրեց իր մօտ:



ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԱԿԻՐԵԱՆ

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱ

ХV

ԽԶՈՒՄԸ ԹԱԳԱԽՈՐԻ ՀԵՏ

Որքան եւ դիւրահաղորդ, մեղմաբարոյ ու հաճելի վարւելակերութի տէր՝ Սայեաթ Նովան կծու լեզու ունէր եւ հրոհմն նոյն խոկ չարէր լինում։ Նրա մեր ձեռքը հասած ոտանաւորներից մէկը ուղղւածէ արքայազն Վախտանգի դէմ։ Այդ ոտանաւորը առւածէ յանպատրաստից 1751 թւին, Թելաւում, արքայազն Վախտանգի կողմէից բանաստեղծին հասցւած ինչ որ վիրաւորանքից յիտոյ։ Սայեաթ Նովան Վախտանգին դատարկ գդումի հետ է համեմատում, զարմանում է, թէ ի՞նչ կարիք կայ էշերի ամբակները հինայով ներկելու եւ այլն, եւ միաժամանակ մէծ զովեստով է խօսում իր մասին։

Այս յանդուդն արարքը, ըստ երեւոյթին, առանձին հետեւանքներ չունեցաւ բանաստեղծի համար, բայց արդէն 1752 թ. վերջը կամ 1753 թ. սկիզբը նա ուրիշ ինչ որ արարքով առաջ է բերում հովանաւորի գժգոհութիւնը, եւ թագաւորի ու բանաստեղծի միջեւ առաջ է գալիս սուր տարակարձութիւն, որ սպասում է պատճառ զառնալ վերջինիս արտաքրման արքունիքից։ Կայ 1753 թւականը կրող մի հայերէն ստանաւոր (№ 8), որ բոլոր ուսումնասիրողները, բացառութեամբ Գ. Ասատուրի («Նոր Ռւդի», 1930, № 4-5, էջ 56), կարծում են, թէ բանաստեղծի սիրուհուն է ուղղւած, իսկ Վալերի Բրիսովը, պ. Մակենցեանի առաջնորդութեամբ, վերագրում է մի սիրահարութեան, որ, իր թէ, Սայեաթ Նովան ունեցել է իրակի թագաւորի աղջկայ հետ։ Իրողութիւնն այն է, որ այդ ոտանաւորը ինչպէս հիշու է ենթաղբում Գ. Ասատուրը, վերաբերում է իրակի թագաւորին։

Ոտանաւորի բառացի իմաստն ու նրա ներքին բովանդակութիւնը պարզ կերպով ուղղւած են թագաւորին։ բանաստեղծը աշխատում է հաշուուել նրա հետ։ Իրակլիին համեմատում է Բոստոմի որդի Զալի հետ - դուն Բոստոմի Զալ քա՛քավոր։ Համարում է չհաւատալ թրշնամիներին - դուն քու սիրտը խստակ պահէն, ետքի խօսկըն աւտալու չէ։ որ թագաւորը պէտք չէ որ անմեղին պատժէ - նաևախ տիդ դար մի՛ ամի։ որ եթէ բանաստեղծը մի անդամ էլ յանցանք գործէ,

այն ժամանակ թագաւորը կարող է կարել տալ նրա գլուխութեանց էլ սուչ ունենամ՝ գլուխս արա՛ տալ, քաֆավոր։ Ապա շոյց է տալիս իր մօտիկութիւնը իրակլի թագաւորի հետ հետեւեալ սքանչելի տողերով։

Թէկուզ ըլիմ, թէկուզ չըլիմ՝ մէջլիսներուն սազ չի պակսի, թէ կու պակսիմ, ֆի՛զ կու պակսիմ՝ աշխարհիս մէ մազ չի պակսի

Այս շատ յարգալիքը եւ նոյն իսկ աղաչական ոտանաւորի մէջ Սայեաթ Նովան տալիս է իր սուեղծաղործութեան փայլուն, կարելի է ասել՝ հրեղէն բնորոշումը։

Ամեն մարք չի կանա խրմի իմ ջուրըն՝ ուրիշ ջրեկն է, Ամեն մարք չի կանա կարք իմ գիրքն՝ ուրիշ գըրէն է։

Եւ վերջացնում է, հետեւեալ խիստ ուշագրաւ խոսքերով - Սայեաթ Նովան զերեգմանըն Հինդ, Հարաշ, Արար մի՛ անի։

Ուզում է ասել, թէ իրակլին չպէտք է հեռացնէ նրան իր արքունիքից, թէ արքունիքից հետանալուց յետոյ նա ստիպւած պիտի լինի ուրիշ հովանաւոր փնտուել եւ այդ նպատակով՝ դնալ Հինդ, Հարաշ, Արար ու այնաեղ մնալ մինչեւ մահ։ Պարզ է, որ բանաստեղծը շատ Արար մի սիրում Վրաստանը, կապւած է իրակլիի հետ եւ դժւարանում է թողնել Թիֆլիսն ու թագաւորական պալատը։

Խզումի առաջն այս անդամ առնելում է։ թագաւորն ու բանաստեղծը հաշուում են, եւ Սայեաթ Նովան նորից սկսում է փայլել իրակլի Բարի արքունիքում, առաջ Թելաւում, իսկ 1761 թւականից իրակլի Թիֆլիսում, այլեւս միացեալ Վրաստանի արքայ իրակլիի մօտ։

10-12 տարի անցած, սակայն, նոր գժտութիւն է առաջ գալիս իրակլիի եւ Սայեաթ Նովայի միջեւ եւ այս անդամ արդէն ճակատագրական հետեւանքով բանաստեղծի համար։ տեղի է ունենում վերջնական խզում։ Ստոյդ յայտնի չեն ոչ խզումի պատճառները, ոչ ճիշտ ժամանակը։ Գ. Ասատուրը, հետեւելով Գ. Ախուրդեանին, ենթաղբում է, թէ այդ խզումը տեղի է ունեցել 1759 թ. վերջերը, որովհետեւ այդ թւականից յետոյ Սայեաթ Նովայի ոչ մի երդ գոռ յութիւն չունի։ Էկոնիճէն կարծում է, թէ խզումը կատարւած պէտք է լինի ոչ վաղ քան 1762 թ. եւ ոչ ուշ քան 1768 թ., (երբ Սայեաթ Նովան ընդունեց կուսակրօնութիւն)։ իսկ պըոՓ. Մելիքսեթքէգը ընդունում է 1762-1765 թւականները։

Թւում է թէ Մելիքսեթքէգի կարծիքը աւելի մօտ է իրականութեան։ խզումը 1762 թ. առաջ կարող չէր պատահած լինել, որովհետեւ իրակլին միայն 1761 թ. վերջերը դարձաւ միացեալ Վրաստեւել իրակլին միայն 1761 թ. վերջերը դարձաւ միացեալ Վրաս-

տանի թագաւոր, իսկ Սայեաթ Նովան վրացերէն մի շարք երգերում իրեն կոչում է Վրաստանի եւ ոչ Կախեթիայի թագաւորի սաղանդար: Միւս կողմից, 1765 թ. ուշ էլ չէր կարող պատահած լինել, որովհետեւ այդ թւականին էր, որ Սայեաթ Նովան գրի առաւ իր երգերը հոչակաւոր Դաւթարի մէջ, որ նշանակած է 1765 թ., իսկ յաջորդ 1766 թ. մէնք Սայեաթ Նովային գտնում ենք այլեւս Թիֆլիսից գուրս, իրեւ քահանայ Կախի գիւղում (այժմւայ Զաքաթալայի շրջանում): Իմ կարծիքով, ինչպէս կը տեսնենք քիչ վարը, Սայեաթ Նովան վրաց թագաւորի արքունիքից հեռացել է 1762 թւին:

Ինչպէս յիշեցինք, անյայտ են եւ խզումի պատճառները: Այդ մասին կարելի է միայն որոշ ենթադրութիւններ անել՝ հիմնելով Սայեաթ Նովայի մի քանի ակնարկների վրա եւ համեմատելով նրա կեանքի մեղ ծանօթ փաստերի հետ: Վրացերէն ոտանաւորներից մէռկում (Գրիշաշվիլի 123), որ յօրինած է արքունիքից հեռանալուց բաւական անցած, յամենայն դէպս իր կնոջ մահւանից (1768) յետոյ, Սայեաթ Նովան, կարծես յետազարձ ակնարկով, արդարութիւն է խնդրում թագաւորից եւ այսպէս է բացատրում նովումի պատճառը—
Ով Սայեաթ Նովա, դու լեզով բազմացրից քո վշտերը,
արդ՝ պատրաստ եղիր անախորժութիւնների:

Այս խօսքերից կարելի է միայն մէկ եղբակացութիւն հանել, այն, որ խզումի պատճառ եղել է բանաստեղծի ասած անզոյշ խօսքը, կամ, աւելի ճիշտ, յօրինած անզոյշ ոտանաւորը, որով նա վիրաւորել եւ անարդանք է հասցրել որեւէ բարձրաստիճան անձի: Այդ անարդանքը եղել է այնքան ծանր, եւ անարդւած անձը՝ այնքան ազդեցիկ, որ իրակլին, հակառակ մէծ համակրանքի ու բարեկամութեան բանաստեղծի հանդէպ, ստիպւած է եղել նրան անդարձ չեռացնել իր պալատից: Դրան, անշուշտ, նախատեցին եւ Սայեաթ Նովայի բազմաթիւ թշնամիները արքունիքում, որոնց մասին նա յաճախ յիշում է իր վրացերէն երգերում:

Արդ՝ ՞կ էր այդ բարձրաստիճան անձը, որին անարդանք հասցրած լինելու համար այնքան թանգ գնով վճարեց մեր բանաստեղծը: Ինձ թւում է, որ այս հարցը լուծւում է Տակայշվիլիի, ապա եւ լէռնիձէի հրատարակած այն խիստ յանդուխն պարսաւագրով, որ Սայեաթ Նովան ուղղել էր վրաց կաթուղիկոս Անտոնիոսի հասցէին: Այդ պարսաւագրի մասին մէնք արդէն խօսել ենք:^{*)}

Սայեաթ Նովան իր պարսաւագրիը յօրինել էր այն ժամանակ, երբ Անտոնիոս կաթուղիկոսական աթոռը կորցնելու վտանգի առ-

ջեւ էր գտնւում եւ ի վիճակի չէր որեւէ ձեւով հակազդելու բանաստեղծի յանդգնութեան: Եօթը տարի յետոյ, 1762 թ., շատ զրկանքներ ու նւաստացումներ կրելուց յետոյ, իրակլի չնորհիւ, Անտոնիոսը վերադարձաւ աքսորից եւ նորից գրաւեց կաթուղիկոսական աթոռը: Նա հզօր կամքի եւ ողու տէր մարդ էր եւ հազիւ թէ անպատճի թողնէր իր հակառակորդներին: Գէթ նրա ժամանակակից ների կարծիքն այլ էր: Այսպէս, հէնց որ Անտոնիոսի վերադարձի ներկայական աթոռից լուրը հակառակորդներից եւ կաթուղիկոսական աթոռից տապալելու պատճառ եղողներից մէկը, արքայական աւագերից Զաքարի Գարաչվիլին փախաւ իմերեթիս, եւ մինչեւ մահ մնաց այնտեղ: Ինձ յայտնի չէ, թէ արդեօք Անտոնիոսը պահանջեց պաշտօնանկ անել անարդական երգի հեղինակ Սայեաթ Նովային, թւում է թէ կարիք էլ չկար այդպիսի պահանջի. միայն Անտոնիոսի վերադարձի լուրը բաւական էր, որ Սայեաթ Նովայի հակառակորդները յաջողէին հեռացնել տալ նրան: Հիմք կայ կարծելու, որ բանաստեղծը ինք էլ հասկանում էր ինդըրի էութիւնը: Վեճերեւած վրացերէն յետազարձ ոտանաւորի մէջ բացատրւած է իր անկման պատճառը. «Ով Սայեաթ Նովա, դու լեզով բազմացրից քո վիշտերը, արդ՝ պատրաստ եղիր անախորժութիւնների», այսինքն՝ այժմ պէտք է հատուցանես քո առաջւայ յանդուղն արարքների համար:

Առաջ բերւած այս նկատումներով, ինձ թւում է, կարելի է ճըշտութեամբ որոշել Սայեաթ Նովայի իրակլի Բարձրագույն պաշտօնից հեռանալու պատճառն ու ժամանակը: Պատճառը՝ վրաց կաթուղիկոս Անտոնիոսին ուղղւած պարսաւերգն էր, ժամանակը՝ 1762 թ.:

Հետաքրքրական է այստեղ նշել եւ այն յեղացրծումը, որ տեղի էր ունեցել Սայեաթ Նովայի հոգում արքունական սաղանդարութեան վերջին տանամեակում: 1753 թւին, երբ տեղի ունեցաւ առաջին բախումը իրակլիի հետ, բանաստեղծը յստակ կերպով տեսնում է իր ապագան. շնորհիւ իր տաղանդի նա հետութեամբ կարող էր սաղանդարի պաշտօն գտնել մի ուրիշ արքունիքում, բայց անսահման սէրը դէպի Վրաստանն ու հովանաւորը ստիպում էին թախանագին ինդըրել իրակլիին, որ չհեռացնէ իր մօտից: Տասը տարի անցած Սայեաթ Նովան այսեւս ուրիշ բան է մտածում: Վերեւ յիշւած յետադրճութանաւորում նա ասում է.

Պահի՛ր Սայեաթ Նովային մեզ համար,
Թող մնայ նա (քէկուզ) միերի հետ ախոռում.

*) «ԸՆԿՐ», Դ. էջ 16:

Նա հոչակւած է ու մօս քեփերում,
Զի՞ երբայ ոչ խոնդքարների, ոչ խաների մօս:

Ինչպէս բացատրւած է, «Սայեաթ Նովան Դեսպան» գլխում, *) այս տողերը պէտք է հասկանալ այն մոռքով, որ Սայեաթ Նովան շատ է ցաւում իրակլի թագաւորի արքունիքը թողած մինելու համար, որ նա պատրաստ է նոյն իսկ ամենանւաստացուցիչ վիճակում ապրել արքունիքում, բայց այլեւս Վրաստանից դուրս սազանդարի պաշտօն չի պնդուի:

Ինչու է այսքան փոխւել բանաստեղծը, չգիտենք: Տարի՞քն էր արդեօք պատճառը - նա արդէն վաթուուն էր թեւակոխել - ընտանի՞քը - ամուսնացած էր եւ տէր երկու, գուցէ եւ երեք զաւակների, թէ՞ տարիքի հետ մէկ տեղ նրան սկսել էր գրաւել եկեղեցին - վագուց արդէն նրա հայերէն երգերում (3, 7, 11, 22, 36, 41 եւ այլն) նկատելի էր հետաքրքրութեան աճումը դէպի եկեղեցին, Սուրբ Գիրքն ու ինքնահայեցողութիւնը:

Յամենայն դէպս, Սայեաթ Նովան կատարեց իր խօսքը. Իրակլի արքունիքից հեռանալուց յետոյ ոչ միայն նոր հովանաւոր փընտըռելու յետեւից չեղաւ, այլեւ քաշւեց հեռացաւ բոլորովին աշխարհից:

XVI

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ՍԻՐԱՀԱՐՈՒԹԻՒՆԸ

Իր նախորդ աշուղ Նազաչ Յովնաթանի պէս, մեր բանաստեղծն էլ զերծ չէր «կանանց տարտէն»:

Ամենքին յայտնի է, որ Սայեաթ Նովան իր երգերում երեք լեզով իր գեղեցկուհի սիրականի գովքն է անում յաճախ: Սակայն ուսումնասիրողներից գրեթէ եւ ոչ մէկը ուշաղըութիւն չէր դարձրել ու չէր պարզել այս հարցը: Առաջին անգամ 1913 թ. Սայեաթ Նովայիրի փայլուն ուսումնասիրող եւ նուրբ ու հեղինակաւոր մեկնարան նեկ. Աղքալեանը չօշափեց Թիֆլիսի Հայ Գրական Ընկերութեան 6-րդ երեկոյթում արտասանած ճառի մէջ:**) Իրեն յատուկ խորութեամբ եւ ներգունութեամբ ն. Աղքալեանը, զանազան ուսանաւորնե-

*) «Վեմ» Դ. Էջ 17:

**) Ազրայինի նար երատարակած է Թիֆլիսի «Հորիզոն» թիրքի 1913 թ. № 59, 60 և 62-ում: Ես նրանից օգտվելու հնարաւորութիւն ունեցայ միայն շընորին Հ. Ն. Ակիմեանի բարեացակամ ու սիրալիր աշակցութեամ, որի համար յայտնաւ եմ իմ խորին երախտագիտութիւմը: Յ. Զ.

րում տարտղնւած նկատողութիւններից եւ ակնարկներից, վերականգնել է Սայեաթ Նովայի սիրուհու դէմքը: Աղքալեանի գծած պատկերը հետաքրքրական է եւ մեծ փայլով է ներկայացւած:

Սայեաթ Նովայի սիրուհին, ըստ երեւոյթին, ամուսնացած կին էր, պատւաւոր ընտանիքից եւ լաւ ըրջանից, երիտասարդ ու գեղեկէր, պատաւաւոր ընտանիքից եւ շքեղ հասակ: Սայեաթ Նովան նրանից տնէր մի տղայ: Յաճախ այցելում էր նրան, զրոյց էր անում հետը շատ բաների մասին, երեկոները անց էր կացնում մօտը ուրախ ու շարք, խմում էր նրա մատուցած գինին: Ամենից շատ ցանկանում էր հետ տեսնել երկուսի համար էլ սիրելի վայրերում, ուրախ ու երջանիկ հանդիպումներ ունենալ եւ երգով ու ոսկի սազի նւագով գւարձացնել իր սիրուհուն: Առանց սիրուհու՝ բանաստեղծի կեանքը կեանք չէր. նա աւելի ուրախ կը մինէր մեռնել, որովհետեւ գիտէր, կեանք չէր. նա աւելի ուրախ կը մինէր յուսահատ եւ թէ այդ գէպքում իր սիրուհին վրան լաց կը մինէր յուսահատ եւ մազերը շատ կը տար իր զաղաղի վրա: Աւա՛զ, այդ սէրը բանաստեղծին ուրախութիւն եւ բախտ չէր բերում միշտ: Լինում էին տեղծին ուրախութիւն եւ բախտ չէր բերում միշտ: Վայրկեանների, մանաւանդ սիրահարութեան վերջին տարիներին, երբ բանաստեղծը անտարբերութիւն էր նկատում սիրուհու կողմից, տեսնում էր, թէ նա այլեւս չի գնահատում իրեն, եւ այդ տանջանք էր պատճառում: Բայց այդ տանջանքները անցնում էին անմիջապէս չէր մերժանութեամբ: Այսպահ լեցունութիւնը, նոյն իսկ հին ժամանակները, երբ գէր կինը առանձնապէս յարդի էր ուրիշեւլում, չէր կարող չնկատել չափազանցւած եւ հազիւթէ նպաստէր կնոջ գեղեցկութեան:

Աղքալեանի գծած պատկերը լրիւ չէ եւ բացատրւում է մի կողմից հեղինակի գլայապաշտութեամբ: Այսպէս, նա ասում է, թէ Սայեաթ Նովայի սիրուհու «մարմնի բոլոր անդամները ներդաշնակ» էին, մինչդեռ հայերէն Դ. երգից, որից Աղքալեանը շատ է օգտաել իր պատկերը գծելու համար, տեսնում ենք, որ գեղեցկուհին եղել է բաւական գէր, թերեւս եւ գունդ ու կլոր - «բօյէմէդ չուրս մատն ավէլի լրցվիլ է զօշգ ու թիկունքը»: Այսպահ լեցունութիւնը, նոյն իսկ հին ժամանակները, երբ գէր կինը առանձնապէս յարդի էր ուրիշեւլում, չէր կարող չնկատել չափազանցւած եւ հազիւթէ նպաստէր կնոջ գեղեցկութեան:

Միւս կողմից, իր ճառը կազմելիս, Աղքալեանը կարող էր օգտաել միայն Սայեաթ Նովայի հայերէն երգերից, մինչդեռ վրացերէն երգերում շատ նիւթ կայ՝ բնորոշելու համար թէ գեղեցկուհուն եւ թէ, մանաւանդ, նրա ու բանաստեղծի փոխարարերութիւնները: Թիրութիւնը առանձնապէս նկատելի է սիրահարութեան վախճանի

վերաբերմամբ։ Սիրուհու պազելը Սայեաթ Նովայից Աղբալեանը բացատրում է նրանով, որ նա կամ սիրել է մէկ ուրիշին եւ կամ նոռից կապւել է ամուսնուն։ Վրացերէն երգերն աւելի պարզ ձեւով են ներկայացնում սիրահարութիւնն ու գեղեցկուհու հոգեկան պատեկերը եւ տալիս են վախճանի աւելի հասարակ բացատրութիւնը։ Գեղեցկուհին, ըստ երեւոյթին, եղել է մատչելի ոչ միայն Սայեաթ Նովայի, այլև ուրիշների համար էլ, եւ Սայեաթ Նովայից զատ ունեցել է եւ այլ երկպագուներ։ Բանաստեղծը իմացել է այդ եւ սասափկ տանջել իր սիրուհու անհաստատութիւնից։ Զգաստութեան վայրկեաններին բանաստեղծը ներկեր չէր խնայում եւ ամենաբաց գոյներով էր նկարագրում նրա անառակութիւնը։ Այսպէս վը-րացերէն երգերից մէկում (Գրիշաչվիլի, էջ 98) նա ասում է.

Ինչու ես պիտի նստեմ եւ ի՞նչը պիտի ողբամ,
ո՞րը իմ վշտերից .

Ինձանից զատ բաներկու ուրիշի անուն են տալիս,
այդ նիշտ է:

Մի ուրիշ բանաստեղծութեան մէջ (Գրիշ. էջ 111), աւելի վըճ-
ռական ձեւով է ասւած,

Ինչու ես այդպէս հեռանում ինձանից,
ում հետ ես կատկի :

Պէտք է կարծել, որ սիրուհու փոփոխամտութիւնն է եղել գըլ-խաւոր պատճառը խզումի Սայեաթ Նովայի եւ իր սրտի հատորի միջեւ։

Աղքալեանից յետոյ, սիրահարութեան վրա ուշադրութիւն դարձըք եւ ոռու բանաստեղծ ու Սայեաթ Նովայի թարգմանիչ Վ. Բրիւսովը, որ «Հայ Բանաստեղծութիւնը» հատորի յառաջաբանում ասում է. «Վրաց թագաւորի արքունիքում զարգացաւ եւ նշանաւոր աշուղի հիմնական սիրահարութիւնը – նրա սէլը գէպի վրաց թագաւորի դուստրը, որին ձօնւած է նրա բանաստեղծութիւնների մեծ մասը»: Եւ իր այս մտքի համաձայն, № 8 երգում («Դուն էն գլխէն իմաստուն ես») քափակուր բառը Բրիւսովը թարգմանում է «թագաւորի դուստր»: Ինչի՞ հիման վրա է նա այսպիսի ենթադրութիւն անում, մնում է բոլորովին չհիմնաւորւած: Գրիշաշվիլին, իսկ նըրանից յետոյ Մելիքսեթբեգը Բրիւսովի այս ենթադրութիւնը բացատրում են նրանով, որ նա ուրիշ անձի վերաբերմամբ կատարւած փաստը վերագրում է Սայեաթ Նովային, բայց աւելի հաւանական է, որ Բրիւսովը ինքն է հնարել այդ փաստը, կամ նրա աշխատանքը

կից Պ. Մակինցեանը : Իրականութեան մէջ նման մի դէպք յայտնի է վրաց բանաստեղծ Բէշկիի (Վիսարիոն Գաբրաչլիլի 1750-1791) վերաբերմամբ : Բէշկին առաջնակարգ բանաստեղծ էր, ժամանակառ կից Սայեաթ Նովայի, գտնել է վերջինիս ուժեղ ազդեցութեան տակ և գրել նրա հետեւողութեամբ : Այս Բէշկին ահա սիրահարութիւն է ունեցել իրակլի Բ.-ի աղջկայ հետ :

Վերջապէս, կայ եւ մի երրորդ տեսակէտ, ըստ որի Սայեաթ՝ Նովայի սիրահարութիւնը եղել է աւելի պարզ ու սովորական եւ, հաւանաբար, աւելի մօտ իրականութեան։ Այս հիմնած է մի աւանդութեան վրա, որը, իբր թէ պահաւած մնացել է Հաւաքաբի հայերի ժօմ։ Այսպէս, աշուղ Սկանդար Նովան (1850-1917), որ երգում էր հայերէն եւ, գլխաւորապէս, վրացերէն եւ մեծ հռչակ ունէր անցեալ դարու վերջին քառորդին, Սայեաթ Նովայի սիրահարութեան մասին գրում է հետեւեալը. «... զարթնի կնդան սա (Սայեաթ Նովէն) ունէր մէ սրտով սիրած աղջիկ. Նորաշնի թաղումը կէնում է էլի, մէ փոանդ (կաթոլիկ) Սոլոի աղջիկ, անումով Տափթայ, Վուրին շատ է էլի սիրելիս; շատ խաղիր ունէ նրա վրա ասած»:^{*}

Նոյն բանը ասում է եւ Գրիշաշվելին, որ Սայեաթ Նովայի սի-
բուհուն ցոյց է տալիս մի կաթոլիկ կին Տալիսա անունով - Քուք-
չու կին : Գրիշաշվելին ասում է նոյնպէս, որ մի ուրիշ աւանդու-
թեամբ Սայեաթ Նովայի սիբուհուն անունն էր Սոնա :

Աղբալեանի հաշտով, այս սիրահարութիւնն Սայեաթ Նովան ուսնեցել է 45-47 տարեկան հասակում և վերջացրել է 1759 թւին:

Այսպիսով, Սայեաթ նովայի հիմնական սիրահարութեան մասին էլ, որ այնքան՝ խորունկ ազդեցութիւն է թողել նրա ստեղծառ գործութեան վրա, մենք չունենք եւ ոչ մի ստոյդ տեղեկութիւն։ Սակայն եւ այնպէս, ով եւ եղած մնի նրա սիրոյ առարկան՝ սիրուն ու սիրաճեմ գեղեցկուհի, թէ տգեղ ու հաստ մի արարած, մեծ բարոյականութեան տիպար, թէ սովորական թեթեւ վարք ու բարքի տէր մի կին, էականը այն է, որ բանաստեղծք նրա մէջ շատ հրապոյըներ է գտել. նա եղել է Սայեաթ նովայի համար ներշնչման աղքիւր եւ մեծ ազդեցութիւն է արել նրա ստեղծագործութեան վրա։ Թէրեւս միայն այդ սիրահարութեան չնորհիւ է, որ բանաստեղծը տւել է իր խորքով ու ձեռով ամենէն խորունկ ու կատարեալ ստեղծագործութիւնները։

^{*)} Դ. Սկանդար-Նովայ, «Սայեաբ ՚Նովայի շուրջը», Հովիտ, 1913 թ. 15 էջ 231:

XVII

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՆ ՀՈԳԵԽՈՐԱԿԱՆ

Դեռ 1852 թ. Ախվերդեանի կազմած կենսագրութեան հիման վրա ստեղծել է մի տեսակէտ, ըստ որի Սայեաթ Նովան իրակլիի արքունիքից հեռանալուց յետոյ, մի քանի տարի ապրել է հասարակական կեանքից հեռու, իսկ 1768 թ. յետոյ, երբ մեռաւ նրա կինը, քաշւեց Հախապատի վանքը եւ ձեռնադրւեց կուսակրօն։ Հետագային ստացաւ վարդապետի աստիճան և այդպէս էլ մնաց մինչեւ մահ։ Սայեաթ Նովայի վանական կեանքի մասին Ախվերդեանը ոչ մի տեղեկութիւն չի ունեցել եւ առաջ է բերում միայն իր ժամանակները Թիֆլիսում շրջան անող մի զրոյց, ըստ որի բանաստեղծը կուսակը րօնի սքեմի տակ էլ պահել է սէրը դէպի երգը, քամանչան ու մէջ լիները։ Պատմում էր, որ ամէն անդամ երը Հախապատից Թիֆլիս էր զալիս եւ լսում էր հոչակ ստացած մի նոր աշուղի մասին, ծըդտրւած հագուստով եւ քեամանչան ձեռքին զնում էր մէջլիս եւ բաս բոնում նոր երգչի հետ՝ միշտ յաղթական դուրս գալով այդ պարքարից։ Սակայն, ինքը Ախվերդեանը այդ աւանդութեան չի հաւատում եւ իր պատմութիւնը վերջացնում է հետեւեալ խօսքերով։ «Բայց էս զրոյցին է սրան նման զուարձ Թիֆլիդեցոց մտաց ցնորքն իսկի հաւատալու բան չեն, էնդուր որ մեր մեջօք հնացեալ կրօնաւորն կուլէր կացնում կեանքն իր վաղեմի մէղքերու՝ աղօթքով ու պաս պահելով քավելումն»։

Քիչ յետոյ կը տեսնենք, թէ որքան ճիշտ է Ախվերդեանի ենթադրութիւնը։

Թէ հայ եւ թէ վրաց գրականութեան մէջ մենք դունում ենք ուրշ տեղեկութիւններ Սայեաթ Նովայի կեանքի մասին արքունիքից հեռանալուց յետոյ մինչեւ վանք մտնելը։ Այսպէս, պրոֆ. Տակայշվիլի առաջ է բերում Սայեաթ Նովայի վրացերէն մի մուխամբազի սկիզբ (տպւած Գրիշաշվիլի գրքում, էջ 107), որին կցւած է հետեւեալ գրութիւնը, որ էշոնիձէն (էջ 27) վերադրում է իշխանազն Թիյմուրազին։ «Սայեաթ Նովայի ասած մուխամբազը։ Նա առաջ հայ տէրտէր էր, ապա երբ մտաւ վանք, յօրինեց (այս մուխամբազը)։

Այս տեղեկութիւնը Սայեաթ Նովայի վերաբերող հայերէն դըրականութեան մէջ մնացել էր բոլորովին աննկատելի եւ առաջին անդամ նրա վրա ուշադրութիւն դարձրեց Գրիշաշվիլին։

Յետոյ, 1905-1906 թ. Հրաչեայ Աճառեանը Թաւրիզում դտած

ձեռագրի նկարագրութեան մէջ*) առաջ է բերում ձեռագրի հետեւեալ կտորը։ «Ստեփաննոս քահանա գրիչ Թիֆլիսեցի, որդի Կարապետի, մականուն Սայեաթ Նովայ, էջ 97 ար»։

Ճը. Աճառեանը լաւ էր հասկացել թէ ով էր այդ Ստեփաննոս քահանան։ Մի բան, որ շատ էլ գժւար չէր նրա համար, որովհետք ստեւ զեռ երեք տարի առաջ նա, Յ.Մանանդեանի հետ միասին, հրատարակել էր Սայեաթ Նովայի «վարքը» : **) Բայց նրա այս յայտնագործութիւնը բոլորովին վրիակց Սայեաթ Նովայով հետաքրքրութեան ու միայն առելի քան քամա տարի յետոյ նուների ուշադրութիւնից, եւ միայն առելի քան քամա տարի յետոյ նուների ուշադրութիւնը բարձնելով հասարակութիւն ընդհանուր սեփականութիւն : ***)

Մի ուրիշ ապացոյց էկ կայ, որ Սայեաթ Նովան իր հոգեւորական ասպարէվը սկսեց քահանայութիւնից։ Վրաց գրականութեան կան կապարէվը սկսեց քահանայութիւնից : Վրաց գրականութեան կան մէջ գոյութիւն ունի «Կալմասորա» : ****) անունով մի գիրք, որի մէջ մէջ գոյութիւն ունի «Կալմասորա» : Այդ գիրքում Սայեաթ Նովան գանգատւում է իր ճակատագրի եւ իրեն բաժին հասած գժրախառութիւնների վրա եւ, ի մէջի այլոց, ասում է։

Ես եղել եմ աշխարհական, ինչի՞ս եր հարկաւոր քահանայութիւնը։

Վերջապէս մի վերջին վկայութիւն նոյն հարցի մասին, որի գիրտի պատկերը գարձեալ պատկանում է Մելիքսեմբէգին (էջ 88-89)։ Սայեաթ Նովայի հայերէն երգերի հիմնական Դաւթարը 1852 թ. ստացին հետազոտութիւնից յետոյ Գ. Ախվերդեանի կողմից, այնուհետեւ մի քանի անգամներ քննութեան առարկայ են գարձել վրաց վերջին պայմանի փայլուն հեղինակութիւններ, ինչպէս ինքը Ախվերդեկը պայմանի փայլուն հեղինակութիւններ, Գրիշաշվիլին, Գէորգ Ասամուրը եւ մեր օրերի սադանդար Սաշա Օդանէզաշվիլին։ Նրանք բոլորն ել երկարօրէն ուսումնասիւմանը Օդանէզաշվիլին։

*) «Համբէս Ամսօրեայ» 1907 թ.։ 1910-ին լոյս տեսաւ առանձին գրքով։ 97 էջի վրա նկարագրած է խնդրոյ առարկայ ձեռագիրը № 32։

**) Յ.Մանանդեան եւ Հ.Անանեան. «Նոր վկայք Հայոց», Վարդաշապտ, 1903։

***) Տես Սայեաթ Նովայի երկերի վերջին հրատարակութիւնը, Երեւան, 1931։

****) «Կալմասորա»-ն գրւած է 19-րդ դարի առաջին ժամունական կումբ կրացի հոգեւորական իոնա Խելաշվիլի 1800-1801 թ. կալմաս հաւաքելու նպատակով վրաստանում կատարած նամբորդութեան նկարագրութիւնը։ Գրքում կան նետաքրեական տեղեկութիւններ վրացիների եւ հայերի 19-րդ դարասկզբի մասին։ Խելաշվիլին խօսում է եւ Սայեաթ Նովայի մասին։ Մենի յոյս ունեմ «Վէմ»-ում այս գործին մեիրել մի առանձին յօդած։

բել են այդ Դաւթարը, կարդացել ու քննել բազմաթիւ անգամներ, և հակառակ դրան նրանց ուշադրութիւնից խուսափել են Դաւթարի լուսանցքի վրա արւած երկու մակագրութիւններ, որոնք թէեւ ժառմանակակից են Դաւթարին, բայց կատարւած են ուրիշի ձեռքով։ Միայն Մելիքսեթրէդը ուշադրութիւն դարձրեց այդ գրութիւնների վրա եւ առաջ բերեց իրեւ Սայեաթ Նովայի կենսագրական նիւթ։ Ահա այդ մակագրութիւնները, որոնք գրւած են վրացերէն տառերով, բայց թիֆլիսահայ բարբառով։

1) «Քրիստոս, թող Տէրը բարերախտ պահէ Տէր Ստեփանին, թող նա կարդայ ինք այս Դաւթարը եւ (անկատար) չթողնէ այս խնդիրքը, եւ սրանով ինք ծառայութիւն մատուցած կը լինի»։

2) «Քրիստոս, թող Տէր Ստեփանն բարերախտ մնայ եւ կարդայ ինք այս գիրքը ի ողջութիւն իր զաւակների։ Թող իմ խնդրանոքը (անկատար) չմնայ եւ թող նա ծառայութիւն մատուցած ինք, մեղաւորին։ Ամէն»։


Բացի կենսագրական տեսակէտից, այս գրութիւնները չափանց հետաքրքրական են եւ որպէս կենցաղական փաստ։ նրանք ցոյց են տալիս այն վառ հետաքրքրութիւնը, որ կար գէպի Սայեաթ Նովայի երգերը։ Բայց երեւոյթին, մակագրութեան հեղինակին յայտնի էր, որ Սայեաթ Նովան իր քահանայութեան վայրից Թիֆլիս գալիս մտերիմների շրջանում երգում էր իր երգերը, ուստի ինքն էլ յոյս է յայտնում լսել նրա երգը։

Որ Սայեաթ Նովան իր մօտիկ բարեկամներին երգում էր նոյն իսկ արդէն առաջացած տարեքում, երեւում է եւ «կալմասոբա»-յի հեղինակի ցուցմունքներից։ Ուստի, ինձ թուում է, բոլորովին ճշմարիտ է Սխմերդեանի թերահաւատութեամբ առաջ բերած զո՞յցը, թէ Սայեաթ Նովան հոգեւորական կոչում ստանալուց յետոյ էլ մասնակցում էր աշուղների մրցութիւններին։

Այս բոլորից յետոյ, կասկած չի մնում, որ 1762 թ. վրաց արքունիքը թողնելուց յետոյ, Սայեաթ Նովան ընդունից քահանայական կոչում եւ դարձաւ ծխատէր քահանայ կախի գիւղում։ 1768 թ. այրիանալուց յետոյ, ըստ հայ հոգեւորականութեան մէջ այն ժամանակները տիրող սովորութեան, ճեռնագրեւ կուսակրոն եւ մտաւ Հախպատի վանքը, ուր եւ մնաց մինչեւ մահ, վարդապետի աստիւնով։

Փարիզ,

(Վերջը յաջորդ անգամ)



ԶՕՐ. Գ. ՂՈՐՂԱՆԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I

ԲՐԵՍՏ - ԼԻՑՈՎՍԿԻՑ ՄԻՆՉԵՒ ՍԵՒԲ

Հոկտեմբերեան յեղացրջման հետեւանքով նախկին ուռուսական կայսրութեան հողերի վրա կազմւեցին մի շարք նոր պետութիւններ, որոնց թւում եւ Անդրկովկասեան Հանրապետութիւնը։

Սակայն, մի կողմից անյաջող պատերազմը թիւրքիայի հետ, որ Անդրկովկասեան սովորված եղանակը մողովների շահագույն էր կողմից յետոյ, միւս կողմից Անդրկովկասեան ժողովրդների շահերի ու ձըդտումների ներհակութիւնը, վերջապէս, թիւրքիայի ճնշումները տուրունի կեանքի կոչւած Հայաստանի Հանրապետութիւնն էլ ձգտէր պատճառ դարձան, որ Անդրկովկասեան Հանրապետութիւնը, Հազիր երկու ամսաւայ կեանքից յետոյ, քայլութիւնը 1918 թ. մայիս 26-ին անկախութիւն յայտարարեց Վրաստանը, իսկ 28-ին՝ Աղբէջանն ու Հայաստանը։

1918 թ. նոյեմբ. 11-ի ընդհանուր զինադադարից յետոյ, Փարիզում գումարեւած Հաշտութեան Վեհաժողովը պէտք է լուծէր պատերազմի հետ կապւած բոլոր հարցերը։ Բնական է, որ ազգային ինքնուրոյն կեանքի կոչւած Հայաստանի Հանրապետութիւնն էլ ձգտէր պատճառ դարձան իր զոյցութիւնը հայտնի էր թիւրքական տիրապետութիւնից։

ՀԱՅՏՈՒԹԵՍՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ - Այդ նպատակով ահա Հայաստանի Հանրապետութիւնը Եւրոպա ուղարկեց մի պատւիրակութիւն Ա. Ահարոնեանի նախագահութեամբ։ Պատւիրակութիւնը Փարիզ հասաւ 1919 թ. փետր. 4-ին եւ անմիջապէս սերտ դործակցութեան մէջ մտաւ Աղբային Պատւիրակութեան հետ։ Այս վերջինս, Պողոս Նուպար փաշային նախագահութեամբ, դեռ 1918 թ. նոյեմբ. 30-ին

Դաշնակիցներին հաղորդել էր Միացեալ Հայաստանի անկախ պետութեան ստեղծման մասին :

Նախնական լուրջ աշխատանքից յետոյ, Պատրիակութիւնները եկան կատարեալ համաձայնութեան եւ 1919 փետր. 2-ին Հայութեան Վեհաժողովին ներկայացրին հայկական բաղձանքները արտայացող ընդարձակ մի յուշագիր՝ «Հայկական Հարցը Հաշտութեան Վեհաժողովի առջև»։ Յուշագիրը Վեհաժողովից պահանջում էր՝ ճանաչել Հայաստանի անկախ պետութիւնը՝ բաղկացած Կոթը վիլայէթներից, Կիլիկիայից եւ Կովկասեան հայկական Հանրապետութիւնից։

Եօթը վիլայէթներից պէտք է դուրս ձգւէին Տիգրիսից հարաւ եւ Օրբու-Սրբակ գծից դէպի արեւմուտք դանւող հողամասերը։ Գալով Կիլիկիային՝ Հայաստանի սահմանների մէջ պէտք է մտնէին Մարաշի, Կողանի, Ջէրէ Բէրէքէթի եւ Աղանայի սանջակներն ու Ալեքսանդրէթ նաւահանգիստը։ Իսկ Կովկասեան հայկական Հանրապետութիւնն իր մէջ ընդգրկելու էր նախկին Երեւանի նահանգը, Թիֆլիսի նահանգի հարաւային մասը, Գանձակի նահանգի հարաւարեւմեան մասը եւ Կարսի նահանգը առանց Արդահանից դէպի հիւսիս ընկած մասերի։

Յուշագիրը ցոյց էր տալիս, որ այս ձեւով կազմւած Հայկական պետութիւնը պէտք է դրսի Դաշնակից պետութիւնների եւ Հիւս. Ամերիկայի Միացեալ Նահանգների հաւաքական հովանաւորութեան և կամ Ազգ. Դաշնակցութեան պահպանութեան ներքոյ։ Միաժամանակ ինդուստ էր Հայաստանն էլ ընդունել Ազգ. Դաշնակցութեան կազմի մէջ։ Հաշտութեան Վեհաժողովը պէտք է հոգաստարութեան դրուժ յանձնէր պետութիւններից մէկին, որը, փոխանցման ըրջանում, 20 տարուց ոչ աւելի, աջակցութիւն պիտի ցոյց տար Հայաստանին։ Հոգաստար պետութեան ընտրութեան ժամանակ պէտք է լուէր եւ Փարիզում հաւաքւած հայկական համագումարի կամքը։

Թւելով այս գլխաւոր պահանջները ի մասին Հայաստանի միջազգային դրութեան եւ սահմանների՝ յուշագիրը դնում էր եւ Հատուցումների պահանջը Թիւրքիայից՝ կատարեած տեղահանութիւնների, կոսորածների, բնադրաւումների եւ հայ ազգի կրած ամէն տեսակ զրկանքների համար։ Հատուցումների ինդիրը պէտք է որոշւէր Հաշտութեան Վեհաժողովում, եւ Հայաստանը պէտք է սուանձնէր Օսմաննեան պարտքի մի մասի վճարումը։

Հայկական ազգային եւ մասնաւոր լքեալ գոյքերը Թիւրքիայում

պէտք է յանձնէին Պոլսի հայոց հոգեւոր իշխանութիւններին եւ գործադրուէին հանրային կարիքների վրա։

Հոգաստարութիւնը ստացած պետութիւնը պարտաւորում էր՝ հարկադրել հայկական հողամասերը զրաւող թիւրքական, թաթարական եւ այլ իշխանութիւններին մաքրել այդ հողերը, ընդհանուր վինաթափութեան ենթարկել բնակիչներին, արտաքսել ու պատժել սոլոր նրանց, ովքեր մասնակցել էին ջարդերին, բռնութիւններին ու թալաններին, այլեւ հեռացնել բոլոր հանրային անդորրութիւնը խանդարող տարրերը, Արդուլ-Համմիդի եւ իթթիհատականների իշխանդարութիւնը արդիական կամաց առողջ հարացած մուհաջիրներին, եւ, վերջապէս, թէ Հայաստանի ներսը եւ թէ դուրսը միջոցներ ձեռք առնել հայկական կրօնին վերապարձնելու համար բռնի իսլամացւած աղջիկներին ու երեխաններին եւ հարէմներից աղասել հայ կանանց, աղջիկներին ու վերապարձնէր հայերից յափշտակւած եկեղեցիները։

Այս բոլորից զատ, Թիւրքիան պէտք է հայերին վճարէ պատերազմի ժամանակ բռնութեամբ զրաւում զոյքերի, ինչպէս եւ թիւրքական հողերի վրա մասնական ստացւածքների փոխարժէքը, այլեւ վերապարձնէր հայերից յափշտակւած եկեղեցիները, զանգերը, վահկերը՝ իրենց բոլոր հիմնարկութիւններով ու հողերով։

Հայկական ծագում ունեցող եւ ուրիշ երկիր ապրող բոլոր հայերը, անկախ նրանից թէ այդ երկների հպատակութիւնն ընդունել են թէ ոչ, իրաւունք պէտք է ունենային հինգ տարւայ ընթացքում ընդունել Հայաստանի հպատակութիւնը։

Հոգաստարութիւն ինդրէելով՝ պատիրակութիւնները գլխաւորապէտ աչքի առաջ ունէին այն նկատումը, որ առանց արտաքին ուժի աջակցութեան անհնար կը լինի Թիւրքահայաստանում լուծել պատերազմից բխող եւ յուշագրում մանրամասնօրէն յիշւած բոլոր իւրնդիրները։

Միւս կողմից, Հաշտութեան Վեհաժողովն էլ դեռ 1919 թ. յուն. 30-ին, ուրեմն, մինչեւ հայկական յուշագրի ստացումը, որոշել էր աղասել Հայաստանը եւ հոգաստար նշանակել Ազգերի Դաշնակցութեան Ռւխտի 22-րդ կէտի համաձայն։

Ռւխտի 22-րդ կէտը, որ վերաբերում է միջազգային հոգաստարութիւնների (մանգատ) հարցին, ասում էր, թէ բարեկեցւաթիւնն ու զարգացումը այն ժողովուրդների, որոնք բնակում են պատերազմը վերջանալուց յետոյ մինչեւ պատերազմ տիրող պետութեանց գերիշխանութիւնից դուրս եկած հողերի վրա, եւ որոնք գե-

ընդունակ չեն իրենց կառավարելու, կազմում է քաղաքակրթութեան սրբազն պարտականութիւնը։ Եւ այս դէպքում, հոգաստարութիւնը նման ժողովրդի վրա յանուն Ազգերի Դաշնակցութեան պէտք է յանձնւի բարձր մշակոյթի տէր մի ազգի։

Ուստի առանձնապէս ընդգծում է, որ նման դրութեան մէջ ևն զտնւում այն համայնքները, որոնք մտնում են Օսմանեան կայսրութեան կազմի մէջ եւ արդէն հասել են այնպիսի զարգացման, որ կարող են ճանաչել անկախ, պայմանով միայն, որ հոգաստարութիւնն ստանձնած պետութիւնները վարեն նրանց վարչութիւնը, մինչեւ որ ճանաչւի նրանց կառավարելու կարողութիւնը։

Համայնքի կարծիքը պէտք է ի նկատի առնւէր հոգաստար պետութեան ընտրութեան ժամանակ։

Թիւրքահայաստանի պատութիւնը եւ հոգաստարութեան հարցը սկզբունքով որոշելուց յետոյ, Հաշտութեան վեհաժողովը պէտք է գործնական վճիռ արձակէր ընտրութեանը մասին այն պետութեան, որ կը համապատասխանէր պահանջւած պայմաններին եւ կը կամենար ստանձնել այդ հոգաստարութիւնը։ 1919 թ. մարտ 20-ին Զորսերի Խորհուրդը, նախագահ Վիլսոնի նախաձեռնութեամբ, որոշեց Մերձաւոր Արեւելք ուղարկել Միացեալ Նահանգների, Ֆրանսայի, Անդլիայի եւ Խոտալիայի պատրիակութիւններից բաղկացած միջազգային մի յանձնախումբ՝ հաւաքելու համար տեղեկութիւններ Օսմանեան կայսրութիւնից անջատւելիք հողամասի վրա ապրող աղքարնակութեան կարիքների մասին։

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊԱՏԻՒՐԱԿՆԵՐԻ ՀԱՐՑԱՔՆՍՈՒԹԻՒՆԸ. — Այդ յանձնախումբը փաստօրէն երեք էլ չհաւաքւեց։ Միայն ամերիկեան պատրիակներ Քինգը (King) եւ Քրէյնը (Crane) հարցաքնութիւն կատարեցին 1919 թ. յունիս 10-ից մինչեւ յուլիս 21։ Նրանք եկան այն եղրակացութեան, որ նախկին Օսմանեան կայսրութիւնից պէտք է կաղմւի երեք նոր քաղաքական միաւոր՝ Հայաստան, միջազգային պետութիւն Պոլսում եւ Թիւրքիա։ Այդ երկրներից իւրաքանչիւրի հոգաստարութիւնը պէտք է յանձնւի որեւէ պետութեան։ Թէ այս մասնաւոր հոգաստարութիւնները եւ թէ ընդհանուր հոգաստարութիւնը բոլոր երեքի վրա պէտք է յանձնւի մէկ պետութեան։ Առանձնապէս դժւար է Հայաստանի հոգաստարութեան իրականացումը։ Պէտք է մի նոր պետութիւն կազմել շրջապատի ընդհանուր թշշնամական վերաբերումի մէջ։ Ուստի անհրաժեշտ է, որ Հայաստանի հոգաստարութիւնը ստանձնած պետութեան ճիգերը չչէզոքացւին ուրիշ պետութիւնների գործերով Փոքր Ասիայում։ Եւրոպական զա-

նազան պետութիւնների նպատակներն ու ձգտումները Փոքր Ասիայում այնքան ներհակ են, որ բոլորովին անխոհնեմութիւն կը լինի հոգաստարութեանց յանձնումը տարբեր իդէալներ եւ կառավարութեան տարբեր եղանակներ ունեցող պետութիւններին։ Եթէ այս թիւրքիան (Հայաստանը չհաշւած) բաժանելի ազգեալայմաններում թիւրքիան (Հայաստանը չհաշւած) բաժանելի ազգեալայմանների պահանջարկների արդելքների։

Հիմնաւորելով նախկին Օսմանեան կայսրութեան տեղը ստեղծ ծրւած պետութիւնների մասնաւոր եւ ընդհանուր հոգաստարութիւնը մէկ պետութեան յանձննելու միտքը՝ քննիչ պատգամաւորները եկան այն եղրակացութեան, որ այդ հոգաստարութիւնը պէտք է ստանձնէ այլ կամաց պահանջարկներին, որը բոլոր պետութիւններից ամենէն յարմարն է ստանձնու համար Պոլսի հոգաստարութիւնը, որովհետեւ հոգային եւ ուղղմագիտական շահեր չունի այնտեղ եւ չերմ համակրանքով է վերաբերում նման պետութեան նպատակներին։

Պատգամաւորների կարծիքով Փոքր Ասիայի ժողովուրդների բարձանքն է, որ Միացեալ Նահանգներն առնեն հոգաստարութիւնը։ Այդ ժողովուրդները խորունկ համակրանքով են վերաբերում Ամերիկային և Հայաստանը իւրիւրի կամողական առաջնորդութիւնը պարձր դերին։ Որպէսզի Ազգի Պահանջարկը կարողանայ հասնել առաջադրուած մի զի Ազգի Պահանջարկը կարողանայ հասնել առաջադրուած մի շարք հարցերի լուծման, անհրաժեշտ է, որ նրա մէջ մտնող բոլոր պետութիւնները ստանձնեն պատասխանատուութիւն։

Հոգաստարութեան հակառակ խօսում է նախ նիւթական խոչըրծախսերի անհրաժեշտութիւնը, երկրորդ՝ մեղադրանքը աշխարհական դիտարութիւնների մէջ։

Հոգաստարութիւնը ընդունելու պարագային Միացեալ Նահանգները նախօրօք պէտք է համոզվին, ա. որ այդ հոգաստարութիւնը ցանկալի է Թիւրքիրին եւ որ նրանք ոչ միայն պատրաստ են Հայկական պետութեան կազմութեան համար հող տրամադրել, այլեւ իւրաքանչիւրի հայերի վերաբարձը այնտեղ. բ. որ Թուսաստանը հրաժարւի իր բոլոր յաւակնութիւններից կովկասեան Հայաստանի նըկատմամբ, եւ գ. որ Դաշնակիցները հրաժարելին աղղեցութեան շըրջաններից։

Այս քննական հետազոտութիւնից քիչ առաջ էր, 1919 թ. մայիս

28-ին, որ Երեւանի կառավարութիւնը յայտարարեց Միացեալ Հայաստանի անկախութիւնը:

Զօր. ՀԱՅԻՌԴՐԴԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ — իրեւ լրացում Քինդի եւ Քրէյնի կատարած քննութեան, նախագահ Վիլսընը Հայաստան ուղարկեց մի նոր առաքելութիւն զօրավար Ջէյմս Հարբորդի զեկավարութեան տակ: Զօր. Հարբորդի եղանակցութիւններն ու միտքերըն էլ զուգաղիպեցին Քինդի ու Քրէյնի եղանակցութիւններին: Հարբորդը կարծում էր, որ ընդհանուր հոգատարութիւնն իր մէջ պէտք է առնէ եւ Անդրկովկասը եւ որ անկախ Հայաստանի ստեղծման համար անհրաժեշտ է զինուրական մէծ ուժեր մտցնել Հայաստան: Զօր. Հարբորդը գտնում էր, որ Հայաստանի հոգատարութեան ստանձնումը Ամերիկայի կողմից անհրաժեշտ է՝ վերջ տալու համար քրիստոնեաների նկատմամբ դործող զաղանութիւններին: Բացի այդ, Միացեալ Նահանգները, իրեւ Ազգերի Դաշնակցութեան հիմնադրութեան նախաձեռնող, չպէտք է խուսափեն իրենց վրա դրուղ պատասխանատութիւնից: Միեւնոյն ժամանակ նա ցոյց էր տալիս, որ հոգատարութեան ստանձնումը կարող է պատճառ դառնալ, որ Միացեալ Նահանգները միրճակին եւրոպական քաղաքականութեան մէջ եւ Հարկադրւին ուժեղացնել Միացեալ Նահանգների բանակն ու նաւատորմիղը, որպէսզի կարողանան ապահովել անարգել հաղորդակցութիւնը Պոլսի հետ:

Հոգատարութեան ստանձնումը զօր. Հարբորդը պարմանաւորում էր հետեւեալ պահանջներով. բացարձակ հակակչու Միացեալ Նահանգների կողմից Թիւրքիայի արտաքին յարաբերութիւնների վրա. բացառիկ առանձնաշնորհումներ պարունակող մենաշնորհների վերաբնութիւն. Ծնծել դեռ չչահագործուղ մենաշնորհները. Ծնծել որոշ նպատակների յատկացուղ հասոյթներ նշանակելու դրութիւնը. Ծնծել կիրառող հակակչուը Թիւրքիայի ելեւմուտքի վրա:

Միեւնոյն ժամանակ, Գերագոյն Խորհրդում (*Conseil Suprême*) քննում էր Հայաստանի հոգատարութիւնը այս կամ այն պետութեան յանձնելու խնդիրը, բայց, դժւարութիւնները աչքի առաջ ունենալով, ոչ մի սկզբութիւն չկամեցաւ պատասխանատուութիւն ըստանձնել եւ բոլոր յոյսերը մնացին միայն Հիւս. Ամեր. Միացեալ Նահանգների վրա:

Իրենց հերթին Հայաստանի Հանրապետութեան եւ Ազգային պատուիրակութիւններն էլ նոյն խնդրի առթիւ պաշտօնական բանակցութիւններ էին վարում պետութիւնների ներկայացնեցիների հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՋՈՒՄԸ — Մինչ այս, մինչ

այն, 1920 թ. վերջերը Գերագոյն Խորհրդում և Դաշնակից մեծ պետութիւնները ճանաչեցին Հայաստանի կառավարութիւնը իրեւ իւրական — *de facto* — կառավարութիւն:

1920 թ. յունաւր 27-ին, Հաշտութեան Վեհաժողովի քարտուղարութիւնը Հաղորդեց Հայաստանի Հանրապետութեան պատիրակութիւնն նախագահին, թէ 1920 թ. յունաւր 19-ի նիստում Գերագոյն Խորհրդութիւնը հանել է հետեւեալ երկու որոշումը:

1) «Որ Հայկական պետութեան կառավարութիւնը ճանաչւած է իրեւ *de fait* (իրական) կառավարութիւն»:

2) «Որ այս ճանաչումը չի նախորշում այդ պետութեան ապագայ սահմանների հարցը»:

Վեհաժողովի քարտուղարութիւնն աւելցնում էր նաև, թէ Միացեալ Նահանգների գեսապահը յունաւր 26-ին հաղորդել է, «որ ամերիկան կառավարութիւնը միանում է այդ որոշման»:

1920 յունաւր 28-ին Վեհաժողովի քարտուղարութիւնը տեղեկացրեց Հ. Հ. Պատուիրակութեան, որ Գերագոյն Խորհրդի որոշման նման որոշում հանել են եւ ֆրանսայի, Մեծն Բրիտանիայի ու Իտալիայի կառավարութեանց պետերը:

Վեհաժողովի քարտուղարութեան այս հաղորդադրութեան 1920 մարտ 7-ին յաջորդեց մի նոր հաղորդագրութիւն Ճապոնական դեսպանի յայտարարութեան մասին, թէ՝ «Ճապոնական կառավարութիւնը միանում է այն որոշման, որով Մեծն Բրիտանիայի, Ֆրանսայի եւ Իտալիայի կառավարութիւնները ճանաչել են Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը իրեւ *de fait* կառավարութիւն»:

ԼՈՒԴՐԵՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՐԾ. — Այս *de fait* ճանաչման յաջորդեցին մի շարք խորհրդակցութիւններ մշակելու համար Թիւրքիային ներկայացնելիք հաշտութեան պայմանները: Հայկական երկու պատուիրակութիւններն էլ մասնակցեցին Լոնդոնի խորհրդաժողովի աշխատանքներին 1920 թ. վերտար եւ մարտ ամիսներին:

Հայաստանի սահմանների ինդրում բացայտ կերպով յայտնի զարձաւ, որ պետութիւնները չեն կամ ենում ընդունել Հայկական դոյց պատուիրակութիւնների 1919 թ. վետր. 12-ին ներկայացրած յուշագրի պայմանները. այդ պատճառով Պատուիրակութիւնները բաւականացան սոսկ բաղձանք յայտնելով, որ Հայաստանի մէջ մըսցը լուսականի, Բիթլիսի, Կարսոյ վիլայէթների հայկական մասերը՝ ելքով դէպի ծով Տրապիզոնի վիլայէթում, իսկ Կիլիկիայից կազմւի ինքնավար մի շրջան:

ՀՐԴԱԾԱՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻԲԼ. Խորհրդաժողովին ներկայացրած գրութիւնների մէջ, պատրիարքութիւնները, շարունակելով պաշտպանի Հայաստանի հոգատարութիւնը պետութիւններից մէկին յանձնելու պահանջը, ցոյց էին տալիս եւ հոգատարութեան պայմաններն ու տեսողութեան շրջանը։ Միաժամանակ քննում էին ելեւմտական բնոյթ հրող հարցեցը, ինչպէս Օսմաննեան պարտքի մի մասը Հայաստանին փոխանցելու միտքը։

Պետութիւններից եւ ոչ մէկը, սակայն, չհամաձայնեց ընդունել Հայաստանի հոգատարութիւնը։ Միացեալ Նահանգների կառավարութիւնը, հակա ակ կամացած կրինակի հետազոտութեան, դեռ մնում էր լրու, եւ Գերազոյն Խորհրդադը անհամաժշտ համարելու Հայաստանի վերաբերմամբ կիրառել Ազգ Դաշնակցութեան Ռւխտու 22-րդ կէսը, կորդ Քըրպընի (32) մարտ 12 ահուագրով, առաջարկեց Աղ։ Դաշնակցութեան Խորհրդին իր վրա առնել անկախ Հայաստանի պաշտպանութիւնը։

Քննելով այս առաջարկութիւնը, Ազգ. Դաշնակցութեան Խորհրդից, 1920 թ. ապր. 11-ին Գերազոյն Խորհրդին ուղղեց մի յուշադիր, որով հաստատում էր, թէ ինքը անկախ Հայկական Պետութեան ստեղծումը համարում է մարդկութեան պարտականութիւնը։ Բայց եւ այնպէս, հնարաւոր չի գտնում հոգատարութեան ստանձնումը, որովհետեւ Խորհրդը պետութիւն չէ, նա իր տրամադրութեան տակ ոչ զօրք ունի եւ ոչ նիւթական միջոցներ։ Ռւխտի 22-րդ կէտը չի նախատեսնում որեւէ դէպք, երբ Խորհրդը կարող է իր վրա առնել մի երկրի հոգատարութիւնը։ Ընդհակառակը, Ռւխտը Խորհրդին հրորհանդում է հսկել պետութիւնների վրա, որ սրանք գործադրեն հոգատարութեան պայմանները Օսմաննեան կայսրութեան նախկին մասերի վրա։ Այս պատճառով Խորհրդը գտնում է անհրաժեշտ, որ Ազգ. Դաշնակցութեան անդամ պետութիւններից մէկը ստանձնէ հոգատարութիւնը՝ Ազգ. Դաշնակցութեան հակացը ներքոյ եւ բարոյական աջակցութեամբ։ Ազգ. Դաշնակցութեան Խորհրդը այդ առթիւ պատրաստակամութիւն էր յայտնում պաշտօնական բանակցութիւններ սկսելու պետութիւնների հետ, բայց նախ քան այդ կամենում էր գիտենալ, թէ արդեօք Գերազոյն Խորհրդը համաձա՞յն է Հայաստանի Հանրապետութեան տրամադրել պահանջւած նիւթական միջոցները եւ կամ ժամանակաւոր դրամական երաշխառութիւններ։ Քանի որ Հայաստանի հողերի մէծ մասը դրաւած էր Օսմաննեան բանակի կողմէց, Խորհրդը կամենում էր իմանալ, թէ արդեօք դաշնակցից պետութիւնները համաձա՞յն են ի հարկին ապա-

հովել Հայաստանին յատկացւած Օսմաննան հողերի վախանցումը Հայաստանի Հանրապետութեան, եւ արդեօք Գերազոյն Խորհրդը համաձա՞յն է պաշտպանել Հայաստանի հողերը մինչեւ այն վայրկեանը, երբ այլեւս այլ միջոցներով կարելի կը լինի իրականացընել այդ պահանջութիւնը, եւ, վերջապէս, Թիւրքիայի հետ կնքելիք յառաջիկայ հաշտութեան դաշնագրով Հայաստանին ծովային ելք տրելո՞ւ է, թէ ոչ։ Եթէ հոգատար պետութիւն չգտնէր, Ազգ. Դաշնակցութեան Խորհրդը պատրաստակամութիւն էր յայտնում Գերազոյն Խորհրդի հետ միասին քննութեան առնել, թէ արդեօք ուրիշ իրական միջոցներ չկա՞ն Հայաստանի պաշտպանութեան համար։

Այս յուշադրին Ազգ. Դաշնակցութեան Խորհրդը պատասխան չստացաւ Գերազոյն Խորհրդից։

ՍԱՆ-ՌԵՄՈՒ ԽՈՐՀԲԴԱԾՈՂԱՎՀ. Ազգ. Դաշնակցութեան Խորհրդի այս դիմումը զուգազիպեց Սան-Ռէմօի խորհրդաժողովի աշխատանքների սկզբանաւորութեան։ Սան-Ռէմօի խորհրդաժողովը հաւաքւել էր միայն Թիւրքիայի հետ կնքելիք հաշտութեան դաշնագրի պայմանները մշակելու համար։

1920 թ. ապր. 25-ին, դեռ Սան-Ռէմօի խորհրդաժողովի ընթացքին, Գերազոյն Խորհրդը գիմեց նախագահ Վիլսընին՝ առաջարկելով որ Հիւս։ Ամեր. Միացեալ Նահանգները ընդունեն Հայաստանի հոգատարութիւնը։ Գերազոյն Խորհրդը խնդրում էր նոյնպէս նախագահ Վիլսընին ստանձնել իրաւարարի դերը Հայաստանի եւ Թիւրքիոյ միջեւ գծելիք սահմանների հարցում։

Միացեալ Նահանգների մերժումը հոգատարութիւնն ընդունելու յայտնի դարձաւ խորհրդաժողովի փակումից յետոյ, բայց Վիլսըն ինքը համաձայնեց ընդունելու իրաւարարի պաշտօնը։

Սան-Ռէմօի խորհրդաժողովի ժամանակ հայկական երկու պատիքակութիւնները բանակցում էին Ազգեկնարի եւ Վրաստանի ներկայացուցիչների հետ։ Բանակցութիւնների էական խնդիրը կաղմում էր երեք հանրապետութիւնների ծովային ելքը։ Ի նկատի ունենալով, որ Սան-Ռէմօի խորհրդաժողովը դեռ վերջնականապէս որոշած չէր Հայաստանի ծովային ելքի հարցը, եւ որ, միւս կողմից, Հայաստանի ներքին գաւառներից գէպի Սեւ Ծով երկաթուղի անցկացնելը Տրապիզոնի վիլայէթի վրայով կապած էր մեծ դժւարութիւնների հետ, Հայաստանի ներկայացուցիչները պնդում էին, որ Հայաստանին իրաւոնք սեփական երկաթուղի շինելու Կարսից գէպի Ճորոխի գետաբերանը ձորոխ գետով գետու ափով, այն պայմա-

նով, որ Վրաստանի հողով անցնող երկաթուղագծի շրջանը վայելէ է կստերիտիալ իրաւունքները: Վրաստանի յամառ դիմագրութեան սպատճառով, սակայն, որեւէ համաձայնութիւն կարելի չեղաւ կայացնել եւ թիւրքիային առաջարկելիք հաշտութեան նախագծի մէջ նման կէտ չժողուեց:

Հաշտութեան այս նախագիծը մշակւեց Սան-Ռէմօի խորհրդատողովում եւ 1920 թ. մայիս 11-ին հանդիսաւորապէս յանձնեց թիւրքական պատրիակութեան: Հաշտութեան նախագծի յանձնման հանդիսին ներկայ էին եւ Հայաստանի ներկայացուցիչներ Պօլոս Նուևար փաշան եւ Ա. Ահարոննեանը, որոնք, իրեւ դաշնադիր կողմի պատրիակներ, նստած էին պետութիւնների ներկայացուցիչների շարքին:

Քանի որ չգտնեց եւ ոչ մի պետութիւն, որ համաձայնէր ըստանձնել Հայաստանի հոգատարութիւնը, Դաշնակից պետութիւնները ստիպւած եղան ձեռք քաշել Ազգ. Դաշնակցութեան Ռւխտի 22-րդ կէտի գործադրութիւնից Հայաստանի վերաբերմամբ: Միւս կողմից հաստատ վճռականութիւնը Հայաստանը ազատելու մասին, որ այն օրերին դեռ ուժեղ էր Դաշնակից պետութիւնների մէջ, յանդեց Հայաստանի իրաւական\de jure ճանաչման:

Հաշտութեան դաշնագրի նախագծի յառաջարանում Հայաստանը նշանակւած է դաշնագրի պետութիւնների շարքում:

Դաշնագրի 89-րդ կէտը ասում է, թէ՝ «Թիւրքիան ճանաչում է Հայաստանը, ինչպէս վարւել են արդէն Դաշնակից պետութիւնները, իրեւ ազատ եւ անկախ պետութիւն»:

Այսպիսով, 1920 թ. մայիս 11-ը պէտք է համարել Դաշնակից պետութիւնների կողմից Հայաստանի անկախութեան իրաւական ճանաչման օր:*)

Հայաստանի սահմանները թիւրքիայի հետ, հաշտութեան պայմանների նախագծում, որոշւած էին 89-91-րդ յօդւածներով: Հիւս. Ամեր. Միացեալ Նահանգների նախագահ Վիլսոնին էր յանձնւած վերջնական սահմանագծի ճշտումը Հայաստանի եւ թիւրքիայի միջեւ՝ պայմանով, որ Վանի, Բիթլիսի, Կարսոյ եւ Տրավեզոնի վի-

*) Բիտամական կայսրութիւն, Ֆրանսա, Խոտալիա, Ճապոնիա, Բելգիա, Յունաստան, Հէջաս, Լիհաստան, Պորտուգալիա, Շումանիա, Սերբ-Խովաս-Ալովին քագաւորութիւն, Զեխո-Սլովակիա - սրանք էին դաշնադիր կողմերը թիւրքիայի հետ: Հայաստանն էլ դրւած էր սրանց կարգին:

լայէթները ամբողջութեամբ կամ որոշ մասով միացրէն Կովկասի Հայկական Հանրապետութեան, եւ լուծւի Հայաստանի ծովային եւ քի հարցը:

Ինչ վերաբերում է Հայաստանի ու Ազրբէջանի եւ Հայաստանի ու Վրաստանի սահմաններին, դրանք (92-րդ յօդւած) պէտք է որոշ էին երեք հանրապետութիւնների փոխադարձ համաձայնութեամբ եւ միայն համաձայնութիւն կայացնել չկարողանալու դէպքում մէծ պետութիւնները իրենք պիտի որոշէին:

Հաշտութեան նախագծի մտահոգութեան առարկայ էր կազմում եւ Հայկական փոքրամասնութեան պաշտպանութեան ինդիրը թիւրքիայում: 141-րդ յօդւածով թիւրքիան պարտաւորում էր, առանց ազգի, լեզվի, ցեղի կամ կրօնի խորութեան, իր երկրի բոլոր բնակիչներին երաշխաւորել կեանքի եւ ազատութեան ազագովութիւն: Թիւրքիայի բոլոր բնակիչները իրաւունք պիտի ունենային ազատութիւն գտան ձեռնութիւն կրօնը, հրապարակով կամ իրենց մանաւոր կեանքում: Օմաննեան բոլոր հալատակները գառնում էին հաւասար օրէնքի առջեւ եւ պիտի վայելէին քաղաքական եւ քաղաքացիական միեւնոյն իրաւունքները՝ անկախ իրենց ցեղային, լեզւական կամ կրօնական պատկանելութիւնից (145-րդ յօդւած): Դաշնագիրը առաջանայում էր փոքրամասնութիւնների իրաւունքը. ազգային փոքրամասնութեանց պատկանողները հաւասար իրաւունքներ պիտի ունենային հանրային պաշտօններ կատարելու եւ արհեստով ու արդիւնաբերութեամբ զբաղւելու. լեզուների հաւասար իրաւունք, կատարեալ կրօնական պատութիւն (150-րդ յօդ.): անկախ բարեգործական, կրօնական եւ հանրային հիմնարկութիւններ հաստատելու իրաւունք (147-րդ յօդ.):

Բացի անձնական իրաւունքներից, դաշնագրի որոշում էր եւ փոքրամասնութիւնների հաւաքական իրաւունքները: Այսպէս, երաշխաւորում էր որոշ մաս պետական, քաղաքային եւ այլ թիւրքական յօդում փոքրամասնութիւնների (148-րդ յօդ.): Եկեղեցական ու զպրոցական ինքնավարութիւն եւ ազգային փոքրամասնութիւնների իրաւունք համեմատական մասնակցութեան թիւրքիայի ներկայացուցչական մարմինների մէջ (145-րդ յօդ.):

Դաշնակից ղլսաւոր պետութիւնները (Անդիա, Ֆրանսա, Իտալիա և Ճապոնիա) իրենց իրաւունք էին վերապահում, համախորհուրդ Ազգ. Դաշնակցութեան Ասուհրդի հետ, որոշելու այն միջոցները, որոնք անհրաժեշտ կը նկատէին դաշնագրում նախատեսած պայմանները գործադրելու համար: Դաշնագրի գործադրութեան մի ե-

բաշխիք էր նկատում (36-րդ յօդ.) Կ. Պոլսի անջատումը թիւրքիացից, եթէ վերջինս չուղենայ իրագործել գաշնազը պայմանները:

Բացի այդ, դաշնագիրը պատիժներ էր տնօրինում այն անձանց համար, որոնք պատերազմի ընթացքին ոճիր էին գործել փոքրամասնութիւնների վերաբերմար (230-րդ յօդ.), որոշում էր ապատել բոլոր բռնի կալանաւորւածներին (142-րդ յօդ.), չեղեալ համարել բռնի խոլաժացումները, վերադարձնել զանդածային տեղահանութիւններից եւ ջարդերից ազատածներին ստացւածքը (144-րդ յօդ.):

Միայն մէկ կէտում թիւրքիան բաւարարութիւն էր ստանում. նրան վերադարձում էր կիլիլիայի մէկ մասը, ճիհուն գետից դէպի արեւմուտք, Աղանան ու Մերսինն էլ մէջը հաշւեռով:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԵՐՃԱՒՄԸ ՍԱԱՆՁԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԳԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՉԱՅԱԳԻՆ ՉԱՅԱԳԻՆ ԴԱՅԱՐ, որ հաշտութեան Դաշնագիր նախագիծն 1920 թւի մայիս 11-ին յանձնաւած էր թիւրքիային, հոգատար պետութեան որոնումը շարունակեց: Եթէ մի պետութիւն գտնուէր, որ համաձայնէր ստանալ Հայաստանի հոգատարութիւնը, Դաշնագիրը ստորագրելիս, անշուշտ, համապատասխան փոփոխութիւններ կը կատարեէին բնագրում:

Նախագահ Վիլսընը, Գերագոյն Խորհրդի առաջարկը Հայաստանի հոգատարութիւնը Հիւս. Ամեր. Միացեալ Նահանգներին յանձնելու մասին ստացաւ 1920 թ. ապր. 25-ին: Բայց նա դրանից առաջ արդէն, ապրիլ ամսին, Մերակոյտին ներկայացրել էր զօր. Հարբորդի տեղեկագիրը: Մերակոյտի արտաքին գործոց յանձնաժողովը, 1920 թ. մայիս 12-ին ընդունեց մի բանաձեւ, որը, հայ ժողովրդին իր համակրանքն արտայայտելուց յետոյ, սահմանափակում էր միայն լիազօրելով նախագահին թիւրքական ջրերն ուղարկել մի ուղմանաւ Հիւս. Ամեր. Միացեալ Նահանգների շահերը պաշտպանելու համար:

1920 թ. մայիս 24-ին նախագահ Վիլսընը նորից դիմեց Մերակոյտին մի ուղերձով, որով ինդրում էր լիազօրել իրեն ընդունելու Հայաստանի հոգատարութիւնը: Իր առաջարկութիւնը Վիլսընը հիմնաւորում էր Միացեալ Նահանգների նախաձեռնութեամբ ստեղծեւած Ազգ. Դաշնակցութեան Ռևստի 22-րդ կէտով եւ խորունկ համակրանքով դէպի հայերը, այն կարեկցութեամբ, որ բոլոր քրիստոնեայ երկրները արտայատեցին հայկական տանջանքների հանդէպ:

1920 թ. մայիս 31-ին, Մերակոյտը 52 քէով ընդդէմ 23-ի մեր-

ժեց ընդունել Հայաստանի հոգատարութիւնը: Որով, ուղեմն, մեծ պետութիւններից եւ ոչ մէկը, տարբեր պատճառներով, չկամեցաւ ստանձնել Հայաստանի հոգատարութիւնը, եւ հաշտութեան դաշնագրի նախագիծը թիւրքիայի հետ մնաց անփոփոխ:


ՍԵՒՐԻ ԴԱՇՆԱԳԻՒՐԻ — Սպայի Խորհրդաժողովը 1920 թ. յուլիսին, որ իր զբաղումի յատուկ առարկայ չդարձրեց հաշտութեան խնդիրը թիւրքիայի հետ, հաստատեց Սան-Ռէմօի խորհրդաժողովի հանած որոշումը: Ահա Սան-Ռէմօի խորհրդաժողովի մշակած դաշնագրի այդ նախագիծն էր, որ ստորագրեց Սեւրում, 1920 թ. օդուստ. 10-ին, Դաշնակից պետութիւնների եւ թիւրքիայի միջեւ. Դաշնակից պետութիւնների շարքին էր եւ Հայաստանի Հանրապետութիւնը, որի պատրիարք Ա. Ահարոննեանը ստորագրեց Դաշնագիրը:

Սեւրի Դաշնագրի հետ միաժամանակ Հայաստանը ստորագրեց եւ մի առանձին դաշնագիրը — Traité Séparé — Մեծն Բրիտանիայի, Ֆրանսայի, Իտալիայի եւ Ճապոնիայի հետ՝ Հայաստանում ապրող ուրիշ երկրների հպատակների եւ փոքրամասնութիւնների իրաւունքների մասին:

Սեւրի Դաշնագրով հայկական հարցը ստանում էր իր ամբողջական լուծումը: Հայաստանը գտնում էր միջազգային ընտանիքի մէկ անդամը, համարեա իր պատմական բովանդակ սահմաններում: Հայժողովուրդը վերածնուռ էր քաղաքական եւ աղքային մշակութային աղատ կեանքի համար: Նոր հետանկարներ էին բացւում հայութեան առջեւ:

Փարիզ.

(Վերջը յաջորդ անգամ)



ՕՊԻՉԻՑԻԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

III

«ԱՆՁԵՒ ՔԱԾՈՒ» ՄԵԶ

Յեղափոխական շրջանի առանձնայատկութիւններից մէկն էլ այն է, որ գէպքերը այդ ժամանակ զարգանում են շարժանկարի արագութեամբ, սաեղծելով ամենակարճ տեւողութեան ընթացքում նորանոր այնպիսի կացութիւններ, որոնցից յաջորդը շատ յաճախ որևէ նմանութիւն չունի նախորդի հետ։ Այդպիսի մի կացութիւն ստեղծընեց նաեւ հայ ժողովրդի կեանքում 1918 թ. յուլիսին, երբ Թիֆլիզից Երեւան հասաւ Ազգային Խորհուրդը ու ձեռնարկեց պետական ինքնուրոյն շէնքի կառուցման։ Հայ քաղաքական կեանքի կենտրոնը, որ մինչեւ այդ գտնուում էր Թիֆլիզում, փոխադրեց Երեւան՝ «հայկական գաւառների» մայրաքաղաքը, եւ զրա հետեւանքով տեղի ունեցաւ համապատասխան լծորդում այն կազմակերպւած ուժերի, որոնք վերջին շրջանում գործում էին Թիֆլիզում եւ Երեւանում՝ մի մեանցից համարեա թէ անջատ։

Ի՞նչպէս կատարեց այդ լծորդումը։

«Տիեզերական» Դաշնակցութեան արեւելահայ հասուածը իր կազմակերպութիւնները ունէր լայնածաւալ Ռուսաստանի այն բոլոր վայրերում, որտեղ հայ բնակչութիւն կար։ Ամենաուժեղ ցանցը, անշուշտ, ծաւալում էր «հայկական գաւառներում»՝ Երեւանի շուրջը։ Ինչ վերաբերում է կուսակցութեան կենտրոնին, նա յեղափոխութեան ամբողջ տեւողութեան ընթացքում գտնուում էր Թիֆլիզում, որտեղ նստած էր Դաշնակցութեան Բիւրօն ու լոյս էր տեսնում նրա պաշտօնաթերթ «Հորիզոն»ը։ 1918 թ. յուլիսին, Ազգային Խորհրդի Երեւան փոխադրելու հետեւանքով, Դաշնակցութիւնը այնտեղ ուրակեց համարեա իր բոլոր պատասխանատու գործիչներին՝ թողնելով Թիֆլիզում, սակաւ բացառութեամբ, «Աշխատանք»-ի շուրջը։

Համախմբւած այն երիտասարդներին, որոնք գլխաւորեցին Վրաստանի կազմակերպութիւնը։ Դաշնակցութիւնը, այսպիսով, միացաւատարիմ նաեւ այս անդամ իր լաւագոյն աւանդներին՝ լինել ժողովրդի հետ։

Երեւանուում, որտեղ յեղափոխութիւնը նոյնպէս բոլորել էր իր շրջանը, անցնելով Թիֆլիզից մի քիչ տարբեր փուլերով, Դաշնակցութիւնը ունէր ուժեղ կազմակերպութիւն եւ բազմաթիւ պատասխանատու գործիչներ։ Նրանք դեկապար գեր էին կատարում այն մարմինների մէջ, որոնք վարում էին սկզբում յեղափոխութեան եւ ետքը՝ ազգային գործերը։ Հակառակ դժուութիւն արտայայտող այն դիմումներին, որ ամենավերջին շրջանում, Երեւանի հատածը անում էր Թիֆլիզին անմիջապէս Հայաստան փոխադրելու մասին, հանդիպումը եւ լծորդումը «Էկւոր» ու «տեղացի» դաշնակցականների միջնեւ կատարեց առանց որեւէ անհարթութեան։ Կանոնաւոր ձեւով ընտրած կուսակցական մարմինների գոյութիւնը կատարեց իր զրական գերը նաեւ այս գէպքում, եւ Դաշնակցութիւնը, առաջին իսկ օրից, չհամարիվելով որեւէ գժւարութեան, գործի գրաւ իր ապարատը, որի մէջ՝ վերից վար – ճշտած էին բոլոր օդակների պատասխանատութիւններն ու իրաւասութիւնները։ Սա մի հսկայական առաւելութիւն էր, որ վիճակւած էր միայն Դաշնակցութեան, եւ որից զուրկ էին մեր միւս կուսակցութիւնները, զէթ սկզբնական ըրջանում։

Երկրորդ քաղաքական խմբակը՝ Փողովրդականները ցուցահանեցին մի այնպիսի վարքագիծ, որ որեւէ քննադատութեան չի դիմանում։ Յաւակնոտ ու անհիմն պահանջներից յետոյ՝ յանձնել իրենց հայ քաղաքական կեանքի դեկապարութիւնը ու կուսակարութիւն կազմելու իրաւունքը, նրանք, երբ պէտք եղաւ գնալ Երեւան, լքեցին իրենց պարտականութիւնները ամենախայտառակ կերպով։ Կուսակցութեան բոլոր դեկապարները մնացին Թիֆլիզ, եւ «հայկական գաւառները» ուղարկեցին երկու վարժապետներ (Ստեփան Մալիսասեան եւ Արշալոյ Մխիթարեան), որոնք իրենց հայրենասիրական առաքինութեան ու անհատական այլ արժանիքներին, աւաղ, չէին միացնում քաղաքական ու կուսակցական դեկապարից պահանջուղ անհարաժեշտ փորձառութիւնն ու հմտութիւնը։ Այս ձախող քայլի բացասական նշանակութիւնը էլ աւելի էր խորանում նրանով, որ Երեւանում գտնուղ ժողովրդականները բոլորն էլ երկրորդ կարգի գործիչներ էին եւ – էլի մի դժբախտութիւն – չէին կարողացել մինչ այլ ո՛չ միմեանց հետ ներգաշնակւել եւ ո՛չ էլ կուսակցական կանոնաւոր կազմակերպութիւն առաջ բերել։

Բայց թիֆլիզեցիների կատարած սխալը՝ միայն վերոյիշեալով չսահմանափակւեց : Պարոնայք Ս. Յարութիւնեաները, Մ. Բարաջանեանները, Ք. Վերմիջեաններն ու Լ. Ղուլեանները, մնալով հանդերձ թիֆլիզում, չարունակեցին իրենց ձեռքում պահել կուսակցութեան կենտրոնական մարմնի իրաւասութիւնները եւ այդ հիման վրա նաև Հայաստանի իրենց ընկերների գործունէութեան զեկավարութիւնը : Այս հանգամանքը ճակատագրական նշանակութիւն ունեցաւ ժողովրդական կուսակցութեան ապագայի համար : Քաղաքական այնպիսի մի պայմաններում, երբ գէպքերը զարգանում էին գլխապըսոյտ պատճառող արագութեամբ, երբ համարեա ամէն օր ամենաարագ լուծում պահանջող նոր ու ծանրակշիռ ինդիրներ էին դըրւում խորհրդարանային հատւածների ու կուսակցական լիազօր մարմինների առաջ, երբ, վերջապէս, գրեթէ կորուած էր հաղորդակցութիւնը թիֆլիզի եւ Երեւանի միջեւ, վերոյիշեալ որոշումը դրական որեւէ օժանդակութիւն չընձեռելով հանդերձ Երեւան գործող ժողովրդականներին, կապում էր այս վերջինների ձեռք ու ոտքը եւ կաչկանդման հնդարկում նրանց ամբողջ զործունէութիւնը : Եթէ ժողովրդական կուսակցութիւնը, որ արմատ ձգելու համար համապատասխան հող ունէ՛ր հայ իրականութեան մէջ, չկարողացաւ մըշակել որոշ ուղեգիծ եւ չգրաւեց հաստատուն գետին Հայաստանում ու վերջն է՛ մէկը միւսի յետեւից գործած սիսանների հետեւանքով հեռացաւ հայ քաղաքական կեանքի ասպարէզից, ապա դրա գլխաւոր պատճառներից մէկը վերը մատնանշած սխան էր :

Ժողովրդականներից շատ բանով չտարբերւեց եւ հայ սոցիալ-դեմոկրատների բոնած գիրքը : Նրանց պարագլուխները նոյնպէս մըշնացին թիֆլիզ եւ Երեւան ուղարկեցին զործնական քաղաքականութիւն վարելու միանդաման անհմուտ մի գործիչ (Հայկ Աղատեան), որ իր անտակտութեամբ ու դոկտրիներութեամբ շատ կարճ ժամանակում վերջնականապէս վարկարեկեց իր կուսակցութեան գործը Հանրապետական Հայաստանում : Թիֆլիզից չքածանուելու անյազման կարելի ցանկութիւնը մոռացնել տուաւ Ա. Երզնկեանին, Ա. Զոհրաբեանին, Դ. Տէր-Ղազարեանին, Ս. Փիլումեանին եւ ընկերներին այն կարեւոր պարագան, որ «Հայկական գաւառների» հողը այնքա՞ն էլ պարարա չէր սոցիալ-դեմոկրատիայի համար, որ, դրա հետեւանքով Հայաստանում գորութիւն ունեցող նրանց կազմակերպութիւնը շատ թոյլ էր ու խեղճ եւ որ նա իրեն բաժին ընկած գերը բաւարար չափով կատարել կարենալու համար պէտք ունէր փորձ ու հեղինակաւոր առաջնորդների, որպիսիք կային թիֆլիզում, բայց չկային Ե-

րեւանում : Արա վրա աւելացաւ նաև այն, որ սոց-դեմոկրատները կրկնեցին ժողովրդականների կատարած սխալը եւ, մնալով թիֆլիզ, պահեցին իրենց ձեռքում կենտրոնական մարմնի իրաւասութիւնները եւ Հայաստանի իրենց կազմակերպութեան ու խորհրդարանային Փըրականիայի գործունէութեան ղեկավարութիւնը : Այս հանգամանքը նրանց հ ա մ ա ր ունեցաւ ն ա ե ւ մ ի յաւելեալ անպատեհութիւն, որը բխում էր հայ սոց-դեմոկրատների այն ժամանակայի կազմակերպական վիճակից : Խնդիրն այն է, որ այդ պահին նրանք գեռնեւս չէին խղել իրենց կապերը վրացական կազմակերպութեան հետ եւ չունէին սեփական կուսակցական մարմիններ : Չկար, այսպիսով, նաև այն լիազօր կենտրոնը, որ կոչւած էր ուղղութիւն տալու Հայաստանի իրենց ընկերների գործունէութեան : Ժողովրդականների առաջին այդպիսի մի մարմին, յանձնին իրենց կենտրոնական Կոմիտէի : Հայ սոց-դեմոկրատները չունէին արդ մարմինը եւ, այսպիսով, բարձրագոյն ղեկավարութիւնը մնում էր «կամօքն Աստուծոյ» ընտրւած մարդկանց ձեռքին, որոնիք իրաւասութիւններից օգտելու լայն յարմարութիւններին միացնում էին պատասխանատրութիւնից խուսափելու նոյնեան լայն պատեհութիւնները : Այսչ' սիսալ սկսւած գործը չէր կարող չունենալ իր հետեւանքները ընդդեմադիր այս խմբակի ասպարէյի համար : Եւ ինչպէս կը տեսնենք յետոյ, այդ հետեւանքները իրօք որ շատ ծանր նստեցին հայ սոցիալ-դեմոկրատիայի վրա :

Այժմ անցնենք մեր կուսակցութեան՝ հայ սոցիալիստ-յեղափոխականներին : Յեղափոխութեան ազգայնացումը ամենածանր անդրադարձումն ունեցաւ հայ էսէոնների վրա : Փոխարքայի պալատից Արամեանցի տունը փոխադրելիս մենք մէկէն մէկ զգացինք, որ մի շատ կարեւոր բան պակասում է մեղ՝ մենք չունէինք անւանի, հեղինակաւոր եւ հայ իրականութեան մէջ համբաւ հանած ղեկավարներ : Մեր բոլորի կողմից ճանաչւած պարագլուխը՝ Անլայտական շարժման օրերին (1907-1908 թ.թ.) առաջնակարգ դիրքից հասած մեր միւս ընկերը՝ Վահան Մինասյանը, որ Միրիրից Տաճկաստան էր փախել, խառնել էր այնտեղ արսորի քարաւաններին եւ կորած էր համարում մեղ համար : Նոյն այդ անջատական շրջանում աչքի ընկնող մի քանի ուրիշ ընկերներ, գժիրախտաբար, 1917 թ. յեղափոխութեան ժամանակ որեւէ նկատելի յառաջադիմութիւն ցոյց չունին ու երկրորդական գործիչի գիրքերից անդին չափով կատարել կարենալու համար պէտք ունէր փորձ ու հեղինակաւոր առաջնորդների, որպիսիք կային թիֆլիզում, որոնք անուն հանեն :

յին 1917 թ. յեղափոխութեան ժամանակ Թիֆլիզում (Ն. Թարխան-նեան, Լ. Թումանեան) եւ Բագրում (Ս. Սահակեան), դրանք մնացին գործելու ընդհանուր կազմակերպութեան շարքերում՝ հայ իրականութեան բաւականաչափ ծանօթ չկնքելու պատճառով։ Այսպիսով, վճռական այն բոպէին, երբ մեր առաջ գրւեց Ազգային Խորհրդի հետ միասին Երեւան տեղափոխւելու հարցը, մենք Թիֆլիզում չունեինք կենտրոնական դէմքեր, եւ Հայաստան կարող էինք ուղարկել այսպիսի գործիչներ, որոնք իրենց տեսակարար կշիռով ոչնչով բարձր չէին Երեւանում գտնւող մեր ընկերներից։ Այս հանգամանքը ոչ միայն գիւրացրեց Թիֆլիզից «երկիր» մեկնող ընկերների ընտրութիւնը, այլ նաև ապամառ գարձաւ, որ Հայաստանի գործերը վարելու կոչւած լիազօր կենտրոնի հարցը – որ ճակատագրական դեր կատարեց ժողովրդականների եւ սոցիալ-դեմոկրատների համար, – այս դէպքում բարերախտ լուծում ստանայ։ Այդ լուծումը բխում էր այն միակ ուղիղ տեսակէտից, թէ Հայաստանի գործոններութիւնը պէտք է վարեն Հայաստանում գտնւող մարդիկի Բայց որպէսզի դրա կիրառումը կեանքում չուներ Հայաստանի մեր կազմակերպութեան ձևական անջատման ու բացարձակ անկախացման – մի բան, որ ոչ ոք մեզանից չէր ցանկանում – Շրջանային Կոմիտէն Երեւան մեկնող ընկերոջ (Ա. Աղոնդկարեան) տւառ լայն լիազօրութիւններ ու արտօնեց նրան Հայաստանում գործել Շրջ. Կոմիտէի անունով ու օդուել նրա բոլոր իրաւասութիւններով։ Այս քայլը, անշուշտ, անհամապատասխան էր մեր ներքին կանոնադրութեան գեմոկրատական սկզբունքներին, բայց ժամանակը արտակարգ էր եւ պահանջում էր արտակարդ որոշումներ։ Հետապային, մեկնակէտ ընդունելով նոյն այդ արտակարգ պայմանները, ես փոխանցեցի Շրջանային Կոմիտէի ինձ տւած լիազօրութիւնները խորհրդարանային մեր ֆրակցիային, որը եւ – մինչեւ մեր կազմակերպութեան անդրանիկ ընդհանուր ժողովն ու Հայաստանի Կոմիտէի ընտրութիւնը – գարձաւ այն լիազօր մարմինը, որ զեկավարեց հայ էսէւների ամբողջ գործունէութիւնը Հանրապետական Հայաստանում։

Ի՞նչպէս վերադասաւուեց Հայաստանում կուսակցական ուժերի փոխարարերութիւնը վերոյիշեալ լծորդումից յետոյ։

Ինչպէս յայտնի է, գեւեւս Թիֆլիզում որոշւեց կուսակցութիւնների ներկայացուցչութեան հարցը Հայաստանի ապագայ Խորհրդարանում։ Լուս կայացած համաձայնութեան, Դաշնակցութիւնը ստանում էր 18, իսկ մնացած երեք կուսակցութիւնները (Ժողովրդական, Սոց. Յեղ., եւ Սոց.-Դեմ.) 6-ական ձայն։ Արդարութիւնը

պահանջում է ասել, որ ուժերի այս բաշխումը չէր համապատասխանում իրականութեան, մանաւանդ եթէ կուսակցութիւնների տեսակարար կշռի որոշման համար չափանիչ ընդունենք նրանց այն ժամանակայ անդամների ու համակիրների քանակը։ Կասկածից գուրսէ, որ Դաշնակցութիւնը չառ աւելի հետեւորդներ ունէր, քան միւս երեք կուսակցութիւնները միասին առած։ Միւս կողմից, հաւասար չէին նաև այս երեքի ուժերը։ Զնայած դրան չահարգուած կողմերը չառարկեցին իրենց հանդէպ թոյլ տւած այս «անիրաւութեան» դէմ, եւ այդ՝ գլխաւորապէս այն պատճառով, որ իշխանութիւնը 1918 թ. յունիսեան դժնդակ օրերին այսպիսի՝ մի ծանր լուծ էր, որ ոչ ոքի համար որեւէ հրապոյը չէր ներկայացնում։ Միւս կողմից, պէտք է աւելացնել նաև այն, որ միայն կողմնակիցների ու անդամների քանակով չէ, որ միշտ ու ամենուրեք չափում է կուսակցութիւնների տեսակարար կշռը։ Կան դրա համար բազմաթիւ այլ գործոններ ու յատկութիւններ, որոնք, ի միջի այլոց, զօրութեան մէջ էին այն ժամանակ հայ էսէւների և էսպէկների համար, և որոնց շնորհիւ այս վերջիններիս արժէքն ու նշանակութիւնը շատ աւելի բարձր էր, քան որ կարող էր թոյլ տալ նրանց անդամների քանակը։ Այդ այդպէս էր, սակայն, Թիֆլիզում։ Հայաստանում յիշեալ խմբակցութիւնների համար տարբեր պայմաններ ստեղծեցին։

Երեւանում զգալի չափով փոխւեց կուսակցական ուժերի փոխարարերութիւնը։ Հ. Յ. Դաշնակցութիւնը, Թիֆլիզեան շրջանի համեմատութեամբ, է՛լ աւելի ուժեղացաւ, որովհետեւ Հայաստանում նա շատ աւելի բան ձևոք բերեց, քան կորցրեց, մինչդեռ նրա զէմ զանուող կուսակցութիւնները միայն կորցրին։ Դաշնակցութիւնը նախեւառաջ ապաւեց անդրկովկասեան այն նեղիչ միջավայրից, որի մէջ նա ընկել էր փետրարեան յեղափոխութեան շնորհիւ եւ որը, ինչպէս տեսանք, նրան զբել էր իր ուժին ու ազդեցութեան միանդամայն անհամապատասխան զերի մէջ։ Միւս կողմից, Հայաստանում նա վերադասւ կուսակցական մի կազմակերպութիւն, որ ունէր տասնեակ տարիների անցեալ եւ խոր արմատներ էր ձգել հայ զանդընների մէջ։ Վերջապէս, ինչպէս տաեց վերը, նա Հայաստան բերաւ իր ուժերի մէծ մասը, թողնելով Վրաստանում ու Ազրբէջանում շատ քիչ – քանակով եւ որակով – գործիչներ։

Տարբեր եղաւ միւս կուսակցութիւնների բախու։ Դրանցից հայ սոց-յեղափոխականներն ու հայ սոց-կեմոկրատները, Հայաստան գալով, կորցրին մէկէն այն բոլոր առաւելութիւնները, որ ունէին

թիֆլիզում, մասնաւորապէս յեղափոխութեան առաջին չըջանում: Միջազգային կազմակերպութեան ընձեռած գործունէութեան լայն հնարաւորութիւնները վերացան նրանց համար: Վերջ դատան նաև այն բոլոր օժանդակութիւնները, որ նրանք ստանում էին իրենց մայր կուսակցութիւններից, որոնք ուժեղ էին քանակով ու մասնաւոնդ իրենց քաղաքական վարկով: Հայ էսէռների ու էսդէկների խմբակները Երեւանում յենւեցին միայն այնտեղ եղած գաւոսական թոյլ կազմակերպութիւնների վրա, որովհետեւ Անդրկովկասի կենտրոններում՝ Բագրում եւ Թիֆլիզում՝ գործող բոլոր ուժերը (ոչ միայն օտար այլ նաև հայ) մնացին իրենց տեղերում եւ Հայաստան չեկան: Փաստօքն այս երկու կուսակցութիւնների համար ոչ թէ ուժերի լըծորդում եղաւ, այլ ստեղծեց մի կացութիւն, երբ պէտք էր ամէն ինչ կառուցանել վերստին, որգեղերով, դրա հետ միասին, կազմակերպական նոր ձեւեր, կերտելով կուսակցական նոր մեքենայ ու հիմընդունելով միայն այն շատ համեստ ուժերը, որ կային Հայաստանում:

Յօդում դաշնակցականների վոխուեց Երեւանում նաև ուժերի այն փոխյարարերութիւնը, որ կար Թիֆլիզում սրանց եւ ժողովրդականների միջեւ: Այն ամէնը, ինչով ուժեղ էին ժողովրդականները, մնաց Թիֆլիզում: Իսկ նրանց կազմակերպութեան ուժ էր տալիս Սոլուակի հայ բուրժուազիան եւ մէկ էլ պարագլուխների բարձրագոչ անունները, որ նրանք էին բերել նախայեղափոխական չըջանում ցոյց տւած իրենց հասարակական գործունէութեանը: Երեւանը չստացաւ ոչ մէկը եւ ոչ միւսը եւ մնաց ապաւինած միայն տեղական կազմակերպութեան ուժին, որ նոյնպէս շատ թոյլ էր:

Ինչ վերաբերում է վերոյիշեալ կուսակցութիւնների զարգացման մօտակայ հեռանկարներին, ապա այդ կողմից էլ Հայաստանի այն ժամանակայ պայմանները նպաստաւոր էին Դաշնակցութեան եւ անհըսաստ միւս կուսակցութիւնների եւ մասնաւորապէս էսդէկների ու էսէռների համար: Ինչպէս արդէն առիթ է եղել ասելու, Անդրկովկասին ժամանական ժամանական կեանքի զարգացումը ընթացել է «մէկ ազգ - մէկ կուսակցութիւն» նշանաբանի տակ: Ազգային հակամարտութիւնների սրման գէպքերում այս սկզբունքից շեղման ու մէկից աւելի կուսակցութիւններ կազմելու իւրաքանչիւր մի փորձ համարւել է ոչ աւելի եւ ոչ սպակաս, քան «ազգային դաւաճանութիւն»: Արդ, յիշեալ ժամանակաշրջանում, ազգամիջեան ընդհարումներն ու դժութիւնները ծայրայեղ աստիճանի էին հասել եւ միւս կողմից մեծացել էր նաև արտաքին վտանգը, քանի որ թիւրքերը գտնուում

էին Երեւանից եօթը վերստի վրա: Այս պայմաններում շատ զժւար էր խախտել վերը մատնանշած սկզբունքը եւ ընդդիմագլուխ կուսակցութիւններ հիմնել ու զօրացնել: Աննպաստ էին մեկ համար նաև Հայաստանի ներքին կեանքի պայմանները: Եթէ դեռ յեղափոխութիւնից առաջ Երեւանի շրջանը, որտեղ չկար զարգացած արդիւնաբերութիւն ու գասակարգային որոշակի չերտաւորում, ներկայանում էր անբարենպաստ գետին ընկերվարական կուսակցութիւնների համար, 1918 թիւն այնտեղ ստեղծւած զրութիւնը այդ կողմից էլ առելի վատ էր: Բոլորին յայտնի գէպքերի հետեւանքով տակն ու վրա էր եղել հայ ժողովրդի ընկերային կառուցւածքը եւ այդ «անձեւ քառու» մէջ կուլ էին զնացել մասնաւորապէս այն խաւերը, որոնք ստորաբար հիմք են ծառայում ընկերվարական կուսակցութիւնների համար: Եւ Երեւան գալու հէնց առաջին օրից մենք զգացինք, որ այստեղ պայմանները մեր գործունէութեան համար շատ աւելի դժւար են լինելու, քան Թիֆլիզում:

Աւելորդ է ասել, որ այդ «անձեւ քառու», որպէս ընկերային միշտավայր, շատ յարմար գետին էր «ամենայն հայոց կուսակցութեան»՝ Հ. Յ. Դաշնակցութեան համար, որը երբեք չի եղել զասակարգային կազմակերպութիւն եւ իր լայն բացած դռներից ընդունել է, առանց մէծ խարութեան, բոլոր զասակարգերի ու խաւերի ներկայացուցիչներին:

Թող տարօրինակ չժւայ, եթէ ասենք, որ այդ օրերին միակ դասակարգային կուսակցութիւնը, որ յենուում էր հասարակական որոշխաւի վրա, Հայ ժողովրդական կուսակցութիւնն էր: Թէեւ սակաւաթիւ ու բաւականին բգկտւած, բայց էլի կային Հայաստանի գիւղերում Դաշնակցութիւնից դուրս մնացած զանազան կուլակներ, «համբա»-ներ, ոչսներ ու երկցփոխներ եւ քաղաքներում՝ վաճառականներ ու հատ ու կենտ ցարական նախկին պաշտօնեաններ, որոնք եւ կազմում էին այդ կուսակցութիւնն ընկերային հիմքը: Այս տեսակէտից աջ ընդդիմագլուխների հոսանքը շատ աւելի հաստատուն հողունէր իր ոտքերի տակ, քան ընկերվարական կուսակցութիւնները: Եւ եթէ ժողովրդականները չկարողացան, այնուամենայինիւ, որոշ դեր խաղալ հայ քաղաքական կեանքում, այդ եղաւ բացառապէս նրանց զեկավարների կատարած քաղաքական կոպիտ սխալների հետեւանքով:

Ընդդիմագլուխի կուսակցութիւնների տեսակարար կշռի նւազումը, որ անդի ունեցաւ Երեւանում վերոյիշեալ պատճառներով, էլ աւելի ցցուն դարձրեց այն անհամապատասխանութիւնը, որ կար նրանց

ստացած պատգամաւորների թւի ու ներկայացրած ուժի միջև։ Երեւանի քաղաքային ընտրութիւնները, որ կատարւեցին Ազգային Խորհրդի Հայաստան ժամանելուց մի երկու ամիս յետոյ, գործնարկանորէն հաստատեցին վերը ժամանաշած զրութիւնը։ Դաշնակցութիւնը այդ ընտրութիւնների ժամանակ ստացաւ երկու անդամ աւելի ձայն, քան միւս երեք կուսակցութիւնները միասին։ Հաշւի չառնել այս փաստը ու նրանից համապատասխան եղբակացութիւն չառնել չէր կարող հայ զեկավար կուսակցութիւնը։ Բայց քանի չէին փոխել Հայաստանի արտաքին պայմանները, քանի զեռ թիւրքը նրատած էր Ռուլուխաննելում, Գաշնակցութիւնը բարւոք էր համարում յետաձգել իր եղբակացութիւնները աւելի բարեպատեհ ժամանակների, որոնք, ի դէպ, իրենց երկար սպասեցնել չաւին։

Ինչ վերաբերում է կուսակցութիւնների հայ քաղաքական կեանքի մէջ զրաւած գիրքին, այդ ուղղութեամբ Երեւանում նոյնալէս տեղի ունեցան որոշ փոփոխութիւններ։ Նախ եւ առաջ այստեղ վերջնականալէս ճշտեց, թէ այդ կուսակցութիւններից ո՞րը պիտի համարել կառավարական եւ ո՞րը ընդդիմադիր։ Բանի զեռ գործում էր Ազգային Խորհրդին, որպէս «զերագոյն ու միակ իշխանութիւն» և որի մէջ մասնակցում էին հայ բոլոր քաղաքական հոսանքների ներկայացուցիչները, խօսք չէր կարող լինել կառավարական եւ ընդդիմադիր կուսակցութիւնների մասին։ Երբ Թիֆլիզում կազմւեց Յ. Քաջազնունու դահլիճը, որից դուրս մնացին վերոյիշեալ կուսակցութիւններից երեքը, մօտաւորապէս պարզեց, որ զրանցից էլ բաղկանալու է Հայաստանի ապագայ օպողիցիան։ Բայց այս հարցի փաստական լուծումը տեղի ունեցաւ միայն Երեւանում, երբ վերջնականալէս ճշտեցը կառավարութեան մէջ առնել դաշնակցականներից զատ՝ նաեւ ուրիշ տարրեր, կիսատ էր ձգել իր դահլիճի կազմը։ Երեւանում, Ազգային Մարմինների վերակառուցման հետեւանքով, ստեղծւել էր մի զրութիւն, որ, կարծես թէ ընդառաջում էր Քաջազնունու ծրագրներին։ Այստեղ, Ազգային Խորհրդին կից, Արամի նախագահութեամբ կազմւել էր մի Գործադիր Մարմին, զուտ վարչական իրաւասութիւններով, որը փաստորէն ոչ այլ ինչ էր, բայց եթէ կառավարութիւն եւ որի մէջ մտել էին դաշնակցականներից բացի, նաեւ Հայ ժողովրդական կուսակցութեան անդամները։ Եսէնները եւ էսդէկները, շարունակելով իրենց մասնակցութիւնը Երեւանի Ազգային Խորհրդին, Հրաժարւել էին մտնել Արամի «զահլիճ» մէջ։ Յ. Քաջազնունու ճիգերը՝ մասնակից դարձնել իր կառավարութեան ժողովրդականներին և պահել գէթ Երեւանում ստեղծւած

մասնակի կուսակցութեամբ չպատկեցին։ Թիֆլիզը իրեն ցոյց տւեց այստեղ առաջին անգամ և ստիպեց Երեւանցիններին զուրս զալ կուսակցունից ու զրաւել ընդդիմադիր զիրքեր։ Գործերակարպի այս տարրերութիւնները ժողովրդական կուսակցութեան երկու հատուածների՝ Թիֆլիզի և Երեւանի՝ միջն շարունակեց նաև այնուհետեւ, արտայայտւելով համարեա բոլոր կարեւոր հարցերի նկատմամբ։ Դրա հետեւանքը եղաւ խիստ բացասական այս հոսանքի թէ վարդիկի և թէ դործոնէութեան համար։

Բախտաւոր զուգագիպութիւն եղաւ էսէնների համար նրանց երկու հատուածների տակտիկական նոյնութիւնը։ Պէտք է այստեղ խնսուալինեմ, որ մասնաւորապէս ես մէծ անձկութեամբ էի սպասում այն ժամին, երբ կը հանդիպեմ իմ Երեւանի ընկերներին ու կը ծանօթանամ նրանց որդեգրած ուղեգծին։ Եթէ իմ եւ նրանց տեսակէանները օրւայ կարեւոր ինպիրների մասին չներգաշնակէին, մեր ապագայ գործունէութիւնը չատ մէծ բարդութիւնների կը հանդիպէր։ Ես ներկայացնում էի Թիֆլիզի մեր կազմակերպութիւնը եւ ունի, ինչպէս յիշեցի վերը, Շրջանային կոմիտէի լիազորութիւններ։ Դրա դէմ Երեւանի մեր ընկերները փաստօրէն հանդիսանում էին այն միակ իրական ոյքը, որը այսուհետեւ պէտք է հիմք ծառայէր մէր կազմակերպութեան հետազայ գոյութեան ու գործունէութեան համար։ Բախտմը իմ եւ նրանց մէջ կարող էր Հայաստանի մեր կազմակերպութիւնը զնել փակուզու առաջ, մանաւանդ, որ հաղորդակցութեան բացակայութեան պատճառով՝ անհնարին էր որեւէ միջամտութիւն զրոի զերագաս մարմինների կողմից։ Բայց առաջին իսկ օրը տեղի ունեցած հանդիպման ժամանակ սլարդեց, որ մեր երկու հատուածների տակտիկական ըմբանումներն ու որդեգրած ուղեգծը միանման են։ Այս հանդիմանքը, ի միջի այլոց, զիրքացըրեց նաեւ մեր բոնելիք զիրքի ճշումը, եւ Հայաստանի նորաստեղծ Հանրապետութեան մէջ մեր կուսակցութիւնը վերջնականապէս գրաւեց ընդդիմադիր դիրք։

Դիւրին եղաւ նաեւ Դաշնակցութեան երկու հատուածների գործեւակապի զօդումը, քանի որ թէ Թիֆլիզում եւ թէ Երեւանում այդ կուսակցութիւնը զործել էր որպէս զեկալար ոյժ ու զրանով կանոնորոշել իր զիրքը Հայաստանի նորաստեղծ պետական կեանքում։ Լինելով ամենասուժեղ կուսակցութիւնը եւ ունենալով իր յետեւից քաղաքականապէս կազմակերպւած զանգւածների մէծամասնութիւնը, անկասկած է, որ Դաշնակցութիւնը, - լինի մենակ թէ ուրիշ ուժերի հետ - պէտք է դառնար կառավարական կուսակցութիւն։ Այդ մասին միաժեսակ էին մտածում թէ Թիֆլիզի եւ թէ Երեւանի

հատւածները, եւ, սխալած չեմ լինի, եթէ ասեմ, որ նաեւ աշխարհի բոլոր դաշնակցականները:

Ահաւասիկ այն քաղաքական կազմակերպութիւնները, որ հայ նորաստեղծ պետական կեանքի շարժիչ ուժերն հանդիսացան 1918 թ. աշնան բախտորոշ օրերին: Շարունակելով մեր խօսքը դրանցից ընդդիմագիր խմբակների մասին, անհրաժեշտ է պարզել եւս մէկ հարց ի՞նչպէս պէտք է բնորոշել Հանրապ. Հայաստանի օպողիցիան, իր դործելակերպի ու գաղափարարանութեան տեսակէտից:

Այս հարցին ճիշտ պատասխանելու համար պէտք է կանգ առնել ընդդիմագիր կուսակցութիւններից իւրաքանչիւրի վրա առանձին: Այդպէս վարել պէտք է մասնաւորապէս այն պատճառով, որ նըրանք երբեք և ոչ մէկ ձեւով չներդաշնակեցին իրենց գործունելութիւնը, ձեւական բլուսներ, «միացեալ նակատներ» կամ նոյն իսկ ած հօշ համաձայնութիւններ կայացնելով: Բլոքներ ու համաձայնութիւններ չկնքեցան ոչ միայն աջ եւ ձախ ընդդիմագիրների, այլ նոյն իսկ երկու ընկերվարական խմբակների միջեւ: Այսպիսով ընդդիմագիր գործելակերպն ու գաղափարարանութիւնը չեղաւ միատեսակ, ինչպէս յաճախ փորձում են ներկայացնել ամէն ինչ «կարճ կապել» սիրող մեր հրապարակագիրները: Անհրաժեշտ է մատնանշել նաեւ այն, որ Հանրապետութեան 2½ տարւայ կեանքը ունեցաւ տարրեր չըջանաներ, որի ընթացքում տեղի ունեցան փոփոխութիւններ ինչպէս կառավարական կուսակցութեան ընդհանուր քաղաքականութեան, նոյնպէս եւ օպողիցիայի անձնական կազմի ու դործելակերպի մէջ: Թիւրիմացութիւններից խուսափելու համար, պէտք է նաեւ ճշտորոշել ամէն անդամ, թէ խօսքը ո՞ր ըջանին է վերաբերում: Ինչպէս արդգէն նկատած կը լինի ընթերցողը, իմ այս յօդւածի մէջ ես ի նկատի ունեմ Հանրապետութեան կեանքի առաջին ըջանը, որ սկսում է Խորհրդարանի բացումով ու վերջանում Յ. Քաջազնունու առաջին դահլիճի տապալումով:

Այս երկու դիտողութիւններից յետոյ, անցնենք այժմ վերը առաջադրած հարցի պատասխանին, սկսելով աջ օպողիցիայից, որի միակ ներկայացուցիչն էր Հանր. Հայաստանում ժողովրդական կուսակցութիւնը:

Այս կուսակցութեան երկու հատւածների (Թիֆլիզի եւ Երեւանի) միջեւ, ինչպէս առիթ եղաւ մատնանշելու, կար տեսակէտների որոշ տարրերութիւն դաշնակցականների հետ համագործակցելու, կառավարութեան մէջ մատնանշելու եւ նման մի շարք ուրիշ հարցերի շուրջը: Երեւանցիք շատ աւելի չափաւոր տրամադրութիւններ ունեին, քան Թիֆլիզում գործող պարագլուխները: Բայց որովհետեւ այս վերջինները

րըս չեկան Հայաստան, և կուսակցութեան գործունէութեան դեկալարութիւնը մնաց, այսպիսով, Երևանցիներից կազմւած մէծամասնութեան ձեռքում, ժողովրդականների օպողիցիան էլ, մանաւանդ յիշածս առաջին շրջանում, եղաւ վերին աստիճանի չափաւոր: Ամենավլանական բոլորին: Նորակազմ կառավարութեան յայտագրի ընթերցումից յետոյ, ժողովրդականների Փրակցիան՝ ձայների մէծամասնութեամբ^(*) քրէարկեց յօդուտ Յ. Քաջազնունու դահլիճի, որով, փաստօրէն, նա դուրս եկաւ օպողիցիայի շարքերից ու միացաւ այն մէծամասնութեան, որի վրա այսուհետեւ յենւեց կառավարութիւնը: Ճիշտ է, պարլամենտական ու կուսակցական գործունէութիւն վարելու անփորձութիւնը դարձեց ժողովրդականների հետագայ գործելակերպը գարձարձիկ, բայց անդամ իրենց այն ելոյթների մէջ, որոնք կրում էին ընդդիմագիր բնոյթ, նրանք մնացին միշտ լեզարութեան սահմաններում եւ երբեք չչեղուեցին պատասխանատու ու չափաւոր օպողիցիայի դիրքից:

Անցնելով այժմ ձախ ընդդիմագիրներին, ես յաջորդական կարգով կանգ սկիտի առնեմ նախ սոցիա-յեղափոխականների վրա, որովհետեւ սոցիալ-դեմոկրատները, մի զարմանալի նախանձախիլդրութեամբ, ձգտեցին իրենց վերապահել Հայաստանի Խորհրդի ամենամասի խմբակցութեան պատիւր: Դրա դէմ մէնք չառարկեցինք անցեալում, եւ չեմ առարկում նաեւ ես այժմ:

Մեր կուսակցութեան ընդդիմութիւնն եւս այս ըջանում եղաւ պատասխանատու: Այս բնորոշման էութիւնն ու բովանդակութիւնը կարծում եմ պարզ է: Արտասահմանեան ընթերցողները, որոնք բուլոր հնարաւորութիւնները ունեն զիտելու պարլամենտական երկրների խորհրդարանային կեանքի անցուլաբերը, զիտեն, անշուշտ, թէ ի՞նչ տարբերութիւն կայ պատասխանատու եւ անպատասխանատու օպողիցիաների միջեւ: Ինչպէս յայտնի է, անպատասխանատու ընդդիմագիրները, հետեւելով յեղափոխական տակտիկայի, իրենց ամբողջ ուշագրութիւնն ու եռանդը կենտրոնացնում են արտապարլամենտական գործունէութեան վրա, աշխատելով դրսում, զանգւածների հետ անմիջական շփման միջոցով, կազմակերպել այն մարտական ոյժը, որը պէտք է մի օր փողոց հանել՝ իշխանութեան տիրա-

^(*) Ժողովրդական Փրակցիայի վեց անդամից երկուսը ձեռնպահ մնացին, եւ այդ ոչ քէ այն պատասխան, որ դէմ էին Յ. Քաջազնունու դակիմին, այլ որովհետեւ գտնում էին չափազանցւած Յ. Քաջազնունու այն պահանջը, քէ վստահութեան բանական մէջ որեւէ պայման կամ վերապահում չպիտի լինի եւ նա պէտք է կրի բացարձակ բնոյթ:

հալու համար : Եւ եթէ նրանք գնում են այնուամենայնիւ պարլամենտ, ապա ոչ թէ այնտեղ օրգանական աշխատանք կատարելու, այլ օգտագործելու համար խորհրդարանային ամբիոնը ու այնտեղից իրենց խօսքը ուղղելու դրսի զանգւածներին, ինչպէս ասում են «պատգամաւորների գլխի վրայից» : Այսպիսի սահմանափակ դեր վերապահելով իրենց, անպատճախանատու ընդդիմադիրները չեն մասնակցում ոչ պարլամենտական յանձնաժողովներին, և ոչ էլ օրինագծերի նախապատրաստական աշխատանքներին : Յատկապէս ձախ ընդդիմադիրները - սոցիալիստներն ու կոմմունիտները - հըրաժարում են քէտարկել րիւղչն եւ մանաւանդ զինւորական նախարարութեան վարկերը :

Եթէ այսպէս է անպատճախանատու օպոզիցայի գործելակերպը, ապա ամենայն վստահութեամբ կարող եմ ասել, որ մենք անպատճախանատու ընդդիմադիրներ չենք ոչ Հայաստանի Խորհրդում եւ ոչ էլ, առ հասարակ, Հայաստանում : Աւելորդ է մատնանշել, որ մեր ամբողջ գործունէութիւնը կրում էր քացարձակապէս լեզար քընյը եւ կիստրոնացած էր մեծ մասամբ Խորհրդարանում : Բացի արդ, մենք մասնակցում էինք պարլամենտական բոլոր յանձնաժողովներին, մէջն առնելով նաեւ զինւորականը, ինչպէս նաեւ բոլոր օրինագծերի քննութեան, ջանալով մեր ելոյթներով ոչ թէ այդ օրինագծերի թերութիւնները ընդդեւ միայն, այլ նաեւ մեր ուղղումները անել ու, այդպիսով, աւելի կատարեալ օրէնքների հրատարակաման նպաստել : Անշուշտ մենք քննադատում էինք նաեւ կառավարութիւնը - օպոզիցիան արդէն տեղ նոյն է անում - բայց այդ քննադատութեանց նպատակը ոչ թէ իշխանութեան քայլայումն էր, այլ մի աւելի կատարեալ ու մեր իդէալներին աւելի համապատասխան իշխանութեան ստեղծումն :

Ես պէտք է այսուղ առանձնապէս շեշտեմ, որ պատճախանատու օպոզիցիային մենք փարեցինք գիտակցքարպ^{*}) եւ հակառակ այն տակտիկան թերզանքներին, որ իր մէջ պարունակում էր մեր ստացած քաղաքական ժառանգութիւնը, մի ժառանգութիւն, որ կը-

* Գիտաւուների նախարար Խ. Կարենիկեանի յիշատակին նիրած Հայաստանի Խորհրդի պաշտօնական նիստում մեր Փրակցիայի նախագահը, իր խօսքի մէջ, կանգ առնելով օպոզիցիայի տարբեր տեսակների վրա եւ մատնանշելով, որ կայ «օպոզիցիա նորին մեծութեան գէմ» եւ «նորին մեծութեան օպոզիցիա», յայսարարեց, որ երէ սոց-այգափախականները այս վերջին տեսակի ընդդիմադիրներից են, դրա պատճաններից մէկն էլ այն է, որ կառավարական կուսակցութիւնը իր շարժերում ունեցել է այնպիսի մի գործիչ, ինչպիսին է Խ. Կարենիկեանը :

տակում էր մեզ մայր կուսակցութիւնը Պետական Դումայում ունեցած իր գործունէութեամբ ձեռք բերած փորձի եւ Սոցիալիստական ինտերնացիոնալի համագումարներում ընդունւած որոշումների հիման վրա :

Այս շեղումը, որ մենք կատարեցինք Հայաստանում ստեղծւած իրայատուկ պայմանների ազգեցութեան տակ, առանց որոշ անհարթութեանց չէր, որ տեղի ունեցաւ : Որքան էլ փոքրաթիւ, բայց եւ այնպէս մեր Փրակցիայի ներսում կային կարծիքների ու տրամադրութիւնների տարրերութիւններ, որի հետեւանքով մեր որոշումները զանազան սկզբունքային ու տակտիկական խնդիրների չուրջ տեղի էին ունենում մտքերի թեր ու դէմ փոխանակութիւնից յիսոյ ու ձայների մեծամասնութեամբ : Այս ձեռով էր, որ լուծւեց նաև մեր գործելակերպի ընդհանուր ուղղութեան հարցը :

Այժմ մնում է մի երկու խօսք ամել ընդդիմադիր վերջին խմբակի՝ հայ սոցիալ-դեմոկրատների տակտիկայի մասին : Պիտի խոստովանեմ, որ դրա բնորոշումը այնքան էլ գիւրին չէ ինձ համար : Սոցիալ-դեմոկրատների գործունէութիւնը տեսալ ըրջանում զուրկ եղաւ հետեւղական ուղեկծից : Պատճառը նրանց խորհրդարանային Փրակցիայի այլատարրութիւնն էր ու նաեւ զեկավար ձեռքի պակասը : Հ. Աղասիեան (այժմ բոլշևիկ), որ վարում է Փրակցիայի նախագահութեանը, իր խառնւածքով ու ընդունակութիւններով միանդամայն անհամապատասխան էր նման մի ծանրակշիռ պաշտօնի համար : Շատ քիչ անդամ հաջու առնելով իր ընկերների տրամադրութիւնները ու տալով իր ելոյթներին յաճախ անձնական բնոյթ, նա դրանով ստիպում էր իր Փրակցիայի անդամներին երբեմն խանգարել կուսակցական կարգապահութիւնը ու ամբիոն բարձրանալ արտասանելու համար ճառեր, որոնք իրենց տոնով ու բովանդակութեամբ չէին ներգանակում նախագահի ասածներին : Այս անհարթութիւնները շեշտւած ձեռով արտայայտեցան մանաւանդ այն ժամանակ, երբ թիվլիվլից՝ Փրակցիայի կազմը ուժեղացնելու համար՝ երեւան եկան Արկոմեդը (Գ. Ղարաջեան) ու Միքը. Ղարաբէդեանը : Գրաւելով կուսակցութեան մէջ աւելի կարեւոր դիրք, քան Հ. Աղասիեանը, սրանք, ընականարար, չուղեցան սեղմւել Փրակցիայի սոուկական անդամի համեստ ըրջանակի մէջ ու, ամէն անդամ, խորհրդարանի ամբիոն բարձրանակիս, ներկայացան զեկավարի ու պարագլիք գերբում : Կուսակցական գծի միօրինակութիւնը ըրանից տուժեց մեծապէս : Այսպէս թէ այնպէս, հայ սոց-դեմ : Փրակցիայի գործունէութիւնը գրոշմւել է այն ժամանակաւայ անցուղարձերի անմիջական վկաների յիշողութեան մէջ որպէս ծայրայեղ ընդդիմու-

թիւն։ Զառարկելով դրա դէմ ընդհանրապէս, ևս այնուամենայնիւ այն կարծիքին եմ, որ այդ ծայրայինութիւնը աւելի շուտ ըստ ձեւի էր, քան թէ ըստ բովանդակութեան։ Քաղաքական տակտի բացակայութիւնը, մարքսիստական դոկտրինեօրութիւնը ու միւսներից աւելի ճախ երեւալու մոլուցքը շատ յաճախ ստիպում էին Խորհրդի սոց.-դեմոկրատ անդամներին ու մանաւանդ նրանց Փրակցիայի նախագահին արտասանել «փոթորկայոյզ» եւ երբեմն նոյն իսկ անպատշաճ ճառեր ու կատարել անպատասխանատու քւէարկութիւններ, բայց դրանով հանդերձ, ևս կարծում եմ, որ նաև այս խմբակի գործունէութիւնը իր ներքին բովանդակութեամբ ու, որ գլխաւորն է, իր հետապնդած նպատակներով աւելի ճիշտ կը լինէր համարել պատասխանատու քան թէ անպատասխանատու ընդդիմութիւն։ Ամենավընունու վայրկեանին, Յ. Քաջազնունու անդրանիկ կառավարութեան յայտագրի ընթերցումից յետոյ, սոց.-յեղափոխականների նըման նաեւ սոց.-դեմոկրատները ոչ թէ դէմ քւէարկեցին առաջարկուած վատահութեան բանաձեւին, այլ մնացին ձեռնպահ։^{*)} Սոց.-դեմոկրատների օպոզիցիայի բնոյթը որոշելու համար այս մէկ հատիկ քւէարկութիւնը շատ աւելի արժէք ունի, քան նրանց արտասահած տասնեակ ճրճուան ճառերը։

Հանրապետական Հայաստանում գոյութիւն ունեցող օպոզիցիայի համեմատական չափաւորութիւնը արդիւնք էր ոչ թէ նրա ներկայացուցիչների քաղաքական առաքինութեան, այլ այն ժամանակաւ օրեկտիւ պայմանների վրա, քանի որ նրանք բաւականաչափ ծանօթ են հանրութեան։ Կը յիշատակիմ դրանցից միայն մի քանիսը, որոնք պղեցին ընդդիմադիրների գործունէութեան ուղղութեան վրա, պահեցին այդ գործունէութիւնը համեմատարար չափաւոր սահմանների մէջ։

Գլխաւորը դրանցից այն էր, որ չնորհիւ երկում տիրող առանձնայատուկ վիճակի, նւազագոյնի էին հասել կուսակցութիւնների մէջ գոյութիւն ունեցող սկզբունքային տարակարծութիւնները։ Մեր առաջ դրւած հիմնական խնդիրը՝ երկիրը հանել «անձեւ քառոսի» միջից շատ պարզ լուծում էր պահճանջում։ Միւս կողմից շատ սահմանափակ էին մեր բոլորի ձեռքի տակ եղած հնարաւորութիւնները։ Այս հանդամանքը տեղ էք թողնում խոչոր բախումների համար։ Կար նաեւ այն խիստ կարեւոր պարագան, որ արտաքին ճակատի հարցը գերակշռող դեր էր կատարում այդ ժամանակ, երկրորդ

կարգի վրա մղելով ներքին կեանքի բոլոր ինդիբները։ Իսկ այդ հարցը այնպիսի մի ահոելի կոպտութեամբ էր դրւած մեր առաջ, որ տարակարծութիւններ չէր վերցնում։ Եւ, իսկապէս, ի՞նչ նոր ու իւրայատուկ լուծումներ կարող էին առաջարկել հայ զանազան կուսակցութիւնները մեր երկրին ու ժողովուրդին սպառնացող արտաքին վտանգի դէմ, բացի այն միակ հնարաւոր լուծումից, որ կոչւում էր «ժամանակաւոր համակերպութիւն» եւ որը որդեգրել էր Յ. Քաջազնունու դահլիճը։ Այսօր, երբ ևս մտովին վերագանում եմ մեր պատմութեան այդ շրջանը, աշխատելով վերյուշել այն ժամանակայ դէպեհըն ու տիրող մտայնութիւնը, ևս չեմ կարողանում թրքական վտանգի շուրջը գտնել տարակարծութեան քիչ շատ լուրջ կէտեր, որոնք գոյութիւն ունեցած լինէին կառավարական ու ընդդիմադիր կուսակցութիւնների միջեւ։ Եթէ կային էլ տեսակէտների մի քանի աննշան տարբերութիւններ, ապա բաժանման գիծը անցնում էր թէ կառավարական ու ընդդիմադիր կուսակցութեանց, այլ այդ երկուսին էլ պատկանող գործիչների միջեւ, ստեղծելով, այսպիսով, նոր խմբակցութիւններ, որոնք չէին ամփուլում կուսակցութիւնների շրջանակների մէջ։ Յիշում եմ, որ այդ ժամանակ իսուսք էր լինում երբեմն, թէ պէտք է Թիւրքիայի հանդէպ վարել մի քիչ աւելի ակտիւ քաղաքականութիւն, քան այն, որին հետեւում էր Յ. Քաջազնունին։ Աւագների խորհրդի ու կառավարութեան խառն նիստերից մէկում, երբ քննում էր թրքական գեսպան Մահմեդ Ալիի Յ. Քաջազնունուն տեսած անսպասելի այցելութեան ու ներկայացրած պահանջների (յայտնել մեր զօրքի քանակը, նրա կենտրոնացման կէտերը եւ այլն) հարցը, այս «մի քիչ աւելի ակտիւ քաղաքականութիւն» վարելու խնդիրը նորից հրապարակ գրւեց, բայց հէնց այստեղ էլ կարծիքները բաժնեցին այնպէս, որ ևս, (սոց.-յեղափոխու Փրակցիայի նախագահը) և Խ. Կարճիկեանը (դաշնակց., կառավարութեան անդամ) մնացինք վորքամանութիւն կազմող «ակտիւ խառն նիստերից» խմբակում, իսկ Յ. Քաջազնունին Հ. Ազատեանի (սոց.-դեմոկր. Փրակցիայի նախագահ) ու միւսների հետ կազմեցին այն մեծամասնութիւնը, որ կողմնակից էր համակերպելու քաղաքականութեան։ Պէտք է այն էլ ասեմ, որ մեր «ակտիւ խնդիր» բընոյթն ու բովանդակութիւնը շատ անորոշ էր, այնպէս որ նրա տարբերութիւնը միւս խմբակի որդեգրած գործելակերպից այնքան էլ մեծ չէր։

Արտաքին քաղաքականութեան ճակատում կային նաեւ վրաստանի ու Աղբաբէջանի հետ մեր յարաբերութիւնները ճշտելու հարցերը, որոնց շուրջը գոյութիւն ունէին որոշ տարակարծութիւններ

^{*)} Տես Ս. Վրացեանի «Հայաստանի Համբավետութիւն» էջ 167։

կառավարական ու ընդգիւմադիր կուսակցութիւնների միջև։ Բայց յիշածս տուածին շրջանում այդ հարցերը այժմէ ականութիւն չէին ներկայացնում, կլանւած լինելով թրքական վտանգի մղձաւանջով։

Գալով ներքին կեանքին, պէտք է մատնանշեմ այն կարեւոր պարագան, որ տւեալ շրջանում ընկերային հարցերը, որոնք սովորաբար «քար գայթակղութեան» են հանդիսանում շերտաւորման հնթարկւած հասարակութեան ծոցում ծնունդ առած կուսակցութիւնների համար, տեղի էին տալիս քաղաքական հարցերի առաջ։ Մուշու սոցիալական բարենորոգութիւնների մասին խօսք լինել չէր կարող այնպիսի մի պայմաններում, երբ պէտք էր ափ յափոյ պետական մեքենայ ստեղծել, պարենաւորման գործը կարգաւորել ու գաղթականութեան յորձանքները որոշ հունի մէջ ամփոփել։ Միւս կողմից, ինչպէս մատնանշեցի վերը, հայ կուսակցութիւնները, որոնց թըւում նաեւ ընկերվարական զոյդ կազմակերպութիւնները, դեռ չէին կարողացել Ծորդւել հասարակական այն խաւերի հետ, որոնց վրա նրանք սովորաբար յինուում են։ Մեր գաղափարախօսութիւնն ու տակտիկան մշակելիս մենք թելադրանքներ չէինք ստանում իր ուրոյն շահերի գիտակցութեամբ առլեցուն հայ կազմակերպւած բանուրութեան ու աշխատաւորական զանգւածներից եւ այդ՝ նախեւառաջ այն պարզ պատճառով, որ «անձեւ քաօսը» թոյլ չէր տալիս, որ կաղապարւի հայ ընկերային կառուցւածքը եւ ձեւ ու մարմին ստանան հասարակական վերոյիշեալ խաւերը։ Իսկ եթէ երբեմն մեղանից մէկն ու մէկը՝ գաղափարական մղումներով տարւած, փորձում էր ընկերային բարենորոգութիւնների պահանջ դնել, ապա կառավարական կուսակցութիւնը այնպիսի արագութեամբ էր միանում մեր այդ մեծ մասամբ տեսական նշանակութիւն ներկայացնող պահանջին, որ վէճի ու պայքարի ոչ մի տեղ չէր մնում։ Զպէտք է մոռնալ, որ ուստական յեղափոխութեան ազդեցութիւնը դեռ զօրեղ էր հայ բոլոր կուսակցութիւնների, որոնց թւում նաեւ Դաշնակցութեան վրա, որը այդ ժամանակ, էլի մէկ անդամ ապրում էր իր սոցիալիստական մեղրալուսնի շրջանը։

Սկզբունքային սուր տարակարձութիւններ չկային նաեւ քաղաքական մարզում գոյութիւն ունեցող խնդիրների շուրջ։ Ամենահիմնական հարցի՝ նորաստեղծ պետութեան ներկայի ու ապագայի հանդէպահմունք ունէին այդ շրջանում թէ կառավարական եւ թէ ընդգիւմադիր կուսակցութիւնները։ «Մեր հանրապետութիւնը փոքր է ու նեղ իր սահմաններով։ նա զրկւել է իր ամենագնահատելի երկրամասերից ու չի կարող իր մէջ տեղաւորել ամբողջ ազգաբնակութիւնը եւ, կարծես թէ, պայմաններ չունի անկախ-

գոյութեան համար» (ընդգծումներն իմն են՝ Ա.Ա.՝), ասում է իր բացման ճառի մէջ Ազգ։ Խորհրդի նախագահ Աւ. Սահակեանը, եւ այս գնահատութեան հետ համաձայն էինք մենք բոլորս։ Կարող էինք սրանից յետոյ խոշոր ծրագիրներ առաջարկել ու գրանց չուրծը կուսակցական «զոռ մարտեր» մղել։ Ի հարկէ ոչ եւ կասկածում մօտիկ ապագայի նկատմամբ ու զուրկ մխիթարական հեռանկարներից, մենք ապրում էինք օրը օրին, աշխատելով որքան կարելի է չուտ ստեղծել այն անհրաժեշտ մեքենան, առանց որի անհարին է որեւէ մէկ ժողովրդի համակեցութիւնը։ Այս էր ահա օրւայ ամենակարեւոր հարցը եւ սրա չուրջն էին տեղի ունենում նաեւ ընդդիմադիրները։


Մեքենայի ստեղծման խնդրում մենք՝ ձախ օպողիցիայի ներկայացուցիչներս երկու կարգի նախանձախնդրութիւն ունէինք։ Նախ՝ պահանջում էինք, որ պետականութեան ժամանակաւոր չէնքը կառուցւի զեմոկրատական սկզբունքների համաձայն եւ երկրորդ՝ հետամուտ էինք, որ վարչական, օրէնսդրական եւ միւս մարմինների գործունէութիւնը ընթանայ օրինականութեան սահմաններում։ Ինչպէս մատնանշեցի, Դաշնակցութիւնը այդ ժամանակ դեռ գտնուում էր ուստական յեղափոխութեան ազգեցութեան տակ եւ նրա զեկավարները հաւատարմութիւն էին ցուցահանում զեմոկրատական սկզբունքների հանդէպ։ Սրա հետեւանքով Հայաստանի Հանրապետութիւնը եւ մանաւանդ նրա բարձրագոյն մարմինները կառուցւեցին ուամկավարական հմգմքերի վրա եւ կառավարական ու ընդդիմադիրի կուսակցութիւնների մէջ տեսակէտների առանձին տարրերութիւններ չեղան Խորհրդարանի իրաւասութիւնների, կառավարական ու օրէնսդրական մարմնի փոխյարաբերութեանց վերաբերմամբ։

Ամենասուր վէճերը եղան, գլխաւորապէս, պետական մեքենայի գործունէութեան շուրջը։ Պարենի սուր տագնապը, որ իշխում էր ամբողջ երկրում, հայ մտաւորականների անփորձութիւնը պետական պաշտօններ վարելու մէջ, ժողովրդի անկայուն վիճակը ու գաղթականութեան ալեկոծ ծովը ոչ միայն դժւարացնում էին կանոնաւոր վարչութեան ստեղծումն, այլև զեղծումների եւ ապօրինութիւնների լայն գուռ էին բացում սոորին մարմինների մէջ նստած պաշտօնեաների համար։ Ինչպէս սովորաբար պատահում է բոլոր երկրներում, կառավարութիւնը յաճախ կամ չէր տեսնում եւ կամ տեսնելիս այլ կերպ էր նայում իր ստեղծած մեքենայի գոյութիւն ունեցող թերութիւնների վրա, եւ ընդգիւմադիրներին էր մնում դրանց զէմ պայքարելու պարտականութիւնը։ Հայաստանում հոչակ ստացած հարցաբնդումը այն հատու զէնքն էր, որով մենք կուտում էինք վե-

ըստ մատնանշած ապօրինութիւնների դէմ : Եւ այս հարցապնդումների միջոցին էր, որ տեղի էին ունենում սուր բախումներ կառավարութեան ու կառավարական Փրակցիայի անդամների եւ ընդդիմադիրների միջև : Կանգնած այն հաստատ տեսակէտի վրա, որ օպոզիցիայի այս կարգի գործունէութիւնը վերջին հաշւով դրական աղղեցութիւն էր թողնում պետական մարմինների գոծառնութեան վրա, ևս չեմ կարող չժամոնանշել նաեւ այն, որ այդ հարցապնդումներից մի քանիսը խորհրդարանում ստեղծում էին այնպիս մի մժնոլորտ, որ՝ մեր ժողովրդի ցածր իրաւագիտակցութեան պայմաններում, վընասում էր կառավարութեան եւ երրեմն նոյնիսկ իշխանութեան վարկին : Էլ աւելի խոտելի էին այն քննադատութիւնները, որոնք անձնական բնոյթ էին կրում, ուղղած լինելով, մեծ մասամբ ներքին գործոց նախարարի՝ Արամի հասցէին : Պիտի արձանագրեամ, սակայն, այստեղ, որ վերջին տեսակի քննադատութիւնների հեղինակներ էին հանդիսանում մեծ մասամբ մեր հարեւան Փրակցիայի անդամները եւ մատնաւորապէս նրա հռչակաւոր նախագահը : Խորհրդարանի մեծամասնութիւնը, մէջը լինելով նաեւ միւս ընդդիմադիր խմբակները, համակրանքով չէին վերաբերում այդ կարգի ելոյթներին :

Եզրափակելով այս գլուխը, պիտի մատնանշեմ, որ Հայաստանի այն ժամանակւայ պայմանները անյաղթահարելի արգելքներ չէին ներկայացնում, որ Վրաստանի եւ Աղրբէջանի նման, նաեւ Հայաստանի անդրանիկ կառավարութիւնը կազմւէր բոլոր կուսակցութիւնների լայն համագործակցութեան հիման վրա : Եւ եթէ այդ տեղի չունեցաւ, պատճառը փնտուելու է այն միջկուսակցական բախումների մէջ, որոնք սկսւեցին հայ կեանքում 1904-1905 թ. թ. ու շարունակւեցին հետագայ տարիներում եւ որպէս «նզովեալ ժառանգութիւն» իրենց զրոշմը դրին հայ կուսակցութիւնների փոխարարերութիւնների վրա նաեւ 1917-1919 թւականներին :

Փարիզ



ՍԱՄՍՈՆ



ԿՈՍՏԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ (ԿՈՍԱՆ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՆԴՐԱՆԻԿ ԴԵՍՊԱՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

I

Հայ հոծ գաղթականութիւնը, 1918 թ. օգոստոս ամսի սկիզբներին, տառապանքից կքած, երկար ու տանջալից լեռնային ճանապարհներ կտրելով, կանգ առաւ Համադանի և Բահար դիւզի ընդարձակ դաշտում։ Նա զալիս էր Սալմաստից, Աւրմիլից և Վանից։ Եւ երազում էր հանգստանալ տաժանելի ճանապարհի սարսափներից՝ յարգել յիշատակը սիրելիների, որոնք ընկան դահիճ թշնամութակներից եւ թշւառութեան անրաժան ընկեր համաճարակ հիւանդութիւններից, քոլերայից, տիֆից, թանչքից . . .

Այդտեղ, այդ հանգստեան վայրում պիտի յիշւէր եւ աղջտալի մահը սիրելի կոստի Համբարձումեանի, որ ընկաւ Մահմութջը դիւզի բարձունքներում, մուրազի կէս ճանապարհին, բուռն ցանկութիւնները սրտում։ «Ա՛խ, այս ժողովրդին մի հասցնեմ ապահով վայր, էլ դարդ չունիմ»։ ասում էր նա չարունակ եւ արթուն հըսկում ամենալավանդաւոր կէտերի վրա։ Այդպէս արթուն՝ մի խումբ ընկերների հետ նա զեկավարեց իր սիրած ժողովրդին, Վանից մինչեւ իր մահւան վայրը։ Ժողովուրդը հասաւ ապահով տեղ, իսկ ինքը զոհւեց նրա փրկութեան համար, պարտքի դիտակցութեան ճանապարհին։

Սակայն Բահար դիւզի այդ ընդարձակ դաշտում, բացօթեայ, կիղիչ արեւի տակ անդամ հանդիսաւ չգտաւ զժբախտ գաղթականութիւնը։ «Հովանաւոր պետութիւնը» իրեն յատուկ սառնասրութեամբ եւ օրէնքին կառչած, չոր ու ցամաք կարգադրութիւններով, զառնացրեց նրա առանց այն էլ ծանր վիճակը։ Նա թոյլ չուեց գաղթականներին պատսպարել դիւզիում կամ քաղաքում, եւ ոչխարի հօտի նման քշում էր մի վայրից միւսը։ Առաւտեան վաղ անդիմացի

զինուրները մտրակը ձեռներին յոդնած ժողովրդին դուրս էին բերում խմբերով, ճանապարհների վրա աշխատեցնելու, չէին խնայում նոյն իսկ կանանց, երեխաներին, հիւանդներին։ Զինուած ուժերի մեծ մասը ենթարկեց զինաթափութեան, որից յետոյ սկսւեց կամաւորների անկանոն զօրահաւաք, երբ շատ ընտանիքներ զրկեցին հոգատար տղամարդկանցից։ Ոչ մի միջնորդութիւն, դիմում կամ աղերսանք չէր օգնում։

Այս դառն օրերին էր, որ Թէհրանում կազմակերպւած պարսկահայ Ազգային Խորհրդի կողմից Համադան հասաւ լիազօր ներկայացուցիչ դոկտ. Յարութիւն Ստեփանեանը. մի յարդւած եւ հեղինակաւոր անձնաւորութիւն։ Նրան յանձնարարւած էր ուսումնասիրել հայ գաղթականութեան վիճակը, օգնութեան կարիքը, տեղաւորման հարցը, որբերի հաւաքման խնդիրը, բժշկական խնամքը եւ այլն։ Սակայն, բացի անմիջական բժշկական օգնութիւնից եւ որբերի հաւաքումից ուրիշ աշխատանքի կարելի չեղաւ ձեռնարկել, որովհետեւ անդլիացիները յայտարարեցին, թէ այդ հոգատարութիւնը իրենք են ստանձնում եւ թէ բոլոր գաղթականութիւնը պէտք է զնայ Բակուրա, ուր նրան կը տրի ամէն յարմարութիւն։ Զելոների ամբողջ ցեղը, Մար-Շիմոնի հետ, առանց կանգ առնելու շարունակեց ճանապարհը դէպի Բաղդաստ, իրենց երազած վայրը, Մուսուլի ըրջանում տեղաւորւելու համար, իսկ Ասորիների եւ Հայերի մեծ մասը, ինչպէս նաև Վանի գաղթականութիւնը փոխադրուեց Բակուրա։ Հայ եւ Ասորիների մի մասն էլ փոխադրուեց Դազւին։ Մի անհշան մասը միայն մնաց Համադան։

Դոկտ. Ստեփանեան կազմակերպեց որբանոցը եւ Շաւարին հայ դիւլում, ոչ շատ հեռու Համադանից, հաւաքեց, եթէ չեմ սիսաւում, 200-250 որբ։ Որբանոցի ընդհանուր անօրէն նշանակեց Արմ. Մաքուսետեանը, կառավարչուհի՝ օր. Հ. Մեծքայեանը, իսկ տնտեսական մասի վարիչ՝ Արամ Աղարէդեանը։ Որբանոցին կից բացւեց եւ դպրոց։

Դոկտ. Ստեփանեանի հետ մենք վաղեմի ընկերներ էինք. դեռ 1902 թ. նա քաղաքակիրթ Ամերիկան թողնելով անցել էր Պարսկաստան՝ իր բաժին աշխատանքը կատարելու Հայրենիքի փրկութեան գործում, և մինչև 907 թ. աշխատեց Ասորականի Հ. Յ. Դաշնակց. շարքերում՝ երեւան բերելով բեղուն գործունէութիւն։ 1907 թ. փոխադրուեց Թէհրան, որպէս Մահմէդ-Ալի շահի պալատական առամարդոյթը, եւ այստեղ եւս շարունակեց իր կուսակցական եւ հասարակական գործունէութիւնը, դրաւելով պատկառելի դիրք հայ եւ պարսիկ հանրութեան աջքին։

Երկար տարիների անջատումից յիսոյ մեր հանդիպումը, այն էլ այդ սեւ օրերին, մի անակնկալ էր եւ եղաւ շատ ջերմ ու սրատաշարժ։ Մեր մտերիմ խօսակցութիւնների ժամանակ յիշեցինք անցած օրերը, մեր կեանքի ուրախ ու տիսուր դէպքերը։ Դոկտորը հաստատեց այն լուրը, որ մենք դեռ Արմի եղած ժամանակ ստացել էինք տաճիկ զինուրական հրամանատարութիւնից պաշտօնական զրութեամբ, թէ «Երեւանեան նահանգում իրենց կառավարութեան կողմից հայերին չնորհւած է Հայկական անկախութիւն»։ Թուրքերը ներփակել էին մի հեռագիր եւս, Ալէքսանդրապոլից, Տէր-Յակուրիան* ստորագրութեամբ, որը հաստատում էր անկախութեան փաստը։ Անհաւատալի բան էր, եւ մենք ենթադրում էինք, թէ այդ ձեւով թուրքերը ուզում էին մեզ ծուղակը ձգել։ «Առւո է, խարում են, թուրք եւ այդպիսի առաջինութիւն» մըմնջում էին մեր շըրթունքները։ բայց ճիշտ դուրս եկաւ, դոկտորն էլ հաստատեց, «Ի՞նչուրք էլ խարում էր մեզ աւելի խելայիկ ուրախութիւն պատճառել, այդ տիսուր օրերին, քան այդ լուրը։ «Ակզատ, Հայաստան, Հայկական Կառավարութիւն» եւ այն էլ տաճիկ կառավարութեան կողմից ճանաչւած։ Մենք հրճանքի մէջ էինք, երբ մի օր Դոկտորին բերին մի հեռագիր. Թէհրանի Ազգային Խորհուրդը յայտնում էր Բագուի անկման լուրը։ Այլեւս ջիզ չկար զանութեան ահաւորութիւնը… Ո՞չ, թուրքը այն ցեղը չէ, որից կարելի է բարիք սպասել։ Մի քանի տիսուր ու մռայլ օրեր եւս, եւ Դոկտորը, աւարտած իր գործը, ճանապարհւեց Թէհրան։ Ցըրեց գաղթականութիւնն եւս, գատարկեցին Համադանի եւ Բահարի ընդգարձակ դաշտերը։ Ինձ էլ այլեւս անելիք չէր մնում եւ մի քանի գաղթական ընտանիքների հետ ճանապարհւեցի Դազւին։

II

Տիսուր էր Դազւին հասած հայ գաղթականութեան վիճակը։ Արանք չենթարկելով անգլիացիների կարգադրութեան եւ չուղենալով անցնել Բակուրայի անապատները, շտապում էին իրենց ծննդավայրը՝ Մալմաստ-Ռեմի վերագառնալ։ Սակայն, ճանապարհների անապահովութիւնը ստիպել էր կանգ առնել Հազվինում, թէեւ երեսուն հոգի ամէն վտանգ աչք առնելով՝ ճանապարհւել էին Թաւրիկ։ Մասցած գաղթականութիւնը, մօտ 800 հոգի ցրւած այս ու այն կողմ, զուրկ ապրելու տարրական միջոցներից, յոզնած ու հիւծ-

*). Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութեան քարտուղար Ալ. Տէր-Յակուրեան։

ւած, համաձարակ հիւանդութիւնների սպառնալիքի տակ, շշմել, կորցրել էր սառնասրատութիւնն ու համբերութիւնը: Դազլինի հայ հասարակութիւնը անտարեր չէր գտնւել իր թշւասութեան մատնըւած հայրենակիցների հանդէպ եւ անմիջապէս օդնութեան էր հասուել ինչով կարող էր: Օգնութեան գործը կանոնաւորելու համաշընտրւել էր գաղթականական մարմին։ Համբ. Գրիգորեան (Նախագահ), Տիկ.Նունէ Աւագեան (Մայրիկ, Գանձապահ), Տիկ.Տիգրանունէ ի Բարիուլարեան, Տիկ. Նատալիա Սարգսեան, Պ. Թամբապեան: Այս մարմինը ձեռնարկել էր հանդանակութեան, որ անցնում էր աւելի քան յաջող: Սակայն այդ փոքրիկ գաղութը մենակ չէր կարող բաւարարել ահագին կարիքին եւ մարմինը դիմել էր Թէհրանի Պարսկահայ Խորհուրդին, որ ուղարկել էր մի գումար: Բայց այդքանըն էլ բաւական չէր: Երբ ես հասայ Ղազլին, Գաղթականական Մարմնի կողմից հրաւիրւեցի իրենց նիստերին եւ մի շարք խորհրդակցութիւններից յետոյ, լիազօրւեցի կազմակերպել օդնութեան գործը ու ստանձնել հսկողութիւնը:

Իրեւ հետեւանք այդ խորհրդակցութիւնների, վարձեց երկու ընդարձակ բնակարան ուր տեղաւորւեցին բոլոր գաղթականները, հրաւիրւեց մի թժիշկ ու բուժակ, բացւեց բուժարան եւ եղած դրամի համապատասխան որոշեց նպաստ տալ շնչին 50 սանտիմ (10 շահի): Այսպիսով հայ գաղթականութիւնը գէթ մասսմբ հանդրտացաւ:

Արժէ այստեղ յիշատակել եւ այն, որ Սամաստի եւ Ռեմիի հողատէր եւ առեւտրական գաղթականները, չցանկանալով նպաստով ապրել, ինդրեցին իրենց համար փոխառութիւն յաջողացնել: Նրանց դիմումը յարգւեց եւ Ղազլինի հայ վաճառականները Աւետիս-խան Տէր-Գրիգորեանի նախաձեռնութեամբ, տրամադրեց 1500 թուման, որ մինչեւ այսօր էլչէ վերապարձած: Աւելորդ չենք համարում յիշատակել, որ ասորիներին, թւով մօտ 300 շունչ, անդլիացիները անմիջապէս առին իրենց ինամատարութեան ներքոյ, լիառատ պարենով հողալով նրանց բոլոր կարիքները: Մեր շարունական դիմումն ու խնդրանքը մէրժւում էր անդլիական իշխանութեան կողմից, որոնք միշտ միւնոյն պատասխանն էին տալիս. - Զեզ կարգադրած էր Բակուրա գնալ, ինչո՞ւ չէք գնացել:

Մեր բացատրութիւններից յետոյ, երբ ասւում էր թէ՝ չէ՞ որ ասորիներն էլ չեն գնացել, բայց օդնում էք, կոչտ ու կոպիտ պատասխանութեամբ էր.

- Ասորիները այստեղ աղգակիցներ չունեն, նրանց օդնելու կարգադրութիւն ունենք, իսկ հայերին՝ ոչ: Հայերը այստեղ հա-

րուսա հայենակիցներ ունեն, որոնք կարող են օգնել դիմեցէք նըրանց:

Առհասարակ անդլիացիները բարեացակամ տրամադրութիւն չունէին դէպի հայերը, ինչպէս նկատում էր ամէն քայլափոխում: Այդ ժամանականերն էր, որ Բազուկից Ղազլին հասան մոստոմը և Ա. Արարատեանը, որոնք գնում էին Թէհրան. Խոստոմը կարեւոր հեռագիրներ ունէր տալու Եւրոպա, իսկ Արարատեանը, կարծեմ որպէս Բազուկի Ազգային Խորհուրդին լիազօր, Ժամանակաւորապէս այնակ պիտի մնար որոշ ինդիրների կարգադրութեան համար:

Աւրախութիւնից յուզւած՝ շտապեցի նրանց մօտ: Մանաւանդ անսահման երջանիկ էի մոստոմին հանդիպելու համար: 0՝, որքան ասելիք կար, ինչքա՞ն գարդ ու ցաւ էր կուտակւած սրտիս վրա: Ինչպէս լուել, օրինակ, Ճերմակ* կոչւած ապիկարի գործելակերպի հանդէպ, որ մեր եւ ժողովրդի թշւասութեան պատճառներից մէկը հանդիպացաւ, փոխանակ գէպի Կովկաս, ընդհակառակը գէպի հարագաղթելու պատճառը եղաւ՝ օգտւելով իր «լիազօրի»ի հանդամանքից եւ զրաւելով Ամերիկեան միսիոնար եւ Դաշնակիցների ներկայացուցիչ՝ Դօկտոր Շէղի փայլուն ոսկիներից: Նա արգելք եղաւ մեր շատ ձեռնարկներին՝ ներքին խարդաւանքներով ու զանազան որովայժմներ լարելով եւ միտումնաւոր տեղեկութիւններ տալով Կովկասից: Ինչպէս լուել այն վատ դաւագիրների հանդէպ, որոնք աէր գարձած ուսւ կառավարելիք խաչագողների հանդէպ, որոնք աէր գարձած ուսւ կառավարութեան պիտական բարեկործական (կարմիր խաչ, քաղաքների միութիւն, բարեգործականի) հիմնարկութիւնների լքւած գոյքե-

*) Ճերմակը լիազօրւած էր Հ.Յ.Դ. Ալրպատականի Կ. Կոմիտէից որոշ բանակցութիւնների համար, որոնք նոյնպէս ամսողեցին նրա ապիկարութեան հետեւանով: Նա Կովկասի էր, կարծեմ Շուշեցի, Բողեան ազգանունով, որ ախորժելի չիմելու համար փոխել էր Ճերմակի: Թարգիգի քեմական դպրոցի հոգարաքութիւն, բարեգործականի հիմնարկութիւնների լքւած գոյքե-

րին, զազրելի խարէութիւններով թոյլ չտւին ոչ միայն լայն կերպով օգտագործել կրծքները թշնամուն դէմ տւած բանակի համար, այլ մինչեւ իսկ խաչաղողին յատուկ ճկունութեամբ աշխատում էին վկայաթղթեր պատրաստել պատշաճ մարմինների կողմից, այդ հարըստութիւնը թալանելու համար: Ինչպէ՞ս կարելի էր մոռացութեան տալ որոշ խմբակների քաղաքական խաղերն ու գաղտնի աշխատանքները, որոնց հետեւանքով հայ գաղթականութիւնն էլ քարշ ընկառ մինչեւ անապատները: Եւ, վերջապէս, ի՞նչպէս անտարբեր մնալ հերոսական կոփեների ու թանկագին զոհերի համդէպ:

Օ՛, ամէն, ամէն ինչ պէտք է պատմել ու պարզաբանել Մեծ Ընկերոջ, սպասել նրա վերջին խօսքին: Սակայն նա էլ գալիս էր տառապած ժողովրդի՝ գրկից, ծանրաբեռնւած՝ նրա վշտերով: Գալիս էր կուի վայրից, ուր մարել էին շատ թանկագին կեանքեր, ուր վերջին շունչն էր փշել հերոսին վայել մահով Սերաստացի կարիճ Ռազմիկը՝ Մուրագը: Նրան էլ յայտնի էր Հայաստանի Հանրապետութեան ծնունդը, հայ ժողովրդի համատարած սուզի մէջ: Յուսոյ մի կայան հայ կեանքի փոթորկայոյզ ովկեանում:

Եւ նա լսեց ու նրա վշտահար ծով սիրար յուզեց: Խաղաղ ու ժպտուն դէմքի վրա կնճիռները սեղմէւցին, եւ նա մուայլեց: Հայ ժողովրդի թշտառութիւնը համատարած էր, վէրքը խորը, ժողովուրդը բգկաւած, տեղահան ու ցիրուցան . . . :

Քայլում էր նա մտախոհ ու մտածկոտ փոքր սենեակում շարունակ խաղալով իր նոսր միրուքի թելերի հետ: Նրա զինուորի կոպիտ կոչիկի վրբխկ վրբխկոց ընդհատում էր սենեակի լուսութիւնը: Եւ, յանկարծ, կանգ առաւ ուղիղ իմ գիմաց: Նրա մոռայլ, սուր հայեացքը վարկենապէս աղքեց վրաս, եւ ես չփոթւածի նման մնացի սառած: «Պիտի յանզիմանի», անցաւ մտքում:

«Ճերմակի մասին քո եւ ընկերների դժգոհութիւնը հասկանալի է, որովհետեւ այդ մարդը ընդունակ չէ նման աշխատանքներ կատարելու, բայց ո՞վ է մեզաւորը»: Այնպէս չեշտւած հարցրեց նա, որ ես այլայւած չէի իմանում ո՞ւր նայեմ: Մի ակնթարթ լուսութիւնից յետոյ նա աջ ձեռքի ցուցամատը ուղղելով ինձ՝ պատասխանեց՝ «Դուք»: Եւ շարունակեց.

«Եթէ դուք կուսակցական կարգապահութիւն ունենայիք եւ հասկանայիք կուսակցական օրէնքները, ձեր մէջ չէիք ընդունի մի մարդու, որ եկել է առանց որեւէ յանձնարարականի. ես զիտեմ, որ ոչ մի մարմին մեր կուսակցութիւնից յանձնարարական չէ տել նըրան, որովհետեւ նա Դաշնակցական չէր: Իսկ ձեր բարձր մարմինը ոչ միայն ընդունել է այդպիսի մեծամիտ, պարծենկոտ մարդուն իր

շարքերում, այլեւ բազմեցրել է իր կողքին ու լայն լիազօրութիւն է վատահացել նրան: Պարզ է որ նա պիտի շահապործէր այդ լիազօրութիւնը եւ յոխորտար, կաշառէր եւ վիժեցնէր ձեր ձեռնարկները, հակառակ գործէր ձեզ: Ձեր բարձրագոյն մարմինը պատասխանատու է իր այդ քայլի համար»:

Ռոստոմի նկատողութիւնը, անշուշտ, ձիշտ էր, ի՞նչ կարող էի պատասխանել, բայց գաւառում մեզ անյայտ էր այդ հանգամանքը եւ ոչ էլ ձերմակին ճանաչող կար: Անշուշտ, նա Դաշնակցական չէր. առաջին իսկ օրից նա իր կեցւածքով եւ անմիտ կարգադրութիւններով իր դէմ հանեց ոչ միայն գաւառի մարմիններին ու ընկերներին, այլև Վասպուրականի բոլոր ընկերներին: Բացի այդ նա Համադանից անմիջապէս ճանապարհուեց Թէհրան, աւելի շուտ փախար գաղտնի, դատի չենթարկելու համար: Թէհրանում մի քանի օր մնալով ընկերների մօտ՝ նորոգեց Հագուստները, Ժամանակաւորապէս ապահովեց ապրուստը եւ ապա անցաւ նոր ծայր տւած հակառակորդների կողմը:

Ու Ռոստոմի եւ Արարատեանի հետ մէնք երկար խօսեցինք օրւայ հրատապ խնդիրների մասին: Նրանք շատապում էին, մանաւանդ Ռոստոմը, որ շանկանում էր իր կարեւոր գործերը աւարտել եւ անմիջապէս վերադառնալ Հայաստան:

III

Տառապանքի օրերը կարծէս մեղմանում էին: Բաղուի դաղթականութիւնը ինուիլից վերադառնում էր իր արիւնոտ օջախը, դրկւած ոչ միայն սիրելիներից, այլև ամրող ունեցւածքից: Անգլիացիները այդտեղ եւս ցոյց էին տել իրենց անբարեցակամ տրամադրութիւնը դէպի տեղահանւած հայ ժողովուրդը:

Դազինի դաղթականութեան վիճակը փոքր ինչ աւելի բարւոքելու դիտումով մանրամասն զեկուցումով, Գաղթականական Մարմնի նախադահ Գրիգորեանի հետ մեկնեցինք Թէհրան, ուր Արարատեանի հետ ներկայացանք Պարսկահայ Ազգային Խորհրդի նիստին: Խորհրդարդը լսեց մեր զեկուցումը, մանրամասն հարցելով բարւարեց իր հետաքրքրութիւնը, գոհունակութիւն յայտնեց Գաղթականական Մարմնի կատարած աշխատանքների համար եւ ունեցած զրամի համապատասխան՝ նպաստը բարձրացրեց՝ իւրաքանչիւր չնչին մի զուան (100 սանտիմ): Դժգոհ լինելու հիմք չկար: Սակայն հանգստացած, հոգեպէս փոքր ինչ խաղաղած դաղթականութիւնը ունէր իր սուր կարիքները, որոնցից մէկն էր երեխաների կրթութիւնը: Տեղական ծիսական գալրոցը բաւարար տեղ չունէր

ընդունելու աւելի քան 130 նոր աշակերտ-աշակերտուհի։ Մտածեց առանձին դպրոց բանալ եւ այդ առթիւ խորհրդակցւեց Հ. Յ. Դ. տեղական մարմնի հետ, որ ընդառաջ զնալով՝ նշանակեց երեք հոգինոց հոգաբարձական կազմ. — Ղ. Թամրազեանին, Ս. Սուքիասեանին եւ տողերս գրողը — խոստանալով նաև իր բարոյական աշակերտիւնը։

Հոգաբարձութիւնը անմիջապէս գործի անցաւ եւ յաջողութիւն ունենալու համար յայտնի հարուստ Աւետիս-խան Տէր-Գրիգորեանին հրաւերեց հոգաբարձութեան պատւաւոր նախագահ, որ ուրախութեամբ համաձայնեց եւ ամենաջերմ աջակցութիւն ցոյց տևեց թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս։ Կարճ ժամանակում դպրոցը բացւեց ամէն յարմարութիւն ունեցող շէնքի մէջ։ Դպրոցի բացման նիւթական օժանդակութիւն ցոյց տւին նաև Հայկազ էֆէնդի Գույիմճեանը, Եղբարք Թումանեանները, Միքայէլ-խան Բարխուդարեանը, Զոհրաբ-խան Զարդարեանը, Սուքիաս Սուքիասեանը եւ ուրիշները։ Այս դպրոցը չարունակեց մինչեւ գաղթականութեան վերադարձը, ամբողջ երկու ուսումնական տարի։

Հետզհետէ տարածւեցին պատերազմի վերջաւորութեան շշուկներ, որոնք չուտով դարձան իրականութիւն, բայց դրանից դրութիւնը չփոխեց. ներքին կեանքը աւելի վատթարացաւ. ծայր էր տեհել անիշխանութիւնը. ճանապարհները դարձան վտանգաւոր. բորբոքած կրքերը իրենց պոռթիկումներով ստեղծեցին դժւարին կացութիւնը։ Համեմատած ուրիշ տեղերի հետ Պարսկաստանում կացութիւնը աւելի խաղաղ էր, սակայն մէնք էլ կտրած էինք արտօքին աշխարհից, մանաւանդ մէր մանուկ Հայաստանից, եւ այդ անսահման մտահոգութիւն եւ տառապանք էր պատճառում։ Երբեմն միայն Արարատեանը կարողանում էր դեսպանատներից տեղեկութիւն ստանալ։ Նա արդէն թէհրանում աչքի ընկնող դիրք էր վայելում ոչ միայն հայ հասարակութեան, այլև պաշտօնական ըրջաններում։ Նրա միջնորդութեան պէտք է վերագրել, որ անդիմացիները բոլորովին անսպասելի կերպով Ղազեինի գաղթականների հոգատարութիւնը վերցրին իրենց վրա, բոլոր ծախսերով եւ իւրաքանչիւր չնշին տալով օրեկան մի դռան 10 շահի, որով տեկի բարեւքեց գաղթականութեան դրութիւնը։ Ինձ վիճակեց ստանձնել գաղթականների հոգատարութեան ու գործի հսկողի եւ ներկայացուցչի պաշտօնը։ Ժամանակի ընթացքում, կամաց-կամաց մոռացւեցին գաղթի տանջանքներն ու հոգեկան խոռվքը։ Կեանքը ըսկըսում էր մտնել իր բանականոն ընթացքի մէջ։ Այժմ արդէն ասլ-

րում էինք նոր յուղումներով. այնուղ, հեռու, ծնւել էր երեւանեան մանուկ Հանրապետութիւնը, մեր ընդարձակ հայրենիքի մի փոքրիկ մասնիկի անկախութիւնը, ազատ Հայաստանը։ Որպիսի՞ բերկրանք ու ոգեւորութիւն։ Հայը այժմ շրջում էր բաց ճակատ ու հպարտ. զգում իր յաղթանակի մեծութիւնը։

Հայկական կառավարութիւն, Հայկական գրոց, Հանրապետութեան նախագահ, նախարարութիւն, խորհրդարան, ազգային բանակ, զինւորականութիւն - բոլորը հայկական եւ հայկական օրէնքի տակ։ Երա՞զ օրեր։ Ի՞նչ զրիչ կարող է նկարագրել այդ օրերի խանդավառութիւնը։ Ո՞ր լեզուն կարող է արտայայտել հայի ազգային զգացմունքների փոթորկայոյզ վիճակը։ Ամենքի մտքին եւ լեզւին միեւնոյն ցանկութիւնն էր տիրում. «Պէտի Հայրենիք», «Գնա՞նք ազատ Հայրենիք»։ Եւ այդ բառերը արտասանում էին այնպիսի՝ անկեղծութեամբ ու ոգեւորութեամբ……

Ես էլ տարւած էի Հայրենիք վերադառնալու մտքով։ Եւ մի օր քայլերս ուղղեցի գէտի անգլիական «Պոլիտկըլ ՕՓիսը», խնդրեցի ազատ թողնել ինձ պաշտօնից, որովհետեւ ցանկանում էի գնալ Հայաստան։ Զգիտեմ ինչպէ՞ս արտասանեցի այդ բառերը եւ ինչպէ՞ս թարգմանեց թարգմանը. բայց զգում էի, որ սիրոս հանդիսան չէ. ինչ որ բան էր կատարւում այնտեղ, եւ հաճելի յուզմունքից շըրթունքներս գողում էին։

Թարգմանի խօսակցութեան ժամանակ «Պոլիտկըլ ՕՓիս»-ի պաշտօնեան պաղ ժպիտը զէմքին շարունակ նայում նր ինձ. արգեօ՞ք նա զգաց իմ հոգու վիճակը, ըմբռնե՞ց իմ ցանկութեան վեհանջութիւնը, չգիտեմ, միայն անընդհատ նայում էր ինձ, իսկ ես՝ նրան։ Եւ պատասխանը եղաւ մերժողական։ Ես վարժած էի անզրիփացու չոր ու ցամաք զգացմունքներին, բայց այլքան չէի սպասում։ Մերժումը շատ վատ աղեց վրաս։ Տրամադրութիւնն փոխւց։ Պաշտօնեան նկատեց այդ եւ կարծեն ինձ հանգստացնելու համար ասաց։

«Այս գաղթականութիւնն էլ նոյն ժողովուրդն է և նոյնպէս պիտի գնայ Հայաստան։ Այժմ ճանապարհները խիստ վտանգաւոր են, տեղ չէք կարող համար։ Հայաստանի բախտը դեռ որոշած չէ, պէտք է սպասել հաշտութեան խորհրդաժողովին»։ Ես այս կարգի խօսքեր, որոնք աւելի եւս աղեցին վրաս։ Ի՞նչ է նշանակում թէ Հայաստանի բախտը գեռ որոշած չէ։ Միթէ՞ կարող է հակառակը լինել։ Միթէ՞ այդ փոքրիկ տարածութիւնն անզամ կարող են չտալ մեզ։ Միթէ՞ մէր անկախութիւնը դեռ եւս հարցական է։

Այս մռայլ մտքերով պաշտօնած երբեմն յուզում էի, երբեմն

յուսադրում եւ շարունակ խարխափում էի անորոշութեան մէջ անցնող օրերի հետ։ Երբ քիչ յետոյ եկաւ Ս. Արարատեանը Հայաստան անցնելու համար, ես նորից պնդեցի Հրաժարականիս վրա, բայց պատասխանը եղաւ մերժում։ «Գաղթականութեան հետ եկել ես, գաղթականութեան հետ էլ կը գնաս»։ Եւ ես մնացի յուսահատ։

Աշնան օրեր էին։ Հետզհետէ մռայլում էր բնութիւնը։ Մռայլ էր եւ մեր սիրտը։ Անմիխթար զուրեր էին տարածում մեր թանկագին հայրենիքի մասին։ Զարհուրելի պատմութիւններ էին շրջան առնում։ Պատմում էին, թէ՝ Աղրբէջանի ժուրքերը Բագուից ճանապարհող հայերին երկաթուղու վագոններից բոնի կերպով յափշտակում, գուրս են բերում և անյայտացնում։ Զայը անվտանգ ճամբորզել չի կարող այդ գծի վրա։ Թէ՝ նորարոյս Աղրբէջաննեան կառավարութիւնը թշնամական զիրք է բոնել եւ նաւթ չէ ուղարկում Հայաստանին։ Թէ՝ Վրաստանի եւ Աղրբէջանի կառավարութիւնները դաշնակցած, թիկունքում ունենալով տաճիկին, օղակել են Հայաստանը ու գեւարութիւններ են յարուցանում երկաթուղիների երթեւեկութեան եւ մթերքների փոխադրութեան համար, եւ Վրաստանը թերթեւամիտ մեծամտութեամբ ամբարտաւանացած՝ յոխորտում է Հայաստանի դէմ։ Եւ ուրիշ այս կարգի յուզիչ ու վրգովեցոցիչ լուրեր։ Բայց այդ գեռ բոլորը չէր պատմում էր նոյնպէս, թէ մանուկ Հայաստանը ներքին ծանր տաղնապ է ապրում, թէ այսուեղ սով է, ուտելիք դժւար է ճարտում, թէ տարափոխիկ հիւանդութիւնները համաճարակի բնոյթ ստացած բազմաթիւ զոհեր են տանում, թէ այդ զոհերի մէջ է եւ մեր անդժւգական Արամը։

Արամը վախճանաւա՞ծ, միթէ՞ այդ ճիշտ էր։ Զէինք հաւատում։ աւելի ճիշտ՝ չէինք ուզում հաւատալ։

Արամին ես վաղուց էի ճանաչում, ու 1904 թւի աշնան վերցներից, երբ նրա երկիր անցնելը չյաջողւելով՝ Ս. Թաղէսս Առուաքեալի վանքից վերադարձաւ Սալմաստ։ Զերմ ու մտերիմ օրեր ապրեցինք բաւական ժամանակ։ Եւ ես լաւ ճանաչեցի այդ համեստ, խելացի, կամքի տէր ու գաղափարին գերի դարձած երիտասարդին, որ նոր էր ոսք դրել յեղափոխական գործի ասպարէզ եւ վճռել էր աշխատել երկրում։ Առանձնապէս շեշտած մի գիծ կար նրա գրաւիչ բնաւորութեան մէջ, որ աւելի փայլ էր տալիս նրան անսահման ընկերասիրութիւնը։ Նա ընկեր էր իսկական հասկացողութեամբ։

Որպէս յեղափոխական Արամը երկար տարիներ մնաց Վասպուրականում, մինչեւ սահմանադրութեան հռչակումը։ Եւ իր չարքաշ, տոկուն ու յամառ աշխատութեամբ աչքի ընկաւ ու ոչ միայն իր շըր-



ԵՇԱ. ՅԱՎԱՐԵԿ ԱՐԳԱԽԵՄԵՆ

ջապատի սէրն ու յարգանքը վայելեց, այլ եւ արժանացաւ կուսակցութեան մեծագոյն վատահութեան։ Տառապեց ինչպէս եւ միւս ընկերները, վատանուն դհերցի Դաւոյի գաւաճանութեան հետեւանքով, բայց տոկաց յեղափոխականին վայել դիմացկանութեամբ տաճկական բանտի հրէշտառը տանջանքներին։

Համաշխարհային պատերազմի նախօրեակին Արամը չընկաւթալէթ-էնիլէրեան արիւնոտ ծողովակը։ Նա մնաց սիրած ժողովրուդի հետ, այդ կտրիճ ժողովրուդի հետ։ մղեց Վանի հերոսամարտը եւ հիմքը զրեց Հայկական առաջին ազատ իշխանութեան՝ ուսւկառավարութեան կողմից նշանակւելով Վասպուրականի նահանգապետ։ Աւա՛զ, սակայն, կարճ տեսեց այդ զմայելի օրերը։ Վրահասաւ տնաւեր գաղթի խուճապը։ Դատարկեց եւ ամայացաւ փարթամ Վասպուրականը։ Կործանւեց Վանը, որ անւանուում էր Հայաստանի Փընեւը……

Արամը սակայն չյուսահատւեց այդ դժբախտ հարւածից։ Նա տնձնազութեամբ շարունակեց մնալ դիրքի վրա, մինչեւ որ դարձաւ Հայաստանի անկախութեան մեծագոյն դարբնողներից մէկը։ Եւ դեռ իր բեղուն աշխատանքը չաւարտած, դեռ չվայելած յաղթանակի փառքը – փակեց աչքերը ընդ միշտ։

Տիուր ու մտահոգիչ լուրերը, մէկը միւսից սեւ, ճնշում էին ամենքիս սիրալ։ Մեր օրերը անցնում էին անորոշ եւ անմիխթար։ Մէկ էլ Հայաստանի Բագուի գեսպան Մարտիրոս Յարութիւնեանից տեղեկութիւն հասաւ, թէ՝ Հայաստանի Հանրապետական կառավարութիւնը Պարսկաստանի դեսպան է նշանակի Խշխան Յովսէկ Արդուրեանին։ Դեսպանը շուտով կը նախապարհի։

Հրաշալի յարութիւն էր մեզ համար։ Մուայլած ճակատներս մէկն պայծառացան։ Լուրը կայծակի արագութեամբ տարածւեց սմէկն կողմ։ Խանդավառութիւնը հայ ժողովրուդի մէջ անսահման էր տեղացող հարցերը՝ անսպառ։

– Ե՞րբ կը այս Հայոց Դեսպանը։ Կեցցէ՛ Հայոց Դեսպանը։

IV

Հարաւային պարսկահայութեան մեծագոյն մասի համար անծանօթ էր նշանակւած Նոր Դեսպանը։ Բայց մեզ համար նոր մարդ չէր նա։ Նա մեր Երևանդն էր, յեղափոխական, Դաշնակցական Երւանդով։ Վանի Տաշօն, որ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութեան օրերից սկսած մասնակցել է գործնական աշխատանքներին եւ եղել զեկավար ընկերներից մէկը։ 1892 թւին աքսորից վերադառնալով՝ զեկավար ընկերներից մէկը։ 1897 թ. դեռ անցաւ Պարսկաստան-Մարպատական, ուր մինչեւ 1897 թ. դե-

կավարեց կուսակցական աշխատանքը : 1894-ին Պէտօփ հետ անցաւ Վան և 1895-ի գարնանը վերադարձաւ կարեւոր յանձնարարութիւններով :*)

1897-ին, «Մանասօրի Արշաւանք»-ին հաւաքւած հայրուկների կողմից ընտրեց հրամանատարի օգնական : Արշաւանքից յետոյ Սալմատում սկսւած խիստ հալածանքների հետեւանքով ձերբակալւեց պարսիկ կառավարութեան կողմից, որպէս «զաշաղ-բաշի» : Բանտում մնաց ամենածանր պայմաններում եւ հնթարկւեց պարսկական բանտին յատուկ սոսկալի տանջանքներին : Ապա ոռուսաց հիւպատասսի պահանջով փոխադրւեց Թաւրիկ եւ յանձնեց հիւպատոսին, որի կողմից ճանապարհուեց կովկաս եւ որտեղից ոռուս կառավարութիւնը նրան աքսորեց հիւսիս՝ վոլոգդա քաղաքը :

Քառորդ գար առաջ նա ծպտւած ու կեղծ անցագրով մտաւ Պարսկաստան իրեւ յեղափոխական : Այժմ գալիս էր յաղթական, որպէս անկախ պետութեան դեսպան - ի՞նչ աւելի ոգեւորիչ փաստ :

Բուռն էր հայ ժողովրդի ուրախութիւնը : Համերաշխ ու միաբան ամենքը պատրաստութիւն էին տեսնում շքեղ ընդունելութիւն ցոյց տալու մեր նորազատ Հայրենիքի անդրանիկ դեսպանին : Հայ ժողովրդի բոլոր խաւերը՝ դաշնակցական, հնչակեան, չէզոք, մինչեւ իսկ մատի վրա համարւող ռամկավարները : Ամբողջ գծի վրա - էնզելի (այժմ Փէջէւի), Թաշտ, Ղազին, Թէհրան, հայ բոլոր համայնքները ոտքի էին ելել : Անմոռանալի օրեր էին :

**

1920 թ. Դեկտ. 24-ի կէսօրին, գիշերւայ փոթորիկի պատճառով սպասւածից ուշ, էնզելիի նաւահանգիստը հասաւ եւ ամից հեռու կանգ առաւ Բագուից եկող հսկայ նաւը : Մակոյկներով դէպի նաւը շտապեցին մաքսատան եւ անցագրային պաշտօնեաները, եւ պաշտօնական որոշ ձեւակերպութիւնից յետոյ նաւը շարժւեց դէպի քարափ, ուր խոնած էր հայերի հսկայ մի բազմութիւն : Հայ երեսապարզները շտապեցին դէպի նաւ եւ գուրս գալով ցնծութեամբ աւետեցին Հայաստանի Հանրապետութեան Դեսպան իշխան Յովսէփ Արզութեանի ժամանումը :

Ցերեկւայ ժամը մէկն էր : Ոռորը կայծակի արագութեամբ տուրածւեց ամէն կողմը :

*) Նրա կենսագրականում («Իրօշակ» 1925 թի № 5) գրւած է «Արդութեանը մի անգամ եւս զինւած խմբի հետ անցաւ Վան» : Առ երկրորդ անգամ Վան չի անցել յեղափոխական շրջանում :

Ընդունելութեան կարգադրիչ յանձնախումբը եւ էնզելի հայ համայնքի ներկայացուցիչները նախագահութեամբ եւ Եսայեանի դիմաւորեցին դեսպանին նաւի վրա եւ սրտառուչ բարի գալուստ մաղթեցին : Դեսպանին ընկերակցում էր իր ընտանիքը՝ իշխանունի տիկ . Սաթենիկը, իր աղջիկը՝ օր. Արփիկը, Խորհրդական՝ թժիշկ թիկ . Յարութիւնեանը եւ գլխաւոր քարտուղար Սուրէն Առաքելեանը : Նաւում դիմաւորեց եւ ըրջանի դատաւորը, որ կեդրուսկան կառավարութեան կողմից շերմութեամբ եւ սիրով չնորհաւորեց Հայաստանի անկախութիւնը եւ դեսպանի բարի գալուստը :

Իշխանը չնորհակալութիւն յայտնեց դատաւորին ցոյց տւած յարգանքի համար, զրւատելով հայ-պարսկական բարեկամութիւնը եւ յոյս յայտնելով, որ հետզհետէ աւելի սերտ եւ ամուր հիմերի վրա կը գրւի երկու հարեւան պետութիւնների բարեկամութիւնը : Յայտնեց նաեւ Հայաստանի Հանրապետութեան գոհունակութիւնը, որ Շահն-Շահի բարեխնամ կառավարութեան ներքոյ հայ ժողովուրդը միջտ ապրել է խաղաղ ու անդորր :

Մինչ նաւում տեղի էր տեսնում պաշտօնական այս տեսակցութիւնը, դուրսը ժողովուրդը ոգեւորւած, բերկանքով լեցւած, խումբ խումբ բռնել էր այն ճանապարհը, որտեղով պիտի անցնէր դեսպանը իրեն համար յատուկ պատրաստւած բնակարանը : Եւ ահա դուրս եկաւ նա, պարթեւ հասակով, լայնաթիկունք, բարի ու խելացի հայացքով, վայելչակազմ մի տղամարդ, թէեւ արդէն վաթսուն գարունը անց էր կացրել : Նրան հետեւում էին տիկին Սաթենիկը, ալէ-հակ մազերով, ակնոցը աչքերին, լուրջ ու խոհուն, իշխանի տառապած օրերի անբաժան ընկերը . սրա կողքին իշխանի մինումար դուստրը, ապա խորհրդականն ու քարտուղարը : Նրանց ըրջապատել էին կարգադրիչ յանձնախումբը անդամները եւ համայնքի ներկայացուցիչները :

«Կեցցէ՛»ն թնդացրեց օդը : Ոգեւորւած ժողովուրդը խելայեղ մեծարանքով ողջունեց իր գեսպանը . . . :

Հայաստանի անդրանիկ դեսպանի ժամանումը հեռագրւեց Պարսկաստանի բոլոր հայարնակ քաղաքները . . . :

(Շարումակելի)

ՊՐՈՖ. Զ. ԱԽԱԼՈՎ.

ԲԱԹՈՒՄԻ ԽՈՐՀԾԻԱԺՈՂՈՎՐԾ

ԳԼՈՒԽ Բ.

5. Ի՞նչ Անել

Որ 1918 թւի գարնան պայմաններում տաճիկները, Բաթումն ու Կարսը գրաւելուց յետոյ, պիտի ցանկանային ստանալ եւ Ախալցիսն ու Ալեքսանդրապոլը, դրա մէջ ոչ մի անսպասելի բան չկար մհացնից շատերի համար :

Հարց էր առաջ գալիս՝ ի՞նչ անել :

Եթէ տաճիկների դէմ հնարաւոր էր ստանալ աջակցութիւն, այդ կը լինէր սոսկ դիւանազիտական աջակցութիւն, որ կարող էին տալ միայն գերմանացիները : Անդլացիների եւ Փրանսացիների օգնութեան մասին, որոնց կողքին մեր ժողովուրդները՝ ամբողջ Ռուսաստանի հետ մէկտեղ՝ 1914 թւից սկսած տանում էին պատերազմի ծանրութիւնները, խօսք իսկ չէր կարող լինել : Անդլացիները՝ Հիւսիսային Պարսկաստանում՝ բաժանւած էին մեզանից թէ տարածութեամբ, թէ բոլեւիկեան պատնէշով բազւում . եւ առհասարակ նլրանց հետ յարաբերութիւն հաստատելն այդ ժամանակ անհնար էր :

Ինձ անձնապէս հողային հարցերն այնքան կարեւոր չէին թւում, որովհետեւ որոշած սահմանները չէին կարող վերջնական համարւել, քանի դեռ պատերազմը շարունակում էր : Ես մեկնեցի Բաթում այն կատարեալ համոզումով, որ Գերմանիան Անդրկովկասով հետաքրքրութ է ոչ միայն նրա հարստութիւններից մի քանիսը պատերազմում օգտագործելու համար, այլ աւելի եւս Մերձաւոր Արեւելքի մէջ թափանցելու գերմանական ընդհանուր ծրագրի տեսակէտից : Գերմանիան, մտածում էի ես, Տաճկաստանի դաշնակիցն է եւ չի հակառակի ոչ այն բանում, որ Տաճկաստանը անելու լինի պատերազմի ընդհանուր դեկալարութեան մէջ, ոչ էլ այն յատուկ տաճկական ձգտումների մէջ, որոնք ունեէ կերպով կը հիմնաւորւեն և որոնց բաւարարելլ կը համարւի մի տեսակ տուրք Տաճկաստանի աշխա-

տանքների համար : Բայց Տաճկաստանը, անկասկած, կանցնի այն սահմաններից, որոնք անհրաժեշտ են պատերազմը մզելու համար եւ կամ որոնք իրեն են «համնելու» :

Եւ ահա այստեղ է, որ թւում էր թէ՝ որքան որ այս դաշնակերցը իրեն թոյլ կը տայ որեւէ ինքնազլուխ քայլ, որեւէ ազատ շարժում, կարելի կը լինի նրա գլխին հակաշխու բանեցնել . կամ նոյն իսկ արգելք դնել էր աւելի երէց, աւելի հզօր եւ աւելի խելահաս դաշնակից՝ Գերմանիայի կողմից : Դրա համար հարկաւոր էր միայն համապատասխան գործելակերպ, որոշ նախապատրաստութիւն :

Տաճիկները գրաւում են Բաթումը, Օղուրգեթն եւ Ախալցիսն, մեծ է հրապոյրը գրաւելու նաեւ Թիֆլիսը ուղղակի Բազուկի հետ կապւելու համար եւ ուրիշ շահերով : Այդ պէտք է խանգարել եւ դըրան կարելի է արգելք հանդիսանալ . կարելի է եւ հնարաւոր է կանխել թիւրքերի նկրութումը Վրաստանի ներսը :

Ազրբէջանը, ով դիտէ, դեռ տաճիկներից օգնութիւն կը խնդրէ թէ՝ Բագւում նստած բուշեւիկների դէմ կուելու եւ թէ անիշխանութեան հակազդելու համար : Ի՞նչ արած : Վրաստանում մեղ հարկաւոր չեն թիւրքերը : Հայաստանը : Ոչ առանձին, ոչ էլ Վրաստանի հետ միասին նա չի կարող պատերազմել Տաճկաստանի հետ, գին ուղմածակատը քայլայւած է, իսկ նոր ճակատ անհնար է ստեղծել, երբ թշնամին արդէն մեր երկումն է եւ երբ մեր երրորդ դաշնակիցը՝ Ազրբէջանը բաց եւ առանց այլ եւ այլութեան յայտարարել է, թէ ինքը Տաճկաստանի հետ չի պատերազմելու :

Գերմանիան կօդնի՝ Հայաստանին մի կերպ գիմանալ այս վորիկին : Հայկական պատերակները հնարաւորութիւն ունեն այտեղ այդ մասին խօսելու անմիջապէս գերմանական ներկայացուցչի հետ : Եւ նրանք այդ հնարաւորութիւնը ձեռքից բաց չեն թողնում : Բարի յաջողութիւն : Բայց Հայաստանը առ այժմ պէտք է աշխատի անհկատելի գառնալ՝ հրաժարելով զինւած գիմանալութիւնից, որը չէ որ անօգուտ է : Վերջը կերեւայ :

Այսպէս սկսում էր յայտնի գառնալ Անդրկովկասեան գիրքի անյուսալիութիւնը եւ թելաղրութ էր - գէթ վրացիների համար - վըրացական գիրքի անհրաժեշտութիւնն ու հնարաւորութիւնը : Եւ այդ ոչ միայն դուրս գալու կամ գործնական ելք գտնելու նպատակով այն դաժան պայմաններից, որոնք ստեղծել էին Անդրկովկասի եւ Վրաստանի համար 1918ի ամառաւ սկզբները, չնորհիւ Ռուսաստանի Կայսրութեան կատարեալ քայլայւածն : Ոչ, օրւայ այդ անյետաձըգելի եւ սուր հարցից յետոյ գալիս էր, ի հարկէ, մի աւելի խոր պատմական պարտականութիւն մեր սերնդի համար, որքան հնարա-

ւոր է, աջակցել, այս նոր պայմաններում, վերականգնել կամ ստեղծել մեր կովկասեան ժողովուրդների ազգային-պետական ապագայի հիմքերը: Եթէ ոչ այժմ եւ ոչ մեր ձեռքով, ապա ե՞րբ եւ ո՞ւմ միշնցով պէտք է դրւին այդ հիմքերը:

Անհրաժեշտ էր - օգտւելով առիթներից - գտնել ուղիներն ու իրականացման ձեւերը այն բանի, որ զգացւում էր օդում իրրեւ հասած, բայց դեռ միս ու արիւն չըարձած իրականութիւն: Երկու խօսքով ասած՝ անհրաժեշտ էր կանգնած մնալ Անդրկովկասի դիրքի վրա ինչպէս որ կազմւել է պատահաբար, մինչեւ վերջին վայրուկան, ապա անցնել ազգային դիրքերը եւ շարժւել առանձին, իսկ որ դլաւորն է, մեր ժողովրդների իրաքանչեւրի պետական գիտակցութեան մէջ ամրացնել իրենց անկախութիւնը եւ յետոյ, առաջին իսկ հնարաւոր դէպքում, ամրապնդւած հիմքերի վրա հաստատել, Անդրկովկասի կամ Կովկասի քաղաքական ամբողջութիւնը:

Այդ ծրագրի առաջին մասն էր, որ իրագործեց Անդրկովկասեան Պատուիրակութիւնը: Ապա Բաթումում վրաց պատուիրակութիւնը եւ Թիֆլիսի վրացի գործիչները - Վրաստանի անկախութեան հռչակումով - պատրաստեցին Վրաստանի, Հայաստանի եւ Ազրբջանի ձեւակերպման փոխանցումը:

Այդպէս էր մտածում իրերի ընթացքը: Վճիռը ինձանից կախուած չէր, բայց ես կարող էի ազգել նրա վրա, իրեն պատուիրակութեան եւ նրա վրացական բաժնի խորհրդականը բոլոր կարեւոր հարցերի վերաբերմամբ:

6. ԳՐՉԱՄԱՐՏ

Մենք անմիջապէս վէճի բոնւեցինք տաճիկների հետ հիմք ունենալով նրանց ներկայացրած զաշնագրի նախագիծը: Մեր բաւական ողբալի վիճակում յուշագրերն ու յայտագրերը միակ զէնքն էին:

«Վիճարանական գրութիւնների» մէջ - նրանց կազմելը ինձ վրա էր դրած - մենք կանգնեցինք խիստ ձեւական գետնի վրա. աշխատեցինք Թիւրքիայի դէմ դարձնել նոյն այդ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, որով նրանք գեռ Տրապիզոնում ուղում էին խեղդել Անդրկովկասը:

Այսուղ, Բաթումում, Տաճկաստանն առաջարկում էր մեզ, ինչպէս տեսանք, նախ՝ բարեկամութեան եւ հաշտութեան զաշինք, երկը կըրորդ՝ համաձայնութիւն ուազմական գործերի մասին, եւ, վերջապէս, կողմերի «բարի զրացիութեան» վերաբերող յատուկ համաձայնութիւն:

Մենք այդ առաջարկին պատասխանեցինք այսպէս. հաշտութեան

հիմնական դաշնագիրը եւ լրացուցիչ համաձայնութիւնը զինւորական հարցերի մասին պէտք է կնքւի ո՛չ թէ լոկ Տաճկաստանի, այլ եւ քառեակ Զինակցութեան բոլոր պետութիւնների հետ. իսկ միւս («բարի զրացիական») համաձայնութիւնը յիրաւի կարող է կնքւել մեր եւ միայն Տաճկաստանի միջեւ, (Անդրկովկասեան Պատուիրակութեան մայիս 13 յուշագիրը):

Դրա դէմ տաճիկները ներկայացրին (մայիս 15-ին) հետեւեալ առարկութիւնը. «Ձեզ չի վերաբերում, թէ այն ո՞ր հարցերը ընդհանուր են չորս զինակիցների համար եւ որոնք վերաբերում են նըրանցից մէկին եւ Անդրկովկասեան Հանրապետութեան: Թողէ՛ք, որ այդ մասին մենք՝ զինակիցներս դատենք մեր մէջ»:

Մեր պատասխանը այդ առարկութեան. Ուրեմն, դուք ընդունում էք, որ կան բոլոր չորս պետութիւնների հետ վարւելիք բանակցութիւններին վերաբերող հարցեր եւ միայն մեզ ու ձեզ վերաբերող հարցեր: Բարի: Բնդունում ենք ի դիտութիւն: Դուք, սակայն, գտնում էք թէ այդ բաժանման մասին կը մտահոգւեն իրենք զինակիցները, իսկ մեզ, Անդրկովկասին, ներկայ դէպքում հարկաւոր է միայն լուել: Բայց մենք բնաւ չենք մտնում այն հարցի քննութեան մէջ, թէ ո՞ր կէտն է վերաբերում ընդհանուր դաշնագրին եւ որը՝ մասնակի: Մենք ասում ենք միայն, որ ընդհանուր համաձայնագիրը մենք պէտք է կնքենք ոչ միայն Տաճկաստանի, այլ ըոլոր չորս պետութիւնների հետ: Մեզ, որպէս պայմանագիր կողմերից մէկին, թւում է, ներկայ է հետաքրքրւութեան թէ ո՞վ է ներկայանում միւս կողմը (Անդրկովկասի Պատուիրակութեան 17 մայիս յայտագիր):

Մենք շարունակում էինք հիմնել եւ այս առարկութեան վրա, որ տաճիկները իրաւոնք չունին պահանջելու Բրեստ-Լիտովսկի դաշնագրով իրենց արած զիջումներից աւելին: Այսուղ մեր դիրքը բաւականին թոյլ էր, բայց եւ այնպէս ստիպւած էինք յամառել, որ բոլիչետեւ այդ էր Զիննկելու գլխաւոր փաստը գեռ Տրապիզոնի Խորհրդաժողովի վերջից սկսած իսկ: Այս տեսակէաւ թուլանում էր (այսինքն, որ չեն պատահել նոր հանգամանքներ, որ փոխէին մեր միջեւ եղած միջազգային գրութիւնը, չեն կարող լինել եւ նոր պահանջներ) չնորհւ այնպիսի փաստերի, որպիսին էր Սէյմի բարձրացըրած ուազմահայրենասիրական ամբողջ աղմուկը, իրեւ հետեւանք այն բանի, որ տաճիկները չէին ցանկանում հրաժարել Բաթումիցից եւ Կարսից, Սէյմի ընդունած մի շարք ուազմաշունչ բանաձևերը, Պատուիրակութիւնը Տրապիզոնից յետ կանչելը եւ այլն:

Այս փաստերի հետեւանքով, տաճիկները հնարաւորութիւնը ըստացան պնդելու, որ Զիննկելու Տրապիզոնի յայտարարութիւնը

Բրեստ-Լիտովսկի դաշնագիրն ընդունելու մասին «Հեղեալ հռչակ-
ւած է» Գէգէ Հկորու Կառավարութեան կողմից եւ որ Անդրկովկաս-
եան Հանրապետութեան կողմից պատերազմի վերսկսումը, պատճառ
եղաւ միջազգային դրութեան փոփոխութեան, որը այժմ Տաճկաս-
տանին իրաւունք է տալիս նոր պահանջներ ներկայացնելու:

Մի խօսքով, այս կէտում մեր ոտքի տակի հողը ամուր չէր:
Ուստի, առանձին ուժնութեամբ տաճիկների պահանջների դէմ ուղ-
ղեցինք մենք Բրեստ-Լիտովսկի դաշնագրի սուր կողմը:

«Ինչպէս թէ - ասում էինք մենք - դուք ձեր նախագծի հա-
մաձայն, առանց այլ եւ այլի Օսմանիան Կայսրութեան կաղմի մէջ
էք մտցնում այն Հողամասերը, որոնց պետական եւ միջազգային վե-
ճակը պարմանաւորւած է Բրեստ-Լիտովսկի դաշնագրի 4-րդ յօդ-
ւածով: Զէ՞ որ այնտեղ նախատեսնած են «Հարեւան պետութիւնե-
րի» իրաւունքները. նրանց հետ համախորհուրդ պէտք է Բաթումի,
կարսի եւ Արդահանի շրջանների բնակչութիւնը որոշէ այդ հողա-
մասերի նոր կարգը: Հարեւան պետութիւններ ասածդ նախ եւ առ-
ուաջ Տաճկաստանն է, բայց նաեւ Անդրկովկասը. իսկ այժմ դուք,
պարզապէս գրաւում էք այդ գաւառները, ջնջելով այն դաշնագիրը,
որ մենակ դուք չէք ստորագրել, այն դաշնագիրը, որ մեղ էլ որոշ
մասնակցութիւն է վերապահում գործում: Այդպէս կարելի չէ: (Ճես
Անդրկովկասի 16 մայիս յուշագիրն): Մի խօսքով, այժմ մենք դուքս
էինք գալիս Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը պաշտպանողների դերում:

Վերջին առարկութիւնը առանձնապէս անախորժ էր տաճիկների
համար եւ նրանց պատասխանը (18 մայիս) բացի մատնանշելուց այն
փաստերը, որոնք փոփոխութիւն էին մտցրել կողմերի դրութեան
մէջ Անդրկովկասի Պատիրակութիւնը Տրավիդնից յետ կանչելուց
յետոյ եւ հետազային ամփոփում էր իր մէջ հետեւեալ սպառնալիքը.
«Անդրկովկասի Պատիրակութեան պնդումը, արտայայտելու Բրեստ-
-Լիտովսկի դաշնագրի վերոյիշեալ (այսինքն 4-րդ) յօդածի մասին,
կարող են ամենալուրջ հետեւաններ ունենալ ներկայ բանակցու-
թեանց ընթացքի համար»:

Մենք սակայն կարող էինք այն ժամանակ Բաթումում թոյլ տալ
նման հակածառութեան շառայութիւն գլխաւորապէս այն պատճա-
ռով, որ հնարաւորութիւն ունէինք Տաճկաստանին լիշեցնելու (տես
16 մայիս յուշագիրը), որ «Գերմանական Կայսրութեան պատերա-
կութեան ներկայութիւնն այսուղ պարզ ապացոյց է, թէ Տաճկաս-
տանի դաշնակից եւ նրա հետ միասին Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը
ստորագրող պետուրիւններն անմիջական մասնակցութիւն ունեն

համաշխարհային պատերազմի կովկասեան նակատի հաշւեյարդարի
հետ կապւած գործերում»:

Այս կէտում մենք խաղը չկորցրինք: Մենք «ապացուցեցինք եւ
ցոյց տւինք Տաճկաստանին, որ նա չի կարող ինքնակամ կերպով տը-
նօրինել մեր բախտը»:

Գլուխ Գ.

7. ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ, ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՃՆՇՄԱՆ ՏԱԿ

Չուտ գիւանագիտական աշխատանքի խնդիրը նշմարում էր
բաւական պարզ: Կարելի էր յուսալ, որ մեզ ներկայացւած պա-
հանջներն որոշ չափով կը մեղմացւին Գերմանիայի օդութեամբ:
Բայց ոչ մէկ յոյս չկար, որ Անդրկովկասը հանւէր պատերազմից
եւ դնելով նրան չչորս պետութեան վիճակում՝ ձեռնարկել նրա շի-
նարարութեան եւ անդորրացման: Նրա երկաթուղագծերը հարկաւոր
էին պատերազմող կողմերի համար. իրեն անկախ յայուրարած,
բայց զեռ ամենքից կախած Անդրկովկասի թուլութեան հետեւան-
քով երկաթուղացին այդ ցանցը կոչւած էր զօրացնելու «մէծ երից»
նրան, ով առաջնը ձեռք դնէր նրա վրա:

Բոլոր առաւելութիւններն այսուղ Գերմանիայի ղեկավարած
պետական միութեան կողմն էր, որովհետեւ (1918 թւին ապրիլից
սկսած) տիրելով Կարսին եւ Բաթումին, տաճիկներն արգէն բռնել
էին երկաթուղագծի այն ծայրը, որ միացնում էր տաճկական ռազ-
մագաշտը պարսկականի հետ: Ինչպէս ամէն ոք գիտէ, նոյն այդ
ճանապարհը տանում էր դէպի Բագուի նաւթը եւ թուրքեստանի
բամբակը:

Այլ պարագաներում գործը կը յանդէր յատուկ մի համաձայնու-
թեան երկաթուղագծերն օդապարծելու մասին: Անդրկովկասի կա-
ռավարութիւնն անհրաժեշտաբար զրան էր զնում: Ցաւը, սակայն,
այն էր, որ տաճիկների ներխուժումը Անդրկովկաս անմիջապէս եւ
ճակատագրականօրէն առաջ էր բերում բազմապիսի եւ վասանգաւոր
բարդութիւններ: Պարսկաստան տանող երկաթուղագծին անցնում
էր հայկական գաւառներով. տաճիկները հրապարաւում էին այսուղ
եւս շարունակելու հայերի բնաշնչման այն քաղաքականութիւնը, որ
պատերազմի ընթացքին կիրառել էին Տաճկաստանում: Եւ զրանով
զործագրութեան էր զբում փոխարձ յոշումն թշնամութիւնը
հայ եւ թաթար աղջարնակութեան միջնեւ, որ սնուցւած էր զեռ ոռու-
սական տիրապետութեան օրով: Միւս կողմից, խմորում էին ա-
մէնքը, ով լոկ պատմական աւանդութեամբ, ցեղային կամ կրօնական

ընդհանրութեան հիման վրա կամ առ հասարակ «զբացւած անհրաժեշտութեան» հետեւանքով իրեն համարում էր Տաճկաստանի բնական յաճախորդ կամ հիմա էր իմուրում, որ իրեն յաճախորդ ընդունին: Այդ ամենը սաստկանում, զրգուում էր Տաճկաստանի յաղթական լինելու պատրանքով, որ ուցւում էր նրա բազմաթիւ գաղտնի ու յայտնի գործակալներով: Զէ՞ որ Տաճկաստանը կովկաս էր ուղարկել «Խալամի քանակը»...

Ահա թէ ինչո՞ւ այս ինքնին պարզ խնդիրը՝ տաճկական զօրամասերը Ալեքսանդրոպոլ-Ձուլֆա գծով թողնելու մասին (ինչպէս զըրում էր Վեհիր փաշան անդլիական զօրքերին հակազդելու նախատակով) խիստ բախում առաջ բերին անդրկովկասեան եւ տաճկական պատիրակութեան միջեւ:

Ալեքսանդրապոլ, Թիֆլիս, Կարս եւ Զուլֆա գծերի ուղղմական հանգոյցը գրաւել էին տաճկական զօրքերը. Հայկական զօրամասերը անոյժ գուրս եկան պաշտպանելու: Հայերը, ինչպէս և միւս պատվիրակները ընդունում էին միանդամայն երկաթուղագիծը տաճկական հարամանատարութեան յանձնելու անհուսափելիութիւնը. ցանկալի էր սակայն ունենալ որոշ երաշխիքներ եւ նախնական փոխադարձ համաձայնութիւն՝ նման փափուկ նիւթի համար: Բայց տաճիկները մատնանշելով, որ պատերազմական հանդամանքներով անկարելի է ուշացնել, գործում էին խիստ յախուն:

Տեղական հայ աղքարնակութեան շատ տանջանքներ պատճառուեց, եւ շատ անախորժութիւն՝ Անդրկովկասեան պատիրակութեան: Գործին կարելի էր որոշ չափով օգնել միայն գերմանացիների աղակցութեամբ, վճռելով ընդհանրապէս քառեակ զինակցութեան հետ մեր ունենալիք փոխյարաբերութեանց հարցը: Իսկ բողոքներն ու մատնանշումները «վեհապետական իրաւունքների ոտնահարման» մասին, որ յայտնում էր Ա. Զիենկելին այդ առթիւ կատարւած գըրագրութեան մէջ, անհրաժեշտ էին, բայց եւ ապարդիւն:

Նման բարդութիւններ Խորհրդագողովի միջնորդը դարձնում էին չափազանց ծանր: Մանաւանդ որ զեկավարներն էլ պաղարիւնութեան եւ զսպածութեան օրինակ չէին տալիս բնաւ:

Ոչ չափի գիտակցութիւն կար, ոչ էլ հասանելին ցնորսականից, առաջին կարգի երեւոյթները երկրորդականից, յարատեւը անցողականից զանազանելու պաղարիւնութիւն:

Խորհրդագողովի բազմամարդ ու ջղայնացնող չը ջապատում յանկարծ երեւում ու անհետանում էին Թիֆլիսից եկած գործիչները, կուսակցութիւնների, ազգերի կամ խմբակցութիւնների ներկայացուցիչները, մերթ առանձին ինքնակոչ-քաղաքագէտներ, երբեմն ակն-

յայտնի արկածախնդիրներ: Անգործութեան տաղտուկից տառապող բաթումցի տեղական գործիչներ, մեր գերի ընկած սպաները, ողջ կովկասի զանազան մահմէտական զաւառներից եկած քաղաքական միջնորդներ, շատերը նոր ֆէսերով, որով նրանց դէմքերը մէկէն «օսմանիան» արտայայտութիւն էր ստացել, կովկասեան ծագում ունեցող տաճիկներ - այս ամէնը մեղուների համատարած պարի պէս, թնդում եւ ալեկոծւում էր մեր չուրջը:

8. ԲԱՐՈՒՄԻՄԻ ՕՐԱԳՐԻՑՍ

Ահա մի քանի քաղամասքներ այն ժամանակւայ իմ օրագրութիւններից:

Մայիս, 1918 թ.

Բաթումում ջերմոցի տպաւորութիւն է տիրում միշտ: Նրա հընչաւոր խոնաւութեան ծնունդ են բամբուկը, թէյլ եւ կիսաարեւաղարձային միւս բոյսերը: Եւ նոյն խոնաւութեան պատճառով, քիչ է պատահում, որ հորիզոնը լինի ջինջ, լիոների շրջագծերը սակաւ են երեւում, եւ բնութիւնը միշտ պատրաստ է անձրեւելու:

«Զրոսավայրը», ի հարկէ, շքեղ է: Հարաւային ծովին վայել է լինել գեղեցիկ: Սակայն բուն բաթումում քիչ բան կայ հետաքրքրական, որովհետեւ քիչ բան կայ յատկանշական: Փողոցները՝ հէնց այնպէս, որոշ չափով վայելուէ: Միակ անկիւնը՝ «արտաքուստ ոչ սովորական արտայայտութեամբ» - այսպէս կոչւած Յունական փողոցն է:

Ես ասացի «վայելչութիւն»: Նա չուտով կը տուժէ: Իմ տեսողութեան սահմաններում (հիւրանոցի պատուհանից) մի շաբաթ կը լինի, որ երեւացել է մի սատկած կատու՝ ընկած փողոցը: Ի՞նչ կը լինի այստեղ մէկերկու տարի յետոյ: Բայց տաճիկները այստեղ երկար կը մնա՞ն:

Ամէն տեղ՝ կիսալուսին եւ աստղ, կարմիր լաթի վրա. Փէսերն էլ են չատացել. բայց մասամբ այդ քաղաքական դիմակահանդէս է, մասամբ էլ եկուրներ են, ժամանակաւոր մարդիկ: Նաւահանդստում քիչ չոգենաւ կայ. դրա փոխարէն սկսում են վիստալ անսատոլուցի ծովեզրեայ մարդիկ իրենց առաջաստանաւերի մօտ: Եւ յաւիտենական յեւանտինեան ամբոխը:

Մեր պատիրակութեան կազմութեան պայմանները այնպէս են, որ դժւար էր խուսափել այլանդակ, անհեթեթ բաներից: Զգիտեմ ինչո՞ւ միտս է զալիս գիւղական ապուրը, rot-pourri եւ ուրիշ նըման բաներ:

... ինչպէս լաւ է, որ մարդկանց մեծ մասը չի հասկանում եւ չի զգում հասնող հարւածների բովանդակ ծանրութիւնը։ Առօրեայ մըտքեր ու զգացումներ : Մարդիկ պառյա են դալիս, ինչպէս չոր տերեւները աշնան հովից :

Խանգարւած նւազարանի ստեղնաշարի աներդաշնակ դռոց : Անիւները չիւզած սայլի անստանելի ճանչոց :

Երեք տաճիկ մեծաւորների այցելութիւն՝ Զեմալ փաշան, Խալիլ եւ Վէհիր : Նրանք ցանկացել էին աւելի մօտ ծանօթանալ մեր պատւիրակների հետ։ Երեքով պինդ նստան բազմոցի վրա՝ ամբողջապէս գրաւելով նրան։ Սուրճը տրւած է : Այս կողմը, փոքրիկ հիւրահահում, ամբողջ բազմութեամբ տեղաւորել են անդրկովկասեան պատւիրակները։ Ես հրաւիրւած եմ, որպէս «աշխատակից»։ Սկզբում ազատ խօսակցութիւն։ ապա՝ մեր հիւրերը խնդրում են, մեր ազգային հատւածներից, որ իւրաքանչիւր ցեղ արտայայտի անկեղծորէն :

Չխենկելին միշտ հրճւանքի մէջ է, երբ առիթ է լինում «միջագողային» խօսակցութիւններ ունենալու։ Այսուել նրա առջև գտնըւում են Բարձրագոյն Դրան երեք սիւները, դէմ առ դէմ կովկասեան երեք ազգերի մունետիկների։ Այդ երեք թիւը նրա վրա խորհրդաւոր ազգեցութիւն է անում, եւ նա, երեք մահմէտականներ տեսնելով իր առջեւ եւ երկու մահմէտական էլ իր պատւիրակութեան մէջ, սկսեց այն բանից, թէ՝ «թէեւ ինքը, որպէս ընկերվարական, կրօնական դաւանաբանութեան մեծ նշանակութիւն չի տալիս, բայց, ինչպէս որ Աստւած երեք անձ է, բայց մի բնութիւն, այնպէս էլ Անդրբկովկասը, թէեւ իր մէջ ամբոփում է երեք ազգեր, բայց» եւ այն։ Ի՞նչ մեծ է աստւածաբանական թթիւմորի՛*) եւ առհաւելութեան ոյժը։

Յետոյ Նիկոլաւածէն պարզ, կարճ եւ ազդու կերպով խօսեց Անդրբկովկասի անկախութեան օգտակարութեան մասին հէնց իր Տաճկաստանի համար։ խօսեց այն մասին, որ Անդրբկովկասը հէնց սկըզբից չզրկւի այն տարրերից, որոնք անհրաժեշտ են նրա կենսունակութեան համար եւ այն։ Խատիսեանը նիւթ ընտրեց Հայկական հարցը, յիշեցրեց Զեմալ փաշայի Պաղեստինի հրամանատարութիւնը, նրա քրիստոնեաների հանդէպ ունեցած բարեացակամ վերաբերումը եւ իր հայ ընկերներին (Զոհքար եւ այլն), տաճկական յեղափոխութեան դինակիցներին։

Խատիսեանը, ըստ երեւոյթին, ցաւոտ տեղը կոխեց. Զեմալ փա-

*) Չխենկելին ուսել է հոգեւոր դպրանցում։

շան լուրջ դէմք ընդունեց եւ խորհուրդ տւեց այդ հարցը Հայոց Համայնքի տեղի ունեցած բոլոր բաներից յետոյ։ (Տաճիկների խորին համոզումով, 1914-15 թ. պատերազմի ընթացքին Տաճկաստանի հայերը դանակ են խրել իրենց մէջքին)։

Երրորդ խօսքը առաւ Մամէդ Համան Հաջինսկին։ Նա խօսում էր՝ քաղցր յոյս էր յայտնում, ուրախութիւն արտայայտում՝ խոհեմութեամբ խուսափելով թէ աստւածաբանութիւնից եւ թէ ազգային սուր հարցերից։

Ընդհանուր կենդանի զույցից յետոյ մեր հիւրերը մեկնեցին։

9. ԻՍԿ ՌՈՒՍԱՍՏԱՆԸՆԸ

1918 թ. մայիսին Բաթում գտնւողների համար Ռուսաստանը այնքան հեռու էր թւում։ Խորհրդային իշխանութիւնը չէր տարածւում Անդրբկովկասի վրա։ Անկախութիւն էր յայտարարւած։ Հիւսիսային կովկասում գրութիւնը փոփոխական էր, անստոյգ։ Շնորհիւրնական սահմանի՝ կովկասեան լունազդթայի, ստացւել էր մի տեսակ մեկուսացում Ռուսաստանի խոռվութիւններից։ Ճիշտ է, Բագրում, (որի առջեւ կանգնած էր Անդրբկովկասեան սազմական պատնչը) եւ Կասպիական եղերքների ուրիշ կէտերում կային խորհրդային խմբակցութիւններ՝ այլ եւ այլ բարդ եւ երկարապատում առնուններով։ Բայց, ընդհանրապէս սասած, հակայական խառնակ տարծութիւններն առ այժմ բաժանում էին Անդրբկովկասը Խորհրդային Ռուսաստանի խկական կենդրոններից, թէեւ նրա առաջապահութեամբ աշխատում էր որեւէ կերպով համաձայնեցնել Տաճկաստանի եւ Անդրբկովկասի շահերը։

Եւրոպական պատերազմը հասել էր գագաթնակէտին։ Գերմանիան խիստ շահագրգուած էր, որ արեւելքում հաստատւի, թէկուզ ժամանակաւոր, հաւասարակշուութիւն։ Դրանց նպաստում էին Բըրեստ-Լիտովսկի եւ Բուքրէշի գաշնազբերը եւ «ծայրագաւառային պետութիւնների» ամբողջ քաղաքականութիւնը՝ Բալտիկ ծովից ըսկասած մինչեւ Սեւ ծովը։ Նոյն նպատակով էլ Գերմանիան այժմ աշխատում էր որեւէ կերպով համաձայնեցնել Տաճկաստանի եւ Անդրբ-

կովկասի շահերը։ Հարկ էր պարզել նաեւ Անդրբկովկասի եւ Խորհրդային Ռուսաստանի փոխյարաբերութիւնը։ Այդ անհրաժեշտ էր եւ ընդհանրապէս Բաթումի Խորհրդաժողովի ջանքերով Անդրբկովկասի հաստատած կարգը կայունացնելու տեսակէտից, եւ մասնաւորապէս՝ Բագրուի եւ Բագրուի նաւթի հարցը խաղաղ լուծելու համար (մի հարց, որ միշտ շատ սուր էր Ռուսաստանի համար եւ որ զանազան պատճառներով

այժմ Գերմանիայի, Տաճկաստանի ու Աղբքջանի համար էլ սուր բունոյթ էր ստացել:

Գերման կառավարութիւնը գեռ մայիսի կէսին, այսինքն Բարթումի Խորհրդաժողովի ամենաստաք շրջանում, առաջարկել էր իր միջնորդութիւնը՝ Անդրկովկասը Խորհուրդների հետ հաշտեցնելու համար: Կոմո Միջրախի միջոցով ներկայացւած առաջարկին ժողովը վըրդական կոմիսարիատը պատասխանել էր, թէ անհրաժեշտ է, որ Բաթումի Խորհրդաժողովին Ռուսաստանի ներկայացուցիչներն էլ մասնակցեն, եւ միաժամանակ մատնանշել էր, որ «այսպէս կոչւած անդրկովկասեան կառավարութիւնը» ինքնակոչ է եւ որ, իրը թէ, ժողովրդական միտինզները ամէն տեղ զանգւածօրէն նրա դէմ են արտայայտում, եւ այլն:

Մեղ Համար դժւար չէր հերքել Անդրկովկասի կառավարութեան իրաւասութեան նման գնահատութիւնը (մայիս 19): Եւ իրենք կոմիսարներն էլ, ըստ երեւոյթին, շատ նշանակութիւն չէին տալիս նրան, որովհետեւ Խորհրդային կառավարութիւնը չէր յափաղել ընդունելու գերմանական միջնորդութիւնը՝ Անդրկովկասը Ռուսաստանի կողմից ճանաչելու հարցի վերաբերմաք: Հաղորդելով մեղ այդ մասին (մայիս 21), Ֆոն Լոսովը աւելացնում էր, թէ պատրաստը լուս է յայտնել Միջրախին՝ Մոսկովա՝ բոլշևիկեան սպառնալիքների մասին Անդրկովկասի՝ Սուխումի եւ Բագուի կողմից (այդպիսի սպառնալիքներ կային) եւ թէ Գերմանիան առհասարակ սովհաղութար խորհուրդ է տալիս ոռուսական կառավարութեան չյարձակել Անդրկովկասի վրա:

1918 թւին նման յարձակման ժամանակը գեռ հասած չէր: Բայց Բաթումի Խորհրդաժողովին մասնակցել էլ խորհրդային կառավարութեան՝ չյաջնորդւեց: Կարելի եղաւ միայն Գերմանիայի միջոցով պարմանաւորւել, որ Անդրկովկասի ներկայացուցիչը մտնի բանակցութիւնների մէջ խորհրդային կառավարութեան հետ դաշնակցութեան սահմաններում որեւէ տեղ՝ Անդրկովկասից ոչ հեռու: Գերմանական կառավարութեան առաջարկած կիեւը Զիչերինն զտել էր անյարմար վայր: Բայց այդ միտքն էլ, հանգամնքների փոփոխութեն հետեւանքով, մնաց անիրազործելի: Սակայն, առաջին անգամ դրւեց Անդրկովկասի անկախութեան ճանաչման հարցը Ռուսաստանի կողմից, եւ պարզւեց, որ 1918 թ. կէսերին տիրող պայմաններում, այդ ճանաչման բանալին գտնում էր Բերլինում:

(Վերջը յաջորդ անգամ)

ԱՆՑԵԱԼՔ

I

ՎԱՀԱՆ ԳԱՐՏԱՇԵԱՆ

Հայկական դատի մոլեռանդ հաւատաւորներից մէկն էլ զնաց յունիս 11-ին, Նիւ Եօրքում, մեռաւ Վահան Գարտաշեանը: Նա համեմատաբար ուշ միացաւ Հայաստանի ազատութեան համար պայքարողների բանակին, բայց գործեց եռանդով ու անձնազութեամբ եւ մինչեւ մահ հաւատաբարիմ մնաց ընտրած գաղափարին:

Վահան Գարտաշեանը կեսարացի էր, ծնւած 1883 թ. գեկտ 1-ին: Նախնական ուսումը ստացել էր Կեսարիայի Ս. Բարսեղ զըստրոցում: 1902 թ. անցել էր Ամերիկա, ուր մի կողմից գործաւորութիւն էր անում, միւս կողմից վաստակած գրամով ունանում էր Եջլի համալսարանը, որի իրաւաբանական բաժանմունքը աւարտեց 1908 թւին: Նոյն 1908 թ. հաստարակեց անդլիւրէն լեզով «20-րդ Դարի Օսմանեան Կայսրութիւնը» եւ «Մերձաւոր Արեւելքի հարցի ամփոփ պատմութիւնը» աշխատութիւնները, որոնք ցոյց էին տալիս, որ երիտասարդ հեղինակը ոչ միայն լաւ ուսանող էր իր մասնակիութեան, այլիւ հմուտ ուսումնասիրով արեւելեան ինդրի:

1909 թ. իրաւունք ստանալով Նիւ Եօրքի նահանգում զբաղւելու իրաւաբանութեամբ՝ Վ. Գարտաշեանը նւիրւեց փաստաբանութեան պլոքն, մինենոյն ժամանակ, սակայն, չանտեսելով եւ հասարական պահանջարկան ասպարէզը: 1910 թ. նա նշանակեց Վաշինգտոնի Սամանեան գեսապանատան եւ Նիւ Եօրքի թիւրքական հիւպատոսարանի իրաւագէտ խորհրդական եւ այդ պաշտօնը պահեց մինչեւ 1914 թ., համաշխարհային պատերազմի սկիզբը: Օսմանեան կառավարութիւնը նրան յանձնեց թիւրքական բաժնի կազմակերպումը Սան-Ֆրանչիսկօի համաշխարհային ցուցահանդէսում եւ այդ աշխատանքի, ինչպէս եւ գեսպանատան եւ հիւպատոսարանի պաշտօնական գործութեան ոռճիկի մի մասը թողեց չինարած, որի համար հենավարութեան պահանջման դատարանը դատ բաց արաւ թիւրքական կառավարութեան դէմ:

Արմէն Գարօն եղաւ, որ Վ. Գարտաշեանին քաշեց հայ քաղաքան գործի ասպարէզ, Համաշխարհային պատերազմի ընթացքին, Երբ Ամերիկան դարձաւ Հայկական հարցի ամենակարեւոր կերպոն-ներից մէկը: Իր հմտութեամբ, անհուն աշխատունակութեամբ, լայն կապէրով, իր համարձակ ու եռանդուն գործելակերպով Վ. Գարտաշեանը արձաւ նախապէս Կաթուղիկոսական Պատուիրակ, ապա՝ Հայաստանի Հանրապետութեան դիւանագլխական ներկայացուցիչ Գ. Փաստրմանանի աջ բազուկը: Պրէս Բիւրօն եւ Հայաստանի Անկախութեան Ամերիկան Կոմիտէն Վ. Գարտաշեանի անխոնջ ջանքերի մարմնացումը եղաւ: Նա անզնահատութիւն դեր կատարեց Հայաստանի անկախութեան ճանաչման հարցում Միացեալ Նահանդների կողմից, այլեւ Ամերիկայի աջակցութեան խնդրում Հայաստանին, ինչպէս նաև նախագահ Վիլսոնի Հայաստանի սահմանների գծման մէջ: Նրան ենք պարտական մէծապէս, որ ծերակուտական Քինդի, Զէյմս Ջերարդի, ծերակուտական Լոճի, Վ. Բրայընի պէս ականաւոր քաղաքական գործիչներ եւ ուրիշ շատ շատեր դարձան Հայկական գատի ջատագովներ եւ որ Հայկական խնդիրը ջերմ Համակիրներ ունեցաւ Ամերիկայում: Նրա ջանքերով էր, որ Դէմոկրատ կուսակցութիւնը Հայաստանի ազատութեան պահանջը իր պըլատփորմի կէտ դարձրեց:

Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, Երբ շատերը նահանջեցին, կամ ընկալած՝ քաշեցին հրապարակից, Գարտաշեանը մնաց Հաւատարիմ Հայաստանի անկախութեան գաղափարին: Այս անգամ արդէն իրեւ Հ. Հ. Փարիզի Պատուիրակութեան ներկայացուցիչ եւ Պրէս-Բիւրօնի վարիչ՝ շարունակեց գործել յանուն Հայաստանի ազատութեան: Ամենքի յիշողութեան մէջ գեռ թարմ են այն, կարելի է ասել, հերոսական պայքարը, որ նա կազմակերպեց ընդդէմ Լոգանի դաշնագրի վաւերացման եւ այն փայլուն յաղթանակը, որով պասկեց այդ պայքարը:

Գարտաշեանի վերջին գործը՝ Խորհրդ. Միութեան Ամերիկայի կողմից ճանաչւելու առթիւ կատարւած քայլերն են, ինչպէս եւ Ղեւոնդ եալ. Դուրեանի սպանութեամբ ամբաստանողների դատի կազմակերպումը: Վերջին այս գործը նա չկարողացաւ աւարտել անողոք հիւանդութիւնը զգեստնեց նրան, եւ, ի վերջոյ, իջեցրեց գերեզման: Վ. Գարտաշեանը մեռաւ համեմատարար երիտասարդ, գործունակ հասակում, Երբ դեռ նրա հետ այնքա՞ն յոյսեր էին:

Վ. Գարտաշեանը բացի անսահման հաւատից ու մոլեռանդութիւնից, նաև հմուտ, քաղաքականորէն զարգացմած, Մերձաւոր Ա-

րեւելքի պատմութեան եւ ներկայ պայմաններին խորապէս իրազեկ, արտակարգ աշխատունակութեան տէր, Հայաստանի դատին անհունօրէն ներկայած, անձնական կեանքում բիւրեղի պէս մաքուր, ծայր աստիճանի անձնագոհ, գաղափարական անձնաւորութիւն էր: Նրա գրչի տակից դուրս են եկել, գլխաւորապէս անգլիերէն լեզով բազմաթիւ յօդւածներ եւ երկարաշունչ գրական աշխատանքներ, որոնք ահապէն դեր են կատարել հայ ժողովուրդի ու հայկական հարցի ժողովրդականացման գործում: Իր գրւածքները հիմնաւոր բելու համար նա, յաճախ, լայն խուզարկութիւն էր կատարում, շարաթներով դեղերում էր հանրային մատենագրաններում, նորանոր աղբիւրներ էր երեւան հանում: Այդ պատճառով նրա գրութիւնները միշտ հարուստ էին նիւթով եւ կուռ տրամաբանութեամբ: Շնորհիւ իր մեծ կիրքի՝ նա ունեցաւ եւ ձախորդ քայլեր, բայց, ընդհանրապէս, նրա հիմնական միտքը եւ որդեղբած ուղին շիտակ էին:

Վ. Գարտաշեան գերազանցապէս քաղաքական միտք էր. նա մեկնում էր քաղաքական փաստերից: Այդ է պատճառոք, որ նա երբեք չշեղւեց Հայաստանի անկախութեան գաղափարից: Նա շատ լաւ լըրունում էր, որ Հայկական հարցի լուծման միակ իրական միջոցը Հայաստանի պետականութեան վերականգնումն է, որ հնարաւոր է արտաքին զօրաւոր միջամտութիւններով: Արտաքին միջամտութիւններն էլ հնարաւոր են, եթէ կան շահագրգուած մեծ ուժեր: Մասնաւորապէս Ամերիկայի հետ նա խոշոր յոյսեր էր կապում, եւ Ամերիկան դէպի Հայաստան գրաւելու իրեւ կարեւոր ազգակ համարում էր Հայաստանի տնտեսական հարստութիւնները, մասնաւորապէս քարիւղը:

Վ. Գարտաշեանի նկարագրի ցայտուն գծերից մէկն էլ չափից աւելի չեշտած անհատականութիւնն էր, Այդ գծի շնորհիւ նա չկարողացաւ իր անձի չուրջը ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ իր կողքին եւ իր հետ նաև ուրիշ ուժեր էլ պատրաստէին: Եւ Երբ իջաւ գերեզման, նրա տեղը մնաց բաց: Եւ իրաւունք ունի Զէյմս Ջերարդը, Երբ ասում է, թէ՝ «Տարակուսում եմ, թէ որեւէ մէկը պիտի կարողանայ զրաւել նրա տեղը յօդուս Հայաստանի կատարող գործում»: Միանգամայն արդար է եւ ծերակուտական Քինդի տւած ընորոշումը. «Գարտաշեանն եղաւ մի մեծ մարդ, ամբողջապէս ներկայած Հայաստանի անկախութեան զատին եւ դրա համար էլ արժանի հայ ցեղի ճշմարիտ սիրոյն: Նա եղաւ ազգային անկախութեան եւ ազատութեան զատի ողին»:

Այս, Վ. Գարտաշեանը եղաւ Հայաստանի ազատութեան եւ ան-

կախութեան մոլեուանդ ախոյեաններից մէկը։ Նրա տեղը, դժբախտաբար, մնաց բաց եւ յայտնի չէ, թէ ո՞վ եւ երբ կարող է բոնել։

II

ՊՐՈՖ. Յ. Թ. ԳԱՅԱՆԻ

Յունիս 10ին Ալեքսանդրիայում մեռել է պրոֆ. Յ. Թ. Գայանեանը։ Հանգուցեալը իր կեանքը նւիրել էր մշակութային աշխատանքի՝ զբաղելով մինչեւ մահ նոր սերունդի դաստիարակութեան գործով։ Երիտասարդ տարիքին եղել է նաեւ յեղափոխական, որ, սակայն, երկարատեւ չի եղել։

Պրոֆ. Յ. Գայանեանը ծնվել էր 1864 թ. օգոստ. 28-ին Մարդուանում։ Աւարտելով Մարզուանի կոլէջը՝ նա ուսուցչութեան էր կոչւել նոյն դպրոցում, իրբեւ հայերէն լեզւի դաստու։ Զերմ հայրենասիրութեամբ վառած երիտասարդ էր, այդ պատճառով երբ Փոքր Հայքում երեւաց Հնչակեան Կուսակցութիւնը, անմիջապէս յարեց նրան։

Հնչակեան Կուսակցութիւնը զբաղւած էր այդ ժամանակ ցուցական ձեռնարկներով, որոնց հետեւանքով, 1892 թ. վերջերը, կեսարիայում, Եղիկաթում, Մարզուանում եւ Փոքր Ասիայի մի քանի ուրիշ վայրերում տեղի ունեցան զանգւածային խուզարկութիւններ ու ձերբակալութիւններ։ Մօտ 500 հայեր, իրրեւ քաղաքական յանցաւորներ, հաւաքեցին Գաղատիայի բանուը։ Դրանց մի մասը, ուրոշ ժամանակից յետոյ ազատ արձակւեցին, իսկ 56 հոգուն ամենաուշութիւնին պայմաններում բանտային արգելքի տակ պահելուց յետոյ, 1893 թ. մայիս եւ յունիս ամիսներին դատի ենթարկեցին։ Տեղի ունեցաւ Գաղատիայի նշանաւոր դատավարութիւնը։

Իրապէս դատ ու դատաստան չէր, այլ՝ դատական դաւեշտ։ Կառավարութիւնը առաջնուց տւել էր վճիռը։ դատավարութիւնը արտաքին երեւոյթները վրկելով համար սարքւած մի խաղ էր։ Ամբատանեալներից 17 հոգի մահւան դատավարութեցին, 6 հոգի՝ 15 տարւայ բերդարգելութեան, 8 հոգի՝ 10 տարւայ եւ 10 հոգի, ուրոնցից մէկը կին, 7 տարւայ եւ այլն։ Մահւան դատավարութեանների մէջ էր եւ պրոֆ. Յովհ. Գայանեանը։

Գաղատիայի դատավարութեան շուրջ ահադին յուզում առաջ եկաւ հայ եւ օտար հասարակութեան մէջ։ Պրոֆ. Գայանեանի հետ մահւան էր դատավարութեան եւ Մարզուանի կոլէջի պրոֆէսոր կ. Թումայեանը, որի գլխերուհի կինը ոտքի հանեց Երովայի հանրա-

յին կարծիքը ի նպաստ համլիտեան զոհերի։ Մասնաւորապէս զօրաւոր միջամտութիւն գործեց անդլական կառավարութիւնը, որի հետեւանքով մահապատիմների մեծ մասը մեղմացւեց։ Հինգ հոգի, սակայն, - Թորոս Մառուկեան, Յովհաննէս Արգումանեան, Կիւլուչինկ Բարսեղեան (Համալեան), Միրիման Թորոսեան (Խանապալուեան) եւ Փանոս Եաղուակեան - կախաղան հանւեցին 1893 թ. յուլիս 18-ին։

Պրոֆ. Յ. Գայանեան, ինչպէս եւ պրոֆ. Թումայեանը, բանտից ազատ թողնեց եւ շտապեց հետանալ Թիւրքիայից։ Նա մի քանի տարի ուսանողութիւն արաւ կղինը բուրգուգում, ուր հետեւց մանկավարժութեան եւ լեզւաբանութեան։ Ալա, յաջորդաբար, ուսուցչութեամբ զբաղեց Գերմանիայում, Զւիցերիայում եւ ի վերջոյ հաստատւեց Եղիպատոսում։ 1910 թ. տնօրէն անւանեց Ալեքսանդրիայի հայկական գլուցին, 1913 թ. նոյն պաշտօնով փոխադրեց Գահիրէ 1918 թւից սկսած, վեց տարի շարունակ հայերէն լեզւի դասեր տեղ Ամերիկեան կոլէջում, ապա հինգ տարի դասախոս եղաւ ինդիշ Սկոլութեամ։ Մի խօսքով, իր կեանքը ամբողջ անցաւ կրթական-մանկավարժական գործունէութեան մէջ։

Բայց պրոֆ. Յ. Գայանեանը սահմանափակ մասնագէտ չէր։ Նա միաժամանակ նւիրւած էր հանրային գործունէութեան, զբաղւում էր նաեւ գրական աշխատանքով։ Պատերազմի ըրջանում նա Եղիպատոսի հայ Աղգային Միութեան հոգին էր եւ, մանաւանդ, մեծ արժանապատութեամբ ներկայացնում էր հայ ժողովուրդը օտարների առջեւ։ Նրա ջանքերի արդիւնքն էր եւ Արբապաշտական Միութիւնը, իսկ վերջին տարիները՝ նաեւ հայ ժողովուրդական Միութիւնը։ Հայստանի անկախութեան ըրջանում պրոֆ. Գայանեանը Հանրապետութեան ամենանւիրւած ջատավովներից մէկն էր եւ ոչ մի ճիշտ չէր խնայում նպաստելու համար հայ պետականութեան ամրապնդման։ Երբ 1920 թ. ամառը Եղիպատոս եկաւ Հայաստանի Պատերակ Ա. Խատիսեանը, պրոֆ. Գայանեանը ամենագործօն աջակցողներից մէկը եղաւ։ Այսպէս երբ 1921 թ. գարնանը Եղիպատոս հասան Հայաստանի տարագիր պետական գործիչների մի խումբ՝ Յ. Քաջազնունի, Լ. Շանթ եւ ուրիշներ, պրոֆ. Գայանեանը ամենաջերմ ընդունելութիւն ցոյց տւողներից մէկը եղաւ։

Պրոֆ. Գայանեանը ծանօթ էր եւ իրբեւ զրչի մշակ։ Նրա տաք եւ հայրենաշունչ յօդւածները հայերէն թերթերում եւ հանդէսներում կաղացւում էին հետաքրքրութեամբ։ Կատարում էր եւ բանասիրական պրատումներ, ինչպէս եւ թարգմանութիւններ անդլիերէն եւ գերմաներէն լեզուներից։ Մահից մի օր առաջ լրացրել է հայ-

րէն լեզւաբանական բազդիրքի կազմութիւնը, որ երկար տարիների տքնածան աշխատանքի պատուղ է եւ որ մի խումբ մտաւորականների նախաձեռնութեամբ հրատարակութեան պիտի տրեի առանձին հատորով։

Եզիպտոսի հայ հասարակութեան մէջ պրոֆ. Յ. Գայանեանը հեղինակաւոր եւ ընդհանուր համակրանք վայելող անձ էր։ Դաւանանքով բողոքական՝ ամբողջ կեանքում նա աշխատեց հայկական ընդհանուր գործերում եւ մահւանից առաջ կտակեց, որ իրեն թաղեն հայկական գերեզմանատանը լուսաւորչական ծէսով։ Անցեալ տարի Եզիպտահայ Ուսուցչական Միութեան նախաձեռնութեամբ տօնւեց նրա հանրային - կրթական գործունէութեան 50 ամեակը - յարգանքի մի արտայայտութիւն, որին պրոֆ. Գայանեանը արժանի էր ըստ ամենայնի։

III

ՅԱԿՈԲ ՔՈՉԱՐԵԱՆ

Մի տարի առաջ, 1933 թ. յունիս 3-ին, Երեւանի «Խորհրդ՝ Հայաստան» թերթի չորրորդ էջի ամենէն քարի անկիւնը, սեւ ըրջանակի մէջ, տրւած էր հետեւեալ մանրատառ, հաղիւ նշմարելի մահազգը։

«Հ. Կ. Խաչի Կենտկրոմի տեղկրոմը եւ կոլեկտիւր խոր ցաւակցութիւն են յայտնում նոյն կոլեկտիւի անդամ Յակոբ Քոչարեանի անակնկալ մահւան առթիւ։

Այսքան և ուրիշ ոչինչ։ Այսուհետեւ այլևս ո՛չ մի խօսք, ո՛չ Հայաստանի, ոչ էլ արտասահմանի թերթերում։ Եթէ այդ օրհնեալ «տեղկոմն» ու «կոլեկտիւն» էլ չլինէին, ապարախտ Քոչարեանին ո՛չ մի յիշող չպիտի զտնւէր։ Մինչդեռ Հանգուցեալը այն մարդկանցից էր, որոնք բարեմաթիւ ծանօթներ ու բարեկամներ ունեն եւ իբրև էլ բարեկամ են չատերին։ Բացի այդ, Քոչարեանը նաև աչքի ընկնող հասարակական ու մշակութային գործիչ էր։

Արդարութիւնը պահանջում է, որ գոնէ այժմ, մահւան տարելիցի առթիւ, թէկուղ հակիրճ խօսքերով, վերյիշենք նրա կեանքն ու դործը։

Յակոբ Քոչարեանը Երեւան քաղաքից էր, ծնած 1865 թւին։ Առաջնակարգ մրցանակով աւարտելով պետական գիմնազիոնը՝ ութունական թւականների վերջերը նա մտաւ Մոսկվայի համալսարանի պատոմա-բանասիրական բաժինը, ուր աչքի ընկաւ իր փայլուն



ՅԱԿՈԲ ՔՈՉԱՐԵԱՆ

ընդունակութիւններով, այնքա՞ն, որ համալսարանի վարչութիւնը նրան առաջարկեց մնալ համալսարանում և պատրաստել պրոֆեսորութեան։ Քոչարեանը, սակայն, չհամաձայնէց։ Նրան, ինչպէս այն ժամանակւայ մեր երիտասարդութեան լաւագոյն մասին, ուրիշ հարցեր էին զբաղեցնում, հայ յեղափոխութեան երկունքի օրեր էին. մաքերը դրաւած էին ժողովրդասիրական - աղաստագրական տեսչերով։ Հայկական մթնոլորտը յազեցած էր մի տրամադրութեամբ, որից շուտով ծնունդ պիտի առնէր Հ.Յ. Դաշնակցութիւնը։ Քոչարեանը այդ շրջանի երիտասարդութեան կառկառուն գէմքերից էր. գործօն մասնակցութիւն ունէր մտաւոր - յեղափոխական շարժումների մէջ, համալսարանական ամբիոնը նրան չէր կարող հրապուրել։

1890 թ. ամառը Թիֆլիզում հիմնւեց Հ.Յ. Դաշնակցութիւնը։ Քոչարեանը կազմակերպիչ մարմնի անդամներից մէկն էր։ Եւ այսուհետեւ մինչեւ մահ կապւած մնաց այդ կուսակցութեան հետ։ Ճիշտ է, ակնկալածի չափ փայլուն դեր չունեցաւ նրա մէջ՝ արգելք եղաւ նրա առողջական վիճակը։ Բայց կատարեց շատ պատասխանատու պաշտօններ եւ միշտ էլ պատով դուրս եկաւ ստանձնած պարտականութիւններից։

Համալսարանը աւարտելուց յետոյ Քոչարեանը նւիրւեց ուսուցչական գործունէկութեան, որ, սակայն, երկար չտեսեց։ Նա պաշտօն ստացաւ յայտնի դրամատիկ Ա. Մանթաշեանի մօտ, գարձաւ նրա մի տեսակ անձնական քարտուղարը եւ այդ պաշտօնում էլ մընաց, քանի գոյութիւն ունէր Մանթաշեանի դրամատիրական հաստատութիւնը։ Պաշտօնը տալիս էր նրան ահազին աղասի ժամանակ, որ նա ամբողջութեամբ նւիրում էր հասարակական գործունէկութեան, կուսակցութեան եւ մշակութային աշխատանքների։

Հ. Յ. Դաշնակցութեան մէջ առանձնապէս եռանդուն աշխատանք կատարեց նա առաջին տարիներին, հիմնադրութեան շրջանում եւ նրանից յետոյ։ 1892 թ. նա մասնակցեց Դաշնակցութեան առաջին ընդհանուր ժողովին։ Մինչեւ 1897 թ. ապրելով Թիֆլիսում՝ գործակցեց Քրիստափորին եւ Ս. Զաւարեանին, որոնք վարում էին Բիւրօի աշխատանքները։ 1897-99 թ. նա Հ. Յ. Բաթումի կոմիտէի անդամ էր։ 1900-1906՝ Բաթում, 1907-8՝ Թիֆլիսի։ 1908 թ. վարեց Հ. Յ. Խորհրդի քարտուղարի պաշտօնը։ Առհասարակ քարտուղարութիւնը Քոչարեանի բնական կոչումն էր, կարծես։ 1912-17թ. քարտուղար եղաւ Ազգային Խորհրդում։ 1919 թ. քարտուղարի պաշտօն կատարեց Պօղոս Նուպարի եւ Հայաստանի Կառավարութեան պատ-

ւիրակների վարած բանակցութիւնների ժամանակ: 1918-23թ. աշխատեց Հ. Հ. Փարփղի Պատուիրակութեան մէջ: 1925 թ. մասնակցեց Հ. Յ. 10-րդ Ընդհ. Ժողովին: Ապա մէկնեց Հայաստան, ուր մինչեւ մահ քարտուղար եղաւ Կարմիր Խաչի Կենտրոնական վարչութեան մէջ:

Միաժամանակ, ուր եւ լինում էր, Քոչարեանը կատարում էր հասարակական զանազան ուրիշ պաշտօններ - հոգաբարձու, թատերական ընկերութեան վարչութեան անդամ, անդամ բազմաթիւ մը շակութային կազմակերպութիւնների եւ ընկերութիւնների, յաճախ, քարտուղարի, հաշւապահի կամ զանձապահի դերում: Նա ամէն տեղ յարդած ու սիրւած անձ էր: Բոլորի զոները բաց էին նրա առաջ: Նրա սիրտն էլ բաց էր ամենքի առջեւ: Մեծի հետ մեծ, փոքրի հետ փոքր, տղամարդկանց թէ կանանց շրջանում Յակոր Քոչարեանը տան մարդ էր, սիրելի հիւր, բարեկամ կամ ընկեր՝ նւիրւած եւ անկաշառ:

Յ. Քոչարեանը կարեւոր տեղ ունեցաւ եւ դրական - լրագրական աշխատանքի բնագաւառում: Լաւ լեզուազէտ - ազատ խօսում ու զրում էր ոռւսերէն ու Փրանսէրէն, տիրում էր անգլիերէնի ու գերմաններէնի - Քոչարեանը ունի արժէքաւոր թարգմանական գործեր: Նրա գրչի տակից է գուրռ եկել, օրինակ, Հ. Իրաէնի «Կառուցանող Սոլնչ» դրամայի, ինչպէս նաեւ մի քանի ուրիշ թատերգութիւնների թարգմանութիւնը: Նա ունի հայերէն թերթերում բազմաթիւ յօդւածներ հայկական հարցին կամ հայ մշակոյթի զանազան երեւոյթներին նուիրւած, մեծ մասամբ Յ. Ք. սուրագրութեամբ:

Զարմանալի համեստ, իր անձը առաջ չմղող, իր մասին խօսք չսիրող, բայց հմուտ ու զարգացած, հետաքրքրական դէմք էր Յ. Քոչարեանը: Այդ անսահման համեստութեան պէտք է վերագրել եւ նրա մահւան բոլորովին չնկատած անցնելը: Թող գէթ այս տողերը յարգանքի արտայայտութիւն լինեն սիրելի Յակորի թանգաղին յիշատակին:

IV

Վ. Դ. ՂՈՐՂԱՆԵԱՆ

Մայիս 24-ին Երեւանում վախճանել է պրոֆ. Վ. Ղորղանեանը - հմուտ երաժշտական քննադատ - պատմագիր եւ արևեստի վաստակաւոր գործիչ: Ծննդել էր 1865 թ. Թիֆլիսում: Աւարտել էր Թիֆլիսի ռէալական դպրոցը, ապա՝ Պետրովրդի ինժեներական

բարձրագոյն դպրոցը: Երաժշտական կրթութիւնը ստացել էր Բերլինի համալսարանում: Շնորհալի դաշնակահար էր եւ երգահան: Փայլուն քննադատ էր եւ երաժշտութեան տեսաբան: Ունի մի շաքարժէքաւոր երկեր՝ Բեթհովենի, Մոցարտի, Վերտիի մասին: Բեթհովենի մասին հեղինակած նրա 1000 էջոց ուսումնասիրութիւնը նրան տեսեց եւրոպական համբաւ: Հրատարակել է նաեւ բազմաթիւ յօդւածներ ուսուական եւ կովկասեան երաժշտութեան մասին. ի միջի այլոց՝ «Կովկասեան Երաժշտութիւն» գրքոյիլ:

Խորհրդայնացումից յետոյ, Ղորղանեանը, չկամենալով գործունեալ բոլշևիկների հետ, տարագրեց արտասահման եւ երկարժամանակ ապրեց Փարփղում: Բոլշևիկները զրաւեցին նրա հարուստ գրադարանը եւ արժէքաւոր սպատմական նիւթերի հաւաքածոները, որոնց մէջ կային եղակի վաւերագրեր: Սրանից 6-7 տարի առաջ, նա վերադարձաւ Կովկաս, հաստատեց Երեւանում եւ նւիրւեց իր մասնագիտութեան՝ ուսուցչական եւ զրական գործունէութեան, այլեւ գասաւորեց իր «Գիւտան»-ի նիւթերը: Գրի է առել նաեւ իր յուշերը, որոնք զեռ անտիպ են: Այդտեղ նա խօսում է, ի միջի այլոց, Զայկովսկու, Ռուբինշտէյնի եւ Վերտիի մասին, որոնց հետ մտերիմ ծահօթ էր:

V

ՄԱՆՈՒԵԼ ՄԻՒՐԱԽՈՐԵԱՆ

Յուլիսի առաջին կէսին, Ռումանիայի Ֆոքշան քաղաքում, 80 տմէեայ հասակում, մեռաւ Մանուէլ Միւրախորեանը: Հանգուցեալը վանեցի էր, Խրիմեանի չնչի տակ դաստիարակւած կրթական ու գրական զործիչ: 1870ական թւականներին ուսուցչական պաշտօն վարելով գաւառում եւ պատելով հայկական շրջանները՝ Միւրախորեանը հրատարակեց իր երեք հատորնոց «Աւղեւորութիւն ի Հայունակ գաւառ», որ Գ. Մրւանձեանցի ուղեգրութիւնների բնոյթը ունի, թէեւ ոչ նրանց դիտական - բանակիրական բարձր արժէքը: 90ական թւականներին Միւրախորեանը պանտխուց արտասահման եւ մի ժամանակ ուսուցչութիւն արաւ Ռումանի, ապա Ֆոքշանի աղջային վարժարաններում: Միաժամանակ թղթակցում էր արտասահմանի հայ թերթերին, գլխաւորապէս Մ. Փորթուգալեանի «Արմենիա»-ին: Գլրում էր Մ. Կ. Միւրախորեան կամ Մ. Կ. Մ. սուրագրութեամբ: Ունի նաեւ անտիպ գրւածքներ ուսումնահայ գաղութի մասին: Իր կեանքի վերջին տասնամեակներին բոլորովին քաշւած էր աղդային - հասարակական կեանքից:

VI

ՍԱՐԳԻՍ ՔԱՄԱԼԵԱՆ

Յունիս 13-ին, Թիֆլիսում, յանկարծամահ է եղել մանկավարժ, գրող - հեքիաթագիր Սարգիս Քամալեանցը: Հանդուցեալլ ծնւել էր 1862 թ. Շուլաւերում: Աւարտել էր Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը և ասուածաբանական բարձրագոյն կրթութիւն ստացել Գերմանիայում: Սկսէլ էր զբել զեռ պատահի հասակից Տ. Նազարեանի «Աղբիւր» և «Տարապ» պարբերականներում, ապա՝ «Երբ-Դար»-ում, «Լումայ»-ում և այլն: Պատկանում էր պահպանողական ուղղութեան: Իր գրւածքների նիւթը, մեծ մասամբ, առնում էր ժողովրդական կեանքից և բանահիւսութիւնից: Քամալեանցի գրւածքներից մի ժամանակ շատ էին կարգացւում՝ «Շէն թագաւորի աղջկը», «Ծովինար»-ը, «Ժամանակը Ռուկի», «Խուլ Խաչիկը», «Անմոռ Աշխարհ», եւայլն, ինչպէս նաեւ Դ'Ամիկիսի «Սիրա»-ի և «Աշակերտի Յիշատակարան»-ի թարգմանութիւնները:


VII

ՈՒՐԻՇ ՄԱՀԵՐ

Անցած երկամսեակի ընթացքում, յունիս 19-ին, Պօլսում վախճանւեց վաստակաւոր գրագիտուհի Սիպիլը, որի կեանքին ու զործին առանձին յօդւած կը նուիրենք «Վէմ»-ի Զ-րդ համարում:

«Վէմ»-ի Զ-րդ համարում յօդւած կը լինի և երիտասարդ գործիչ Տիգրան Աւետիսիանի մասին, որի եղերական մահւան լուրը հաղորդւեց արտասահմանի թերթերում:

Սալիկւած ենք յետագել նաեւ Թ. Թորոմանեանի ու Մ. Վարանդեանի կենսագրութիւնները:



ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ

ՐԱՖԻԿՈՒ ՆԱՄԱԿԸ ՔՐ. ՄԻՔԱՅԵԼԵԱՆԻ ՄԱՍԻՆ

1913 թից սկսած էջմիածնի «Արարատ» պաշտօնաթերթում մենք հրատարակել ենք Ս. Նազարեանի, Մ. Նալբանդեանի, Գամառնարիպայի, Ս. Շահազիզի, Քեր. Պատկանեանի եւ Բաֆփու նամակները - քովկ հարիւրի չափ - ուղղւած Մոսկավերին-Ագուլեցի հանգուցեալ Մելքոն Գասպարեան Փանեանցին:

Բաֆփու նամակներից մեկը («Արարատ» 1913 թ. № 6-7, նամակ № 31) մի շատ քանկազին նշյարք ու վկայութիւն է Հ.Յ. Դ. Մեծ հիմնադրի՝ Ք. Միքայելեանի մասին: Անելորդ չենք համարում կրկին տպագրութեան յանձնել «Վէմ»-ի էջերում:

Յոր - Զուղա.

Յ. Ի. Ա. Զ.

Թիֆլիս, 25 Դեկտ. 1885 ամի.

Յարդելի Բարեկամ

Մելքոմ Պասպարեչ

Մի փոքրիկ յանձնարարութիւն առիթ տուեց ինձ գրել այս նամակը: Մի քանի օր առաջ ճանապարհ ընկաւ դէպի Մոսկվա Զերչայինակիցներից մի երիտասարդ Քրիստովոր Միքայելեանց տնով, որ դիտաւորութիւն ունի այստեղ բարձր ուսում ստանալ:

Այդ երիտասարդը բոլորովին աղքատ տղայ է. նա ինքը կը ուստամէ Զեղ, թէ ինչպէս կամ ինչ միջոցներով կարողացել է ուսում տոնել:

Մոսկվայում ապրելու համար նա ունի միայն ամսական 15 րուրի: ի հարկէ, դա շատ փոքր գումար է նրա ապրուստի համար:

Ես և ինձ հետ պ. Միքայելեանցի մի քանի բարեկամները աշխատելու ենք, որ Թիֆլիսի Հայոց Բարեկործական ընկերութիւնը ամսական մի 10 կամ 15 րուրի նշանակէ նրա համար: Բայց մինչև որ այդ կիրազործվէր, եւ որպէսզի նա ծախքերի կարօտութիւն չկըրէր, ես կը խնդրէի Զեղանից, որ ծանօթացնէրէ նրան զանազան հայ ընտանիքների հետ, եթէ երեխաների համար մասնաւոր դասաւու կը պահանջեն, նա կարող է շատ խղճմանքով պարագվել: Պ. Միքայելեանցը լաւ վարժապետ է, իսկ նրա բարոյականութեան մասին կարող էք հաւատացած լինել, որ ամենապատուական երիտասարդ է:

Հնդունեցէք իմ անկեղծ յարգանքը

Յ. Մելք - Յակոբեանց.

ԱՐԱՄԻ ՆԱՄԱԿԻ ՎԱՆԻՑ

Թառացի ընդօրինակումն է այն նամակի, որ Արամ գրել է Հ. Յ. Թիւրօխն Կովկաս 1915 թ. ապր. 15-16ին: Նամակը գրւած է Քիմիական մատիտով, սպիտակ կտուի վրա եւ գաղտնի նամապարհներով ուղարկած Կովկաս: Վաճի պաշարման օրերից մնացած քանագին վաւերագրի պատճենն է այս բնագիրը, երեւի, կորել է:

ԽՄԲ.

Կառավարութիւնը դաւադրաբար կոտորածի ձեռնարկեց. Իշխանը դաւով սպանւած, Վասամեան աքսորւած: Բազմաթիւ գիւղեր հըրեական, 5-6000 կոտորած կանանց, երեխաների, դաւառների մէջ: Խիստ ընդհարում վան եւ Շատախ: 10 օրէ ի վեր թնդան. կորուսան քաղաքի վրայ. ոչ մի վնաս մեզէ: Շատախ 15 օր է կուրի մէջ է: Ժողովրդի տրամադրութիւնը բարձր է: Ժողովրդի վերջին յոյսը ձեղ վրայ է: Օր մը ուշամալը անդամ դաւաճանութիւն: Շատապեցէք, ժողովրդի փրկութեան համար շուր հասնել:

ՍՏ. ՇԱՀՈՒՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԻ Ս. ԶԱՀԱՐԵԱՆԻՆ.

Հ. Յ. Գ. Կենտր. Դիւանում մնացած մի բաց նամակ է, անընդուակիր: Վրան Ս. Զաւարեանի ձեռքով մակագրւած է՝ «Ստ. 4 XII 1912»: ԽՄԲ.

Յարգելի Սիմոն,

Խնդրում եմ մի երկառով պատասխանէք իմ հետեւեալ հարցին, որով վաղուց է ինչ որ ուղում եմ Ձեզ դիմել, բայց միշտ յետաձըդում էի մինչեւ հիմա: Երկու տարի առաջ նիզա զնալուս որ ես Ձեզանից 50 բուրլի վերցրի - այդ ի՞նչ փող էր եւ ի՞նչ պայմանով տեւք Դուք ինձ: Ամեն անդամ յիշելուս ինձ տանջում է այն անորոշութիւնը, որ կապւած է այդ հարցի հետ: Գո՞ւցէ հարկաւոր էր շուտով վերադարձնել: Ես հնարաւորութիւն չեմ ունեցել մինչեւ այժմ վերադարձնելու պարտք եւ այս բոլորի էլ չեմ կարող վերադարձնել, բայց կ'ուղէնայի զոնէ, որ որոշէր ինձ համար այդ հարցը: Խնդրում եմ անսպատճառ պատասխանէք: Յովսէիր գրել է Ձեզ, որ ես Բերլին եմ, - կարծում եմ նամակս չի զարմացնի Ձեզ: Ընդունեցէք ջերմ բարեւերս. Ձեզ յարդող Ս. Շահումեան:

Նամակի կողմին գրւած է.

իմ հասցէն. Berlin - Charlottenburg, Kaiser - Friedrichstr., 37., Gartenhaus II թ. Դրեցէք խնդրեմ նոյնուշ, Արամայիս Երզըն-կեանը այլտեղ է, թէ զնացել է:

ԿԵԱՆԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

«ԱՆՅՈՒՇ» Թէ «ԱՆՈՒՇ»

«ԱՆՅՈՒՇ»-ի Դ. Դրելի 124 երեսում կարտպատ վերոյիշեալ վերնագրով մի «պարզաբանութիւն», որի հեղինակը, X, հապենպօրէն մի պարզաբանութիւն էր արել եւ նոյնեան էլ հապենպ երակացութեան երանել, թէ մեր հեղինակների մեծամասնութիւնը յայտնի պատմական այն բերդը, որոնք բանարկեւած էր Արշակ Բ. Արշակունի հայոց բազաւորը, սխալմաք են «ԱՆՅՈՒՇ» կոչում, որովհետեւ այդ բերդը կոչում է «ԱՆՈՒՇ» եւ պէտք է սրանից յետոյ նրա մասին գրելիս գրել «ԱՆՈՒՇ» եւ ո՛չ թէ «ԱՆՅՈՒՇ»:

Իր այդ հապենպ երակացութիւնը Խը պայմանաւորում է նրանով, որ Խոժիստանում այժմ էլ գոյուրիւն ունի մի բերդ, որ կոչում է Ղասրը Շիրին կամ Ղասր Շիրին՝ շինած մի հայ հշխանուի կողմից, եւ որպանին «Հիրքին» պարսկերէն բառը հայերէն նշանակում է «անուշ», որին եւ պիտի երգակացնել, որ Արշակի բանարկեւած տեղը կոչում էր «ԱՆՈՒՇ» եւ ո՛չ թէ «ԱՆՅՈՒՇ», մանաւանդ որ մեր հայ ինքնարժերի վարքները նրա մօսով անցնելիս բացականչում են. - «Ահա մեր Արշակ բագաւորի բերդ-բանտը»:

Այս երկուողով կամենում եմ ուղել Խ. - ի «պարզաբանութիւնը» եւ երաւիրի նրա ուղարկութիւնը այն սխալի վըրա, որ արել է իր հապենպ «պարզաբանութեամբ» եւ երակացութեամբ:

Արշակ Բ. Արշակունի բազաւորը բանարկեւած է եղել ո՛չ թէ «ԱՆՅՈՒՇ» բերդը, այն բերդը, որ գտնը ուղարկութիւնը, որ նրա մակից մօս 300 տարերում, որ նրա մակից մօս

րի յետոյ է շինել, այլ «ԱՆՅՈՒՇ» բերդում, որ պարսկերէն կոչում է «Ղասրը Փէրամուշ» եւ գտնում էր կեդրոնական Պարսկաստանում եւ ո՛չ թէ Խոժիստանում:

«ԱՆՅՈՒՇ» բերդը («Ղասր Փէրամուշ») այն բերդ-բանտն է, ուր նետուած բանարկեալների մասին պիտի մոռանային բոլորն էլ (անիշելի, պարսկերէն բառը նշանակում է մոռացութիւն) եւ չպիտի յանդեկտին յիշեցնելու Սասանեան բազաւորներին: Ցիշեցնողը, չմոռացնը մահեան էր դատապարտում: «ԱՆՅՈՒՇ» բերդը մի տանջարան էր, ուր ընկնողները կորուած էին աշխարհից եւ տանշամքի մէջ անցնում էին իրենց օրերը մինչեւ մահ:

Միակ մարդը, որ յանդեկտին է «ԱՆՅՈՒՇ» բերդում եղող մի բանտարկեալի՝ Արշակ Բ. Արշակունու մասին յիշել, եղել է Դրաստամատը, Արշակ Բ. - ի պալատի ներքնավետը, որ Շապուհ Բ. - ի կեաները ազաւած լինելուն համար ո՛չ միայն պատի չենթարկեց իր յանդեկտուրան համար, այլ եւ՛ իրաւունք Արքայից Արքայից գնալ եւ «ԱՆՅՈՒՇ» բերդում տեսնել իր բազաւորին Արշակ Բ. Արշակունուն: Սասանեանների երկարաւու իշխանութեամ օրով շատերն են բանտարկել ԱՆՅՈՒՇ բերդում, բայց ո՛չ ոք չի յանդեկտի նրանց մասին յիշել. նրանք մոռացնել են եւ մեռել «մոռացութեամ» այդ բերդում, «Ղասր Փէրամուշում»:

Անուշ բերդը, այն բերդը, որ գտնը ուղարկութիւնը է թէկի բանարկաւած մեծ նամա-

պարիկի վրա եւ որ այսօր էլ գյոյրիւին
ունի եւ պարսկերէն լեզով կոչւմ է
«Ղասըր Շիրին», ընդհակառակը, սիրոյ,
հանոյքի եւ գարբուրեան վայր էր:
Նրա հիմնադիրը, նիշտ որ մի հայ իշ-
խանուիի է եղել Արշակունիանց տոհ-
մից, անունը Անուշ (Շիրին), արտա-
կարք գեղեցիկուի, նարպիկ, լաւ որ-
սորդ, որին սիրել է պարսից Խոսրով
Փերձից քաջանորը, Արդարադաս Ա-
նուշիրվանի բռոք, որ զան բարձրա-
ցաւ Քրիստոսի 590 թին: Աւելին Ա-
նուշ բերգը շինուել է Քրիստոսի 590
թից յետոյ իշխանուիի Անուշի կող-
մից, որի անունը եւ կոչւել է Անուշ
բերդ, Ղասըր Շիրին: Այդ բերդում և
անցկացրել սիրով արքշխ իրենց օրե-
քը Սասանեան Խոսրովը Արշակեան Ա-
նուշի հետ: Յայտնի պարսիկ բանա-
տեղծ Նիզամին նիշել է նրանց սիրոյ
հավերգուրեան մի ընդարձակ ֆեր-
քը բաժանակ ան Շիրին» վերնագր-
ով:

Եղբակացութիւն - մեր զբողութիւն մեծ

ՄԻ ՀԻՆ ԹՌՈՒԻՑԻԿ

«Վեմ»-ի առաջին գրքում տպագրւած
թժ. Միփ. Զայենանի համաօս յուշե-
ռում, ի միջի ալլոց, ասւած է:-

«Հայրենաստիքի Միութիւնը» հրատարակի է պարբերապար, քելպէու և անկանոն կերպով, մօտաւորապէս հինգ համար իր բռուցիկների, մինչև 1885-86 ուսումնական տարւայ վերջը, երբ հիմնադիմների Մոնիւայից հեռանալու և զանազան կողմէոր ցրւելու պատճառով, հայկական ազգասիրական-յեղափոխական գործունեուրեան կենտրոնը անցնում է Թիֆլիս, ուր, ֆիչ յետոյ, հիմնում է, ինչպէս վերը ասացիմք, ՀՅ. Դաշնակութիւնը» (էջ 114-15):

Առաջարկությունը պատճենաբանութեան կազմակերպութեան քիաբանութեան արդուղինային Վոլեյբանական սկսի 1885 թ. № 10-11-ի մէջ բարձրացնելու համար է:

մասը չեն սխալւել, որ այն բերդ-քամ-
տը, ուր նետած է հեղի Արշակ Բ. Ար-
շակունին, հայոց քագաւորը, կոչել են
«Անյուշ բերդ», «Ղասրը Ֆերամուշ» եւ
ո՛չ թէ Անուշ բերդ, Ղասրը Շիրփին,
մենք էլ պէտք է հետեւինք մեր գրող-
ների մեծամասնութեան:

Մեր մեծ վիխանակ Բաֆֆին էլ կարծել է, որ Արշակ Բ. բանտարկւած է եղել Ղասըր Շիրիմում, Անուշ բերդում, դրա համար էլ գրում է. «անունը Քաղցր, քայլ իմք լիքը դառն յիշողութիւններով»: Ո՞չ, Անուշ բերդը ո՞չ միայն անունն է Քաղցր, այլ եւ իմքն էլ լիքն է եղել Քաղցր յիշողութիւններով, սիրոյ եւ հանոյքի, երջանկութեան եւ զիմերբունքի յիշողութիւններով: Դառն յիշողութիւններով լիքն էր Անուշ բերդը, Ղասըր Ֆէրաժուն:

Ծաղուհ թ. տիրում էր Քրիստոսի
309-379 թվական: Անուշ թերդը շինուած
է Քրիստոսի 590 թվական:

Թեհրան ԳՐԻԳՈՐ ԵՂԻԿԵԱՆ

99

թեան-բարբարոս բամբուքեան մի փաստ,
որ յասուկ է վաղուց անցած ժամա-
նակների սանձարձակութեան, աղաղա-
կող անարդարութեան մի փաստ, որ ս-
տագակների աներեսութեան կնիք է կը-
բաւմ- Ծուռ միապետութիւնը փակու-
է մեր դպրոցները.....

Սքափիցե՞ն:Եւ երէ այժմ մենք դեռ
ի վիճակի չենք բացայատօրէն բողոքելու նենց բնաւորի դեմ, գոտէ կարող ենք մահան դատավիթու արձակելի այն սոսր չարազործենքին, որպէս սոզում են նրա ուժեքի տակ եւ մեր հայրենիքը դատապարտել են ոչնչացման.....»

Հմայքը, որոնց համաձայն գտնուած ենք, որ այս բռուցիկը պատկանում է «Հայրենակրների Միութեան», մէկից աւելի են:

«Հայրենասէրների Միուրիւնք» գրտերում էր ոռու նարդնիկների զաղափարական մի այնպիսի ազդեցութեան տակ, որ, ինչպէս ասում է բժ. Զալիհանը՝ «կազմում է առաջին բռուցիկը, խորատիվով տպագրած, այն ժամանակայ ոռու արմատական յեղափոխականների ծրագրով» (Զալիհանը նկատի ունի «Ձեմլիհա ի Վոլիհա»ն, որը ընդհատուց ծնունդ տալով «Նար. Վոլիհա»յին): Այսպիսով, ուրեմն, «Հայրենասէրների Միուրիւնք» իր առաջին «դեկտապահովով» ոռուեցում է ոռու նախանութիւնը, անյարիք է կարծել, թէ «Հայրենասէրների Միուրիւնք» կարող էր զանց առնել համազգային մի այնպիսի աղէս, ինչպիսին հայ դպրոցների փակումն էր, եւ չարտայայտւել այդ մասին իր հինգ բռուցիկներից մէկի մէջ: Ամէն պարագայի տակ «Հայրենասէրների Միուրիւնք» գոյուրեան ու գործունեուրեան շրջանը (1882-1886) այնքան էլ հարուստ չէ համազգային արժեք ունեցող դեպքերով, որոց մէջ կարելի լինելու զանց առնել մի ցնցող դէպ:

բռղմիկների ծրագիրը, ինչպէս տառվէ քժ. Զալեանը, «յարմարեցրած, ի հարկէ, ընկերութեան մասնաւոր նպատակներին»:

Այս գաղափարական կապի եւ համակրանքի հետեւանքով բնական է, որ «Նարոդնայեա Վոլեհայ»ի խմբագրութիւն տեղ տար իր ամսագրում յիշեալ բռուցիկին յատկապէս իբրև հայ գաղափարակիզմերի մի գորութեան:

«Հայրենասէթնիքի Միուրինը», ինչպէս նաև «Զմլեա ի վոյեայի գաղափարների ազդեցուրեամբ Կովկասում Փրկուրին»։ Երգում, 1882 թ. «Գաղտնին ընկերութիւն Բարձր Հայոց» արդէն բայց աշխատ ու լուծւած էին, իսկ

digitised by


Արմենականների թերքի («Արմենիա») առաջին թիւր լոյս տևաւ 1885 թ. օգ. 1-ին միայն:

Սակայն, բացի այդ, յիշեալ բռուցիկը ամէն տեսակետով անհարազան է Արեւմտահայ յեղափոխութեան տրամադրութիւններին: Արեւմտահայ յեղափոխանները կամաւած էին կեսնեի ու գոյուրեան ցաւատաչ հարցերով, որոնք իրենց ծանրութեամբ չոփել էին նաև կովկասահայութեան յեղափոխական մտքի ու խղճի վրա:

Այս տեսակետով, «Նարութեայիա Վոլեայ»ի մէջ տպաւած բռուցիկը իր ժամանակի համար նորութիւն է եւ ոռումիսապետութեան դէմ ուղղւած անդրանիկ թուոցիկն է:

Մէկ-երկու խօսք էլ այն մասին, թէ ինչո՞ւ այդ բռուցիկը լոյս է տեսել 1885 թ. փետրար 22-ին, ժամի որ հայկական դպրոցների փակումը տեղի է ունեցել Ֆիշ աւելի ուշ, այսիմքն՝ նոյն թիւ մարտին:

Հայկական դպրոցների խնդիրը կառավարական շրջաններում ծեծուում էր դեռ 1884-ի փետրարից սկսած: Այդ թիւ փետր. 16-ին ներքին գործոց նախարարութեան կողմէից կազմած «հանունների» համաձյան էջմիածինը գրկուում էր իր միջնեւ այդ ունեցած իրաւունքներից, որոնք 1885 թ. հրաւարակւեցին Անդրկովկասում իրեւ բռոնք հայկական դպրոցների փակման դէմ: Այդ բռուցիկների մասին յիշում է Քր. Միքայէլեանը իր յուշերում, ուր ասած է նաև, որ այդ բռուցիկներից մէկը գրած է Գարր. Միքոյեանի և իր կողմից. («Հայրենիք» ամս., 1924 թ. № 10, էջ 59):



ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ

ՄԵՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ

«ԲԱԶՄԱՎԵՊ»- Հանդիսարան բանասիրական, գրական, գիտական, բարոյական- Մեր ամենէն կիմ, վաստակաւոր պարբերականը: Հրատարակուում է 1843 թ. սկսած, ասել է, գրեթէ հարիւր տարւայ կեսան ունի: Տեսել է լաւ եւ վաս օրեր, մտի տիտաններ է հիւրենկալի իր էջերում եւ անգնահատելի ծառայութիւն մատուցել հայ մշակոյրիմ:

Իր եղբայրակից «Հանդէ Ամսօրեայ»-ից «Բազմավէպ»-ը տարբերուում է նրանվ, որ իր էջերը բաց են նաև առօրեայ կեսանի երեւոյքների համար: Եւ, ի հարկէ, սա նրա խոցելի կողմէն է: Վամեք ունի իր պայմաններն ու մտահոգութիւնները, որոնք յանախ ներհակ են աշխարհիկ կեսանին: Այդ պատճառով, ամեն անգամ, երբ վանականները փորձել են զրադեւ նաև աշխարհիկ կեսանի ընթացիկ խնդիրներով, անխուսափելորեն վրիփել են: Օրինակ էջմիածինի «Արարատ»-ը, որ գիտական տեսակետից իր ամենափայլուն շրջաններին՝ անյաջողութեան է մատնել ինչ որ ուզեցել է աշխարհիկ հրապարակութիւն անիւ: Օրինակ, երուսաղէմի «Սինն»-ի կամ Ամբելիասի «Հասկ»-ի այսօրւայ վիճակը: Եւ կամ, վերջապէս, բոլորական «Հայաստանի Կոչմակ»-ի պարզած տխուր պատկերը: Կացութիւնը պարտաւորեցնում է: անկախ իր կեսանից վերդարի տակ զրտելու ամենը պարտաւոր է մտնել այնպէս, ինչպէս ստիպում են կրօնական դաւանամքը, եկեղեցական նիմնաւորւած լուրջ գործ - միջնեւ այժմ լոյս տեսած մասները մեծ յոյս չեն ներշնչում այդ տեսակետից:

Այս կապակցութեամբ, կանգ առնենի եւ Հ. Յ. Փէշիկինամի «Հայկական քարտանի ծագումը» յօդածի վրա (№ 1),

գրած իրազեկի «Վէմ»-ի Բ. բւում
լոյս տեսած «Հայ անդրանիկ քատեր-
գուրիւնը» ուսումնասիրութեան առ-
փիւ: Իրազեկը փորձել էր հերքել հայ
գրականութեան պատմութեան մէջ ըն-
դունեած կարծիքը, թէ «Հ. Փետրոս Մի-
հասեանն է հայ անդրանիկ քատերա-
գիրը եւ ուրեմն Միխիքարեան հայրերին
է պատկանում առաջնութեան պա-
տիւր հայ քատերագրութեան ասպարէ-
գում», եւ հասուատել, որ առաջնու-
թեան պատիւր կամ առաջին խօսքը
պատկանում է հնդկահայերին»: Հ. Փէ-
շիկեանը Հ. Բարսեղ Սարգսիսեանի «Երկ-
հարթիւրամեայ Գրական Գործունէու-
թիւն եւ Նշանաւոր Գործիչներ Վեճեստի-
կոյ Միխիքարեան Միհարանութեան»(տպ.
1905) գրքից ժաղած՝ տեսաներով՝
աշխատում է ջրել իրազեկի փաս-
տերը եւ ցոյց տալ, որ միխիքարեան-
ներն են հայ քատրանի եւ քատերգու-
թեան հիմնադիրները:

Այս գաւոս գրական-գիտական խնդիրը
չ. Փեշիկեանը ներկայացնում է արտա-
սովոր յուղումով՝ ջանալով պաշտպա-
նել Մինիքարեան միաբանութիւնը, իրը
թէ, հացւած անիրաւութիւնից: Այն
«իմ»-ի ու «քո»-յի, ամենական կամ
խմբական արժանապատռութեան հար-
ցեր չյարուցին: Միակ հարցը՝ պատ-
մական հշմարտութիւնն է:

թէ, հացւած անիքառուրի իւնից: Այն
ինչ յուգելու եւ նեղանալու բնաւ ա-
ռհեք. հնաւ: Ենասելու, ոնաևնապատ.

Երկու խօսք էլ Իրազիկին: Թէհրանի
«Ալիք» քերքում (№ 51, 52) նա «Մի
գաւալի թիրիմացուրի իւն» վերնագրով

*) Հետաքրքական է, որ «Բազմմագլուխութեան»-ի № 1-ում Հ. Փէջէկեանը դատապարուսուն է Իրազեկին, որ առ կարծիք է յայտնել, թէ հայերէն ամենաշին թատերգութիւնը «Խորագիմայ Դժբողութեան»-ն է, իսկ մի ամեն յետոյ, նոյն «Բազմագլուխութեան»-ի № 2-3-ում և. Երեքեանը դրում է, թէ՝ «Խորագիմայ Դժբողութեան» կատակերգութիւնը ժամանակազրական տեսակետից մընչեւ օրս յայտնագործւած պիէսներից ամենահինն է», եւ թէ որոշ «Գերազանցութեամբ կարելի է ընդունել, որ առաջին հայ թատերգութիւնը «Խորագիմայ Դժբողութեան» կատակերգութիւնն է» (Էջ 84):

բնիքարակ բացատրութիւն-պատասխան
է գրել Հ. Փէշիկեանի յօդւածի առքի
եւ, ի միջի այլոց, մեղադրում է մեզ,
որ մեր «խմբագրի սուր միրաւը» «զի-
լինոտինի» է ենթարկել իր գրւածքը և
որ երէ մենի իր յօդւածի առաջին մա-
սր յապաւած չլինենին, Հ. Փէշիկեանը
առիք չէր ունենայ գրելու և ինքն էլ
ազատ կը մնար «անտեղի գլխացաւան-
ֆից»:

ձիւտ է, մենք իրազեկի գրութեան առաջին մասը յապաւեցինք, բայց երեւ ամբողջն էլ տպած լինեինք, բայ էռութեան ոչինչ չեր փոխի, որովհետեւ Հ. Փէջիկեանի առարկութիւնը աւելի կիմնական է. նա գտնում է, որ ոչ միայն 19-րդ դարում, այլ, առհասարակ, հայ քատրոնի եւ քատերգութեան սկիզբը դրւել է միիրարեանների կողմից: «Խորադիմաց»-ն յօրինել ու խաղացել է 19-րդ դարի առաջին քառորդում, մինչ Հ. Փէջիկեանը Ս. Ղազարի վանքի անտիպ ժամանակագրութիւնից առենլով՝ գրում է, թէ 1760 թ. եւ դրանից առաջ Քենսեանիկում խաղացել են հայերեն քատերգութիւններ: 1807 թ. սկսել են յօրինել ու քեմադրւել աշխարհաբարկատակերգութիւններ: Հ. Փէջիկեանը նույն իսկ յիշում է մի շաբէ անուններ:

Դուրս է զգիս, ուրեմն, որ, «Խորագիւմա»-ն 19-րդ դարում էլ անդրանիկը չէ: Գուցէ անդրանիկն է իբրև տպագրուած գրք: Երազեկի յօդածի յապատճ մասը այս խնդիրը չի շօշափում: Այսուղե համառա ակնարկ է նետած հայ հին շրջանի թատրոնի գարգացման ամենքին ծանօթ փաստերի վըրա, որոնք, մեր կարձեռով, շատ են տարրական այս կարգի ուսումնասիրութեան մէջ տեղ գրաւելու համար:

Այս հարցը մեզ շատ զբաղեցրեց, իւ
«Բազմավկեպ»-ի բովանդակուրեան միւս
մասերին անդրադասնալու տեղ չմնաց,
դդքախտարար :

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ» - «Ազգային, ժաղաքական եւ տնտեսական» այս շ-

ցումով է կարդում այս երկու հրատարակութիւնները: Նրանք հայելին են այն զարդուրելի կացուրեան, որի մէջ զաւարում է պառակուած ու քշմամի հաստածների վերածուած զալուրահայութիւնը: Պէտք էր յուսալ, որ մեր նոր սերումնը, անող ու դաստիարակուող աւելի բաղադրակիրք պայմաններում, ազատ կը լիներ մեծերի ախտից - բայց ամուռութիւնից: Պէտք էր բապան, որ գէր արխական շարժման պէս մի համարող երեւոյր զօդող - միացնող ազդակ լիներ մեր երիտասարդուրեան համար - իրականութիւնը, դժբախտաբար, նիշու հակառակն է հաստառում: Միւրթին չկայ եւ այսուղ: Մեր զաւակները կրկնում են հայրերի սխալը՝ առանց գիտակցելու, թէ ի՞նչ ծամբ յանցանք է իրենց կատարածը:

Ո՛չ մի լուրջ հիմք չկայ անհամերաշխուրեան: «Հայ Սկառուտ», «Հայ Արի» - անների ամօր է այս պառակուումը: Անհրաժեշտ է օր առաջ միացընելի հայ արխների բոլոր կազմակերպութիւնները մէկ դրօշակի տակ եւ ունենալ մէկ պաշտօնաբերը: Առանձին - առանձին երկուսն էլ կը լինեն բոյլ, միւրթիւնը կը տայ ոյժ եւ յաջողութիւն:

Hairenik Weekly. - «Հայրենիք» շաբարերերը անզիւերէն լեզուվ, որ ան մի բամի ամիս է լոյս է տեսնում բուստուում, նոյնանում օրաբերի եւ ամսագրի կողքին: Այստան կարն ժամանակամիջոցում քերը առ 2500

օրինակ սպառում ունի եւ տարածուած է ոչ միայն Ամերիկայում, այլև անգլիախոս ուրիշ երկրներում՝ Հնդկաստան, Իրաք, Պաղեստին, Կիպրոս, Եգիպտոս եւայլն: Յաջողութիւնը ակներեւ է: Եւ առաջին 14 թիւնը վկայում են, որ այդ յաջողութիւնը անտեղի չէ:

Hairenik Weekly. - հրատարակուում է «Հայրենիք»-ների ընդհանուր խմբագրուրեան զեկավարուրեան տակ եւ անմիջական խմբագրուրեամբ երիտասարդ լրագրող Արմէն Պարտէզեանի: Պէտք է ուրախուրեամբ արձանագրել, որ գործը տարում է բայ ամենայնի գոհացուցիչ կերպով: Թէ ոգին եւ ուղղուրթիւնը, թէ նիւրերի ընտրուրեան նաշակն ու բազմազանուրթիւնը, թէ, վերջապէս, բազմարի երիտասարդ ուժերի աշխատակցուրթիւնը քերը դարձնում են հետաքրքրական եւ անպայման օգտակար: Ուշադիր ընթերցողը կը նկատէ, թէ ի՞նչ կենդանուրթիւն է առաջ եկել ամերիկական անզիւխոս սերնի մէջ, ինչպիսի՞ զերմ համակրանք է ստեղծել այս նոր շաբարերի շուրջ, որ առա եւ քարմ նիւրերի տակին հետաքրքրնամատին: Այստան յաջողութիւնը ապացոյց է, որ նա ընդ առաջ է զալիս վաղուց հաստացած պահանջի, մի պահանջ, որ, աւանդ, բխում է մեր կերպի դժբախտ համգամանեներից: Մի բանի տարի եւս - եւ այդ պահանջը պիտի զգացի նաև Ֆրանսայում, ուր արդէն նոյնպէս համում է օտարախոս մի համակամիջոցում քերը արդէն մօտ 2500



ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Վիգէն Գլ.Ա (Կ. Սասունի), «Լեռներու խորհուրդը», Պէյրուր, 1934

Ամէն մի գրող իրենից ուրոյն մի աշխար է ներկայացնում, եւ որքան մեծ է գրողը, այնքան լայն ու տարածուն են այդ աշխարի սահմանները: Այդպէս են Տուլսոյը, Դաստուսիկն: Այդպէս են Վիկոնը Հիւզոն, Զուան: Այդպէս է, վերջապէս, մեր Բաֆֆին: Կան, սական, եւ այնպիսի գրողներ, որոնք զիւն կարենալու համար - «Դուք սես» էք Կորէկի կալերը եւ այն սրտամուում աշխատանքը, որ լիննական գիւղացին կը կատարէ կալը տան փոխադրելու ատեն, աչքը միշտ երկնքի ամպերուն յառած: Դուք չափա՞ծ էք սրտի այն յուսահաս մորմոքը, որ զիւղացին կունենայ, երբ կալը անձրէկ տակ կը մնայ»: (Անմահը):

Գիւղագիր է Վիգէն Գլակը - Սասունին: Երա գիւղը մեր այսեան սիրելի, պարզունակ ու անզարդ գիւղն է, իք արարի դէկերով, իք ճիւմերի տակ կորած գետնափոր խրնիքներով, իք «ալզոթատեղիքի մը պէս խորհրդաւոր» բնիւրատուով, ուր «եօթը պորտէն ժառանգութիւն մնացած» բնիրի ծովոյը ամէն լուսաբաց պալան-պալան դէպի երկնին է բարձրանում աղօրէի պէս: ուր «սեւ սիրներն ու զերանները սեփ-սեւ պատերուն վրայ եպենուսեայ կամար են կապած»: Ճիշտ է նկատել Սասունին - «հերանսական մեհեան» է մեր բնիւրատունը, որ մեր մամիկները հայ օջախի կրակն ու ծովոյը ամէն միացի երկապեսուակինքը... (Ընանի ողջ մնան):

Չմեռը գիւղում...: Ո՞վ չգիտէ մեր լեռների մենքը. ո՞վ չգիտէ թէ ինչպէս լեռնային մեր գիւղը ճիւմեները արչի պէս բութ է մտմաւմ, «կրիայի պէս եր

պատեանին մէջ քաշում» եւ միայն ինչ որ «պատահարի» սպասում, «առարին անդամ մը գուրս պոռթկալու իր ան-շարժ ու լուռ կեանքն»։ Այդ արտակարգ «պատահարիներից» է, անշուշտ, եւ բարիկենդամը, զիւղի տանիքների վրա եղած իր պարերով, ուրախուրիներով ու քեփերով։

Վեգէն Գլակը զիտէ, երբ պէտք է, մի քանի բառով, վարպետ վրձինի մի քանի հիւրեղ շարժումով պատկերացրենելու մեզ այդ զիւղը «Ահա ժշուի մէջ անորու երերում մը, եւ բարտին զը-լուիր կը ցցւի տարածութեան վրայապա անյատչն մեր տունը կը բարձրանայ՝ վեր, ու մէկէն դիւզը իր այ-դիներով ու արտերով, բլուրներով ու ձորերով կը ժաւի զիւղը»։ Շա՞տ զե-ղեցիկ, կենանին ու դիմամին մի պատկը է զիւղական առաւոտք, երբ զիւ-ղը հէֆեաթների այս քանաքի նը-ման, կարծէ կախարդական մի ինչ որ զաւազանի ուժով, արքանում է իր խո-րը, միանամից, յանկարծակիո-րէն, «պայրումով», ինչպէս Սասունին է տում «Աքաղաղը, կոչնակն ու ժամ-կոչը լուութինը կը ճեղքէն»։ Արեւ սարի գլխէն, համաստարած ճեղքատի մը պէս, զիւղն ու այգիները կողոզէր։ Հարսն ու կովը, հաւն ու ուլը, ծփարն ու եղը իրար կը խառնէնին։ Նախիրի բառաչ, իշու զուց, կանանց կուր, հնձուրի հայուայնքն քայլութեան անողոք պայ-քարը լորձանք տալով անցած էր այս խորխորատներէն վար։ Տիգրիսը տէզի պէս խրած էր սէզ լեռներու կողերուն մէջ, ճեղքած էր անոնց հաստարհստ կուրծքն անչափելի անդունդներով։ Աւ միապաղազ լեռը՝ երկու կտորի բաժ-նուած գաբաթները զէմ-զէմի կը կենա-յին հորիզոնին վրայ, խրոխտ ու ար-համարհական նայուածքներ խոնարհե-լով վիշապին, որ դարերով գալարած կը մնար իրենց պատւանդաններուն։ Մինչ զալաթներէն վար, հովիտի ընդ-մէջն, լեռնան ալիքները զուրս թափ-ւած էին, ժայռերը ճեղքւած ու տա-պաւած։ Զսկայ քարերը ալիքներէն ծեծւած ու կլորցած էին. սղոցւած ծա-ռի մը պէս՝ լեռն կողերը խաւ առ-խաւ բացւած էին, բիւրաւոր զարերու այս անվերջանաւի ճակատամարտին պատմութիւնն արձանագրելու համար։» Ու մի ֆիշ վար. «իսկ լեռը իր արդան-զի խորեքն զդրդալով, տեղ տեղ կը սեղմէր իր քարէ բուուցքները Տիգրի-սի կոկորդին, խեղեկելու չափ ամուր։ Գետը վիշապի պէս կը Փշար, շունչը

կը կորէր, բերանը կը վրփրէր, ժար-մինը կը զալարւէր, յուսահատօրէն ժայռերը կը խածուէր ու, վերջապէս, ազատած այդ քարէ բուուցքէն, լեղա-պատառ կոռնար, առանց ետեւ նայելու կը սուրար գէպի հարաւ, ու ալիքները սրարչաւ իրարու ուսին վրա կը ցատ-կէն՝ հաւածւած եղջերուների խելա-յեղ վաղքին պէս։ («Էջլանը»)։

Ըստ իս' այս տողերի վրա Բաֆփի, ու թերեւս Ակարանեանի շունչը կայ։ Բաֆփի Արակս է պատկերանում ինձ, այս տողերը կարդալիս, որը նոյնպէս պայքար է մղում - խոլական պայքարի կողերը սեղմող լեռների հետ, որը դարեր շարունակ կանում է լիդապատառ։ «Ներդ է, խեղդուում հմ»։

* *

Բայց Կ. Սասունուն զրադենողը այս արտաքին նկարագրութիւնները չեն։ Նը-րան հետաքրքրողը, զիյաւոքը, կականը մարդկան է, մարդկային նոյների վրա համերդակ է նայուակ, աննկուն եւ արդարութեան համար ու ար-դուում։

Վերցնեն օրինակ նրա պատմւածքնե-րից մէկը միայն - «Անմահը»։ Այսուղ զիւղը իր պարզ ու անպանչին արտաքի-նով միայն փոն է։ Կականը մարդկային փոխյարաբերութիւններն են - բարդ, խնողած, կրերով ու հակասուրի հիննե-րով լեցու։ Մարդկի կովիտ են իրա-րու համերդ, անխիղն ու քարսիրու։ Երկու կուրսը զէմ-զէմի կը կենա-յին հորիզոնին վրայ, խրոխտ ու ար-համարհական նայուածքներ խոնարհե-լով վիշապին, որ դարերով գալարած կը մնար իրենց պատւանդաններուն։ Մինչ զալաթներէն վար, հովիտի ընդ-մէջն, լեռնան ալիքները զուրս թափ-ւած էին, ժայռերը ճեղքւած ու տա-պաւած։ Զսկայ քարերը ալիքներէն ծեծւած ու կլորցած էին. սղոցւած ծա-ռի մը պէս՝ լեռն կողերը խաւ առ-խաւ բացւած էին, բիւրաւոր զարերու այս անվերջանաւի ճակատամարտին պատմութիւնն արձանագրելու համար։» Ու մի ֆիշ վար. «իսկ լեռը իր արդան-զի խորեքն զդրդալով, տեղ տեղ կը սեղմէր իր քարէ բուուցքները Տիգրի-սի կոկորդին, խեղեկելու չափ ամուր։ Սակայ գագարած ամառներին ու անոր միտքը հակ-ւած էր հիմնական գրգապատմառը հարւածեւու, յղկելու։ Աւ այսպէս զէմ-զէմի կը կենար Արարէն»։

Աւ մի օր էլ՝ ողջ զիւղի ներկայու-թեամբ, զայրացած նա շարուում է քա-համայի երեսին - «Տէրտէ՛ր, ուրեմն գուն, երեցփոխ Շամառը, Ժամառը, կամկու ըուն, զող կիկօն Աստուն բնաւորութիւն և գէմքն ունինք»։ Ես ձերն է, ձեր

Աստծուն էլ...: Ուրեմն, Աստւած ձեր ակունքուն պէս ակունքո՞ր ունի.դէ՛ս, դացէ՛ք, դացէ՛ք, Աստծոյ պատկերը շալկեցէ ու լավիցէք գիւղը»:

Խզումը՝ իր եւ Աստծոյ միջեւ դառնում է անխուսափելի: Զաջէն դառնում է անստուած, նա «այլեւս հաղորդութիւն չառաւ, ժամանուն չժառաւ»...: Ու այսպէս մինչեւ իր մահը: Նա զիսէ, որ ուզի թէ չուզի միեւնոյն է պիտի մեռնի, նա զգում է այդ, սակայն չի կարդանում հաշուել այդ մտքի հետ: Երէ մարդը Աստծու ստեղծածն է, իր պատկերի համանայն, ապա ինչո՞ւ համար է մահը: Աստւած անմահ է, մարդը ինչո՞ւ մահկանացու: Մահեան զգացումը, որ շատ-շատերին դէպի համակերպում է տաճում, ընդհակառակը, Զաջէին դէպի ընբոսացում է տաջնորդում: Նա չի ուզում սենի տալ առանց ուայի բարի և մեռնելու վայրինանին «խանչալը» ձեռքն առած նչում է. «Ես իմ հոգին Գաբրիէլ հրեշտակին չեմ տար... եթէ ժօտենան, կը զարնեմ ... ես նորէն Սպիտակ նազակ կուզեմ երթալ»...

**

Գրողի համար, արևստագէտ գրողիշատ աւելի արծէքաւոր ու հետաքրքրական են այն ներքին հոգեկան վայրիվերումները, որոնք տեղի են ունենում առօրեայ կեանքում, անտեսանելի ու անլսելի կերպով, յանախ առանց ունէ շօշափելի պատճառի, առանց արտաքին դէկորմերի - ցնցումների: Սասումին, ընդհակառակը, մարդկային հոգու մըրքին ծալիքներում փնտրում է ո՛չ միշտ այն, ինչ որ մօտ է բանականութեան, պարզ, սովորական: Նրա հերոսների հոգիներում արձագանքում են խոշոր ցնցումները միայն, նակատագրի ուժեղ հարւածները: Առանց այդ ցնցումների մերի մերձական պատճենի մասին կարծէն է Աշխարհ աշքիս մընեցաւ... Հայրածն մընեցաւ ու ես անդունդ զաւալիթեցի իմ հրացանին եւ որին հետ»... Եւ ահա այստեղից էլ սկսում է բուն ողբերգութիւնը: Այդ մշտաշարժ, լինմերի ու որսի սիրահար տըղան, յաւէս ամեամալոյժ է դառնում, անընդունակ այլեւս ոչ միայն որսորդութեան ու տղայական չարութիւնների՝ այլ նոյնիսկ քայլելու. «Շիտակ ոտքիս վրայ կանգնեցայ: Զարդւած ոտքս առաջ նետեցի, բայց ան ինծի յենարան չեղաւ: Զարնւած թուզունի պէս վար ինկայ: ... Աշխարհն աշքիս մընեցաւ... Հայրածն մընեցաւ... Հայրածն մընեցաւ... Մայրս մորմոքած քովս նըստեցաւ: Եղայրիներս ու հարսներս իրենց արցունքը չերցան զսպել ու տան կողմն անցան: Ես, ոտքերը կոտրած գառնուկի մը անմեղութեամբ՝ շորջու կը նայէի, կարծես իմ ըրջապատէս կը հարցնէի.


«Այս ի՞նչ եղաւ»...:

**

Կ. Սասումու գրքի մասին շատ բան կարելի էր ասել. սակայն առանց այն էլ բաւականին երկարց իմ յօդածը, ուստի պիտի աշխատեմ ընդհանուր եղարակացութիւնները («Քամազնչած», «Կըլկըլ ճիւղեր») խար-արում են Սասումու այնքան գեղեցիկ ու պատկերաւոր լեզուն: Ուրիշ թերութիւններ է ունի, անշուշտ, սակայն եղած առանձ-լուրիւնների հետ համեմատած այնքան ժիշ են նրանք, որ այսօր ես չպիտի ուղարկի նրանց մասին խօսել:Կ. Սասումին, որքուն էլ որ «հիմ» է որպէս քաղաքական-հասարակական գործիչ,-որպէս գրքորդ նոր է, սկսակ-եւ այդ իսկ պատճառով բումանիք է, վար երեւակայութեան տէր: Շատ յանախ նրազն ու կեանքը իրար է յանանում եւ այդ իսկ պատճառով՝ աւելի բանաւոհն է, նաև վիպող, պատմող: Դրանիշ է սակայն, նրա այդ բումանիքը պարունակում է այն սկսական պրոտակը: (Սէյյանի «կնոնք ող մեան»-ը): Կա կարող է մեզ վարակել իր յուզումներով, իր հոգեկան բունքներուն ապրումներով: Եւ աս մեծ առաւելութեան է, որից, դժբախտաբար,

այնքան գուրկ են մեր նորերից շատ-շատերը: Ոնք ժուժկալ է, չափազացուրիւններից գերծ, սակայն տեղ-տեղ անհարը: Ոնք այս անհարըուրիւնները, ինչպէս նաև մի քանի անյաջական էնթական: Ենթակայական իսկ նրանք մասին յօդածիքից: Ընդհանրացումներ կամ բնաւ գոյուրիսն չունեն, կամ շատ ժիշ են: Ամէն սեղ ինքնի է, իր ապրումները: Բումանիք է, վար երեւակայութեան տէր: Շատ յանախ նրազն ու կեանքը իրար է յանանում եւ այդ իսկ պատճառով՝ աւելի բանաւոհն է, նաև վիպող, պատմող: Դրանիշ է սակայն, նրա այդ բումանիքը պարունակում է այն սկսական պրոտակը: (Սէյյանի «կնոնք ող մեան»-ը): Կա կարող է մեզ վարակել իր յուզումներով, իր հոգեկան բունքներուն ապրումներով: Եւ աս մեծ առաւելութեան է, որից, դժբախտաբար,

ԼԵՒՈՆ ՆԱԽԻՑԻ



ՎԵՄ ՆԻԿԻՐՈՂՆԵՐ

Տքթ. Պ. Դարբինեան, Տիթրոյիտ,
Մուրատ - Ռաֆայէլեան Վարժարան,
Մելք:

Տքթ. Պ. Դարբինեան, Տիթրոյիտ,
Մուրատ - Ռաֆայէլեան Վարժարանի
աշակերտներին, Վենետիկ:

Ուսանող Մաղաքեան, Հայաստանի
Համբային Մատենադարանին, Երևան:

ԱՏԼԱՏԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Վեդէն Գլակ (կ. Սասունի), «Լեռներու Խորհուրդը», հրատ. Ազգանան Գյուղատան, Պէյրուր, 1934 թ.

Խոկչումք Արգարիսոս, «Սարսափմերու Գիրքը», քարգ. Սիսակ Վարժապետան, Պէյրուր, 1934:

Դր. Միր Եակուր, «Միջազգային Դրամական և Ազգ. Խնդիրը Խորհրդ Միութեան մէջ», հրատ. «Պրոմերէ», Փարիզ, 1934 (ռուսերէ):

Յ. Գույումճեան, «Այդպէս էր Ամերիկան», Ֆիլատէլիֆիս, 1934:

Վ. Զարգարեան, «Յիշատակարան» (1512-1933), Հայ Գաղուրը և Մամուլը Եգիպտոսի մէջ, թ., Գահիքէ, 1934:

Զւարթնոց, Ամսարերը Գրականութեան և Գեղարվեստի, Խմբ. Հ. Բալուեան, Փարիզ, № 1-10:

«Հայրենիք», Ամսագիր, № 7, 8, 9:

«Բազմավէս», № 4, 5, 6:

«Միոն», № 5, 6:

«Երկունք», № 1, 2:

Խորհրդային Արևեստ», Երեւան, № 4:

Գրական Թէրթ», Երեւան № 13, 14, 15, 16, և 17.

«Փունջ», Պարբերական Գրականութեան ու Գեղարվեստի, Խմբագրական վարչութիւն՝ Գ. Ա. Ազիզեան և Օն. Թօփուզեան, Բիրէա-Գորինա, № 23, մայիս:

Հ Ա Յ Բ Ե Ն Ի Ք

ՕՐԱԹԵՐԹ

Տարեկան	6 դոլար
Վեցամսեայ	3 , ,
Եռամսեայ	2 , ,

Հասցէ՝
Hairenik Press, 13-15 Shawmut st.

BOSTON-MASS (U.S.A.)

Ն Ո Ր Ո Ր

ՕՐԱԹԵՐԹ

Ցումաստան, աարեկան,	420 ար.
, , վեցամսեայ	210 , ,
Երբախ, աարեկան,	135 ֆր.
, , վեցամսեայ	80 , ,
Ամերիկա, աարեկան,	8.00 դոլար
, , վեցամսեայ,	4.50 , ,

Հասցէ՝
„NorOr”, 20-A, Rue Vouli,
ATHÈNES (GRÈCE)

Հ Ա Յ Բ Ե Ն Ի Ք

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան	5 դոլար
Վեցամսեայ	3 , ,
ՀԱՅՐԵՆԻՔ ԱՄՍԱԳԻՐ ԵՒ ՕՐԱԹԵՐԹ	ՄԻԱՍԻՆ

Տարեկան	10 դոլար
Վեցամսեայ	5 , ,

Հասցէ՝
13-15 Shawmut st.
BOSTON MASS (U.S.A.)

Յ Ո Ւ Ս Ա Բ Ե Ր

ՕՐԱԹԵՐԹ

Եգիպտոս, աարեկան,	150 եգ. դի.
, , վեցամսեայ,	80 , ,
Արտասահման, աարեկան,	40 շիլլին
, , վեցամսեայ	20 , ,

Հասցէ՝
“Houssaper”, B. P. 868
Le CAIRE (EGYPTE)

«Յ Ա Ռ Ա Զ»

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՑԻՆ, ԳԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Խմբագիր՝ ՇԱՀԱՐԵ ՄԻՍԱԳԵԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	Տարեկան	Վեցամսեայ	Եռամսեայ
Ֆրանսա և Գաղուրմեր	140 ֆրամֆ	70 ֆրամֆ	35 ֆրամֆ
Անգլիա, Եգիպտոս, Զիգերիա, Խոալիա	250 ֆրամֆ	130 ֆրամֆ	
Ուրիշ Երկիրներ	200 ֆրամֆ	100 ֆրամֆ	
Ամերիկա	200 ֆրամֆ	100 ֆրամֆ	

ՀԱՍՑԵ. — 17, Rue Damesme, Paris XIII

Ս Ի Ռ Ո Ն

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան 6 ամպ. շիլին կամ 1.50 դլ.

Հասցէ՝

Patriarcat Arménien, Jérusalem
(Palestine)

Բ Ա Զ Ա Մ Ա Վ Ե Պ

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան 3.50 դոլար
Հասցէ՝

“Pazmaveb”, St. Lazar, Venise
(Italie)

Ա Զ Գ Ա Կ

ՕՐԱԹԵՐԹ

Սիւրիա, աարեկան	550 ս. դ.
Սիւրիա, վեցամսեայ	300 ս. դ.
Արտասահման, աարեկան	7 դոլար
Արտասահման, վեցամսեայ	4 դոլար

Հասցէ՝

“Aztag”. B. P. 587 Beyrouth
(Liban)

Ա Զ Ա Ս Խ Օ Ս Վ

ՕՐԱԹԵՐԹ

Բուլգարիա, աարեկան	550 լի.
Բուլգարիա, վեցամսեայ	300 լի.
Ամերիկա, աարեկան	6 դլ.
Ուրիշ Երկիրներ, աարեկան	150 ֆր.

Հասցէ՝

45, Bld. Dondoukoff, Sofia
(Bulgarie)

Հ Ո Ր Ի Զ Ո Ն

ՕՐԱԹԵՐԹ

Ներքին, աարեկան	300 ար.
Ներքին, վեցամսեայ	150 ար.
Ներքին, Հուամսեայ	80 ար.
Արտասահման, աարեկան	150 ֆր.
Արտասահման, վեցամսեայ	80 ֆր.

Հասցէ՝

2, Rue Franguini. Salonique
(Grece)

“V E M.,
REVUE BIMESTRIELLE ARMÉNIENNE
Directeur : S. VRATZIAN

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—*

ԴՐՈւ Մի հատուած յուշերից	1
ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՀԻՐԵԱՆ - Սայեար Նովա	18
ԶՈՐ Գ. ՂՈՐՂԱՆԵԱՆ - Հայաստանի Հանրապետութիւնը և Պետութիւնները	29
ԱՐԴԱՄ ԽՈՆԴԿԱՐԵԱՆ - Օպոզիցիան Հանր. Հայաստանում	42
ՍԱՄՄՈՆ - Հայաստանի Անդրանիկ Դեսպանը Պարսկաստանում	61
ՊՐՈՓ. Զ. ԱԻՍԼՈՎ - Բաքումի Խորհրդաժողովը	74
ԱՆՑԵԱԼՔ - Վահան Գարտաշեան - Պրոֆ. Յ. Թ. Գայանեան - Յակոբ Քոչարեան - Վ. Ղ. Ղորդանեան - Մանուկ Մի- քայորեան - Սարգիս Քամալեան: Արքշ Մահեր	85
ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ - Բաֆիու Բամակը Քր. Միքայէլեանի մասին Արամի Բամակը Վանից - Ստ. Շահումեանի Բամակը Ս. Զաւարեանին	95
ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ - «Անյուշ» թէ «Անուշ», Գրիգոր Եղիկ- եան, Թէհրան - Մի հին քոռոցիկ, Վ. Մինախորեան	97
ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ - «Բազմավիճ» - «Հայաստանի Կոչմակ» <i>Hairenik Weekly</i>	101
ԳՐԱԽՈՍԱԿԱՆ - Վիգէն Գլակ (Կ. Սասունի), «Լեռներու Խոր- հուրդը», <i>L'Etat à l'arrache</i>	105
ՑԱՒԵԼԻԱԾ - Վահրամ Եպ. Մամիկոնի, «Գերգ Դ. եւ իր Ժամանակը»	65-80


Gérant: V. Hampartzoumian

«Վ. Ե. Մ.» - Խ. Ն.

- Բաժանորդ կարելի է գրել հետևեալ տեղերը -
- Ֆրանսա՝ Լ. Գելոնսան, 17, Rue Damesme, Paris.
Ն. Կակոսեան, 49, Rue Nationale, Marseille.
Յունաստան՝ «Նոր Օր», 20-A, Rue Vouli, Athènes.
Կիպրոս՝ Յ. Մահմեսեան, Arasta St. No. 1, Nicosia.
Բուլգարիա՝ Յ. Տէլքձեան, 82, Bld. Hristo Botev, Sofia.
Ռումանիա՝ Ե. Մարգսեան,
Typ. "Astoria", 14, Str. Pictor Lichian, Bucarest.
Եգիպտոս՝ Գ. Միմթարեան, Խմբադր. «Յուսարեր»-ի,
B. P. 868, Le Caire.
Երովրիա՝ Յ. Պուրապեան, Hirna.
Պաղեստին, Վահան Կէտիկեան. Haret-el-Nasara. Jerusalem.
Սիւրիա՝ Յ. Միմնի, B. P. 208, Alep.
,, Հ. Ապաձեան, B. P. 870, Beyrouth.
,, Ս. Պոյաձեան, B. P. 321, Damas.
Իրաք՝ Մ. Սոսուն, South Gate Badaveen, 29-1, Bagdad.
Պարսկաստան՝ Խ. Մելքոնմեան, Թաւրիզ:
,, Յ. Մուրադեան (Խուզիսաստի լնդՀ. զործակալ),
Սադամ, P. O. Box 22.
,, Վ. Յովհաննիսեան, Թէհրան,
Taint. "Havar", Khi:bane Nadery, Tehéran.
Հիւս. Ամերիկայի ընդի. գործակալ՝ Յ. Կորայրան,
K. Gopoian, 359 W. 28th St. New York, N. Y., (U. S. A.)
Հարան. Ամերիկա՝ «Արմենիա», Canning 1087, Buenos-Aires.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԵՐ

- Ամերիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս, Խոտիա՝
տարեկան 65 ֆրանֆ
Ֆրանսա եւ այլ երկիրներ , , 50 ֆրանֆ
Ռումանիա, Բուլգարիա, Յունաստան Սիւրիա, եւ
Պարսկաստան , , 40 ֆրանֆ
Հայոց՝ Բամակների, դրամի, յօդածների եւ ուրիշ ամէն
տեսակ առաքումների համար -



Imp. ARTISTIQUE. — 42. Rue de la Jonquière, PARIS (17^e)